

ԱՇԽԱՐՀԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՆԱՅՔ

Բացատրություն, թե ինչպես մահմեդական ճշմարիտ
հավատացյալ կանայք, համարվում են լավագույնը

[Հայերեն - Armenian – أرميني]



Կազմված.

Աբու Աբդուր Բահմեն Ֆարուք Փոստ



Թարգմանությունը:

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող հանձնաժողով:

Աբու Առամ

أفضل امرأة على وجه الأرض



فاروق بوست



ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& أنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

Ամենաողորմած Ալլահի, Գթության Պարգևողի անունով



Ամբողջ փառքը Ալլահին, Աստծոն, ամենի Արարչին, Միակին, ով համաչափեց, ձևավորեց ամենը կատարյալ ձևով և տեսքով, Միակը, ով արարեց ամենը գույգերով և արարեց յուրաքանչյուրի և ամենի համար իր գույգը: Ալլահը իր գերագույն իմաստությամբ և գիտելիքով արարեց էակ, որի մեջ տղամարդը գտնում է իր հանգստությունը, խաղաղությունը և հաճույքը, էակ, որը բարձրացնում է ազգերը, էակ, որին պետք է պահպանել և պաշտպանել ինչպես թանկարժեք գոհար:

Այս ամենաթանկարժեք էակը կինն է:

Դժբախտաբար քաղաքակրթության թշնամիները և նրանք, ովքեր իրենց սրտերում ախտ ունեն, ցանկանում են փոխակերպել կնոջը շուկայական ցանկալի և սատանայական գայթակղության էժանագին ապրանքի: Նրանք ցանկանում են բացահայտել նրա գեղեցկությունը իրենց աչքերի առջև, որպեսզի կարողանան վայելել նրա գեղեցկությունը և ամենավատը այն է, որ անմիջապես նրա մասնակցությամբ: Այս պատճառով, մենք տեսնում ենք հեռուստատեսային գովազդները և սանձարձակ ամսագրերը, որոնք որպես միջոց շահագործում են համարյա հազնված երիտասարդ կանանց, տարածելու և վաճառելու իրենց հրատարակումները կամ ապրանքները:

Բացի այդ, այս վտանգավոր զարգացումների պատճառով, կինը հեռացել է իր տան բնածին դերից և նա դիտվում է որպես ապրանքային կամ շուկայական գործիք, որին շահարկում են մեքենաներ, գարեջուր, ծխախոտ կամ որևէ և ամեն երևակայական բաների համար: Ամեն դեպքում,

Իսլամը բարձրացնում է կնոջ կարգավիճակը, որպեսզի պաշտպանի նրան վնասից, որը կարող է պատճառել այս իրավիճակը: Շնորհիվ այս և այլ ուրիշ շատ պատճառների, մենք հարմար ենք գտնում քննարկել կնոջ կարգավիճակը Իսլամում:

Այս կարևոր թեմա է, որի շուրջ շատերը չունեն ճիշտ գիտելիք և ընկալում: Խնդրի կամ որոշակի առարկայի ճշմարտությունը իմանալու առավել արդյունավետ ուղղին տարբեր դիտարկումների և հավատքների համադրությունն է: Որպես այդպիսին, մինչ թեման ամփոփելը, մենք ցանկանում ենք հակիրճ լույս սփռել ոչ մահմեդական կնոջ կարգավիճակին Իսլամից առաջ և նույնիսկ Իսլամից հետո, մյուս համաշխարհային կրոնների շրջանակներում, հաշվի առնելով նրանց վերաբերմունքը, իրավունքները և ստացած հարգանքը: Ոչ մահմեդական կնոջ կարգավիճակը ուսումնասիրելուց հետո, թե ինչպես են նրանց հասարակարգերը վերաբերում և արդյոք նրանց իրավունքները պաշտպանվում են, մենք կարող ենք ավելի լավ հասկանալ մահմեդական, առավելապես մահմեդական կին լինելու օրհնությունը և առաքինությունը: Հուսանք, որ այս կօգնի ավելի լավ հասկանալ Իսլամը, պարզել ցանկացած սխալ պատկերացում, որը մարդ կարող է ունենալ և հնարավորություն կտա գիտակցելու, որ Իսլամի կանոնները և կարգերը տեղին են, որպեսզի նպաստեն նրան, ինչ օգտակար է մարդկությանը և արգելեն և պաշտպանեն նրանից, ինչը վնաս է:

Եվ ամբողջ հաջողությունը Ալլահի հետ է:

ՄԱՍ 1

ՈՉ ՄԱՀՄԵԴԻԱԿԱՆ ԿՆՈՋ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Մենք սկսում ենք մեր քննարկումը մի բանից, որին մենք ինչ որ կերպ ծանոթ ենք, Ադամի և Եվայի պատմությունից: Իրականում տեղի ունեցածի սխալ է.

Ադամի և Եվայի արարման Հրեա-քրիստոնեական գաղափարը մանրամասնորեն տրված է **Ծննդոց 2:4-3:24** – ում: Աստված երկուսին էլ արգելել է ուտել արգելված ծառի պտուղները: Օձը խաբեց Եվային, համտեսել դրանք և Եվան իր հերթին, խաբեց Ադամին համտեսել իր հետ: Ըստ այս տեքստերի, հաշվի առնելով իրենց բնօրինակ ձևը, նրանք փոփոխվել են: Երբ Աստված սաստեց Ադամին իր արարքի համար, նա ամբողջ մեղավորությունը դրեց Եվայի վրա - « Կին, դու այս արել ես ինձ հետ – նա մի պտուղ տվեց ինձ ծառից և ես կերա այն:» Ուստի, Աստված սասց Եվային. «**Ես կբազմացնեմ քո ծննդաբերական ցավերը, ցավով դու ծնունդ կտաս զավակներին: Քո ամուսնու ցանկությունը կլինի քեզ համար և նա կիշխի քեզ:**» Ադամին, Նա սասց. « **Քանի որ դու լսեցիր քո կնոջը և կերար ծառից... քո պատճառով անիծված է երկիրը, տանջանքով կհայթայթես քո սնունդը, քո կյանքի բոլոր օրերը....**» (Ծննդոց 2:4-3:24)

Հրեա-Քրիստոնեական ավանդույթի մեջ Աստվածաշնչյան Եվայի գայթակղողի կերպարը հանգեցրել է կնոջ չափազանց բացասական ազդեցության: Համարվում է, որ բոլոր կանայք ժառանգել են իրենց մորից, Աստվածաշնչյան Եվայից, և նրա մեղքը և նրա խորամանկությունը: Ուստի, նրանք բոլորը անվստահելի, բարոյապես նվազ և չար են: Դաշտանը, հղիությունը և ծննդաբերությունը

համարվում էր ճիշտ պատիժ անիծված իգական սեռի հավերժ մեղավորության համար: Որպեսզի գնահատենք, թե որքան բացասական ազդեցություն է ունեցել Աստվածաշնչյան Եվան իր բոլոր իգական սեռի ժառանգորդների վրա, մենք պետք է դիտենք բոլոր ժամանակների որոշ ամենակարևոր Հրեա և Քրիստոնյա գրվածքները: Եկեք սկսենք Հին Կտակարանից և դիտենք հատվածներ, ինչը կոչվում է Իմաստուն Գրականություն: Այնտեղ մենք գտնում ենք.

«Ես մահից ավելի դառն եմ գտել կնոջը, ով թակարդ է, ում սիրտը թակարդ է և ում ձեռքերը շղթաներ են: Տղամարդը ով գոհացնում է Աստծուն, կխուսափի նրանից, սակայն իգական մեղսավորը կթակարդի... քանի որ ես դեռ փնտրում էի, սակայն չէի գտնում, ես գտա մեկ շիտակ տղամարդ հազարավորների միջից, սակայն նրանց բոլորի միջից ոչ մի շիտակ կին:» (Նոր Միջագային Տարբերակ, Ժողովող 7:26-28)

« Սակայն ի վերջո, նա դառն է ինչպես ճշինդրը, սուր, ինչպես երկսայր սուրը:» (Նոր Միջագային Տարբերակ, Առակներ 6:24)

Ի շնորհիվ Եվայի գայթակղող կերպարի, որը, ըստ Ծննդոցի փոփոխվել է, կրկին և կրկին բոլոր կանայք մատնվում են զրպարտության: Ամփոփելով, կարելի է ասել, որ կանանց մասին Հրեա-Քրիստոնեական գաղափարը, թունավորվել է Եվայի և նրա իգական սեռի ժառանգների մեղսավոր բնույթի հավատքի շնորհիվ, որը բոլորվին կեղծ է:

Կաթոլիկ Աստվածաշնչի մեջ զետեղված Հրեական գրականության մեկ այլ հատվածում, մենք ընթերցում ենք.

«Եվ ցանկացած չարություն, բացառությամբ կնոջ չարության, և ցանկացած վիշտ, բացառությամբ նրանց տրված վշտից, որը աստուծ է նրան. և ցանկացած վրեժ, բացառությամբ թշնամիների վրեժի: Ոչ մի գլուխ արժանի չէ, քան օձի գլուխը. և գոյություն չունի առավել զայրույթ, քան կնոջ զայրույթը: Ավելի ընդունելի կլինի բնակվել առյուծի կամ վիշապի հետ, քան բնակվել չար կնոջ հետ: Կնոջ չարությունը փոխում է նրա դեմքը և նա մտայնում է իր դեմքի արտահայտությունը, ինչպես արջ և ցույց է տալիս որպես քուղձ: Հարևանների մեջ, Նրա ամուսինը հառաչեց և լսելով, նա մի փոքր աղմկեց:

Ամբողջ քենը նեցուկ է կնոջ քենին, թող բոլոր մեղսագործները ընկնեն նրան: Ինչպես ավագոտ ուղին է որպես բարձունք տարեցի համար, այդպես էլ կինն է լեզվով լի, հանգիստ տղամարդու համար: Մի նայեք կնոջ գեղեցկությանը և մի ցանկացեք կնոջը գեղեցկության համար: Կնոջ զայրույթը և հանդգնությունը և շփոթմունքը մեծ է: Կինը, եթե նա ունի գերիշխանություն, իր ամուսնու հակառակն է: Չար կինը կարճում է քաջությունը և ծանր դեմքի արտահայտություն է և վիրավոր սիրտ է տալիս: Տկար ձեռքեր և մասնատված ծնկեր, կինը որը չի երջանկացրել իր ամուսնուն: Կնոջից է գալիս մեղքի սկիզբը և նրա շնորհիվ մենք բոլորս կմահանանք:» « Ոչ մի չարություն չի հասնում կնոջ չարությանը... Մեղքը սկսում է կնոջով և ի շնորհիվ նրա մենք բոլորս պետք է մահանանք:» (Յովհաննու 25:19-33)

Նկատեք, Նոր Կտակարանի միջի Սուրբ Պողոսի խիստ բնույթը, որը նա ինքն է գրել. «Կինը պետք է սովորի հանգստությամբ և լիարժեք ենթարկվածությամբ: Ես չեմ թույլատրում կնոջը սովորեցնել կամ իշխանություն

ունենալ տղամարդու վրա. Նա պետք է լուռ լինի: Քանի որ Ադամին արարել է առաջինը, քան Եվային: Եվ Ադամը չէր, որ խաբվել է, կինն է խաբվել և դարձել մեղսավոր:» (Նոր Միջազգային Տարբերակ, Տիմոթեոս Ա 2:11-14)

Սուրբ Ավգուստինոսը հավատարիմ էր իր նախորդների ժառանգությանը; նա գրում է իր ընկեր Լեոթոսին. «Որն է տարբերությունը, արդյոք այն կնոջ թե մոր մեջ է, նա դեռ Եվա է, գայթակող, որ մենք պետք է զգուշանանք ցանկացած կնոջից..... Ես չեմ տեսնում, թե ինչ շահ կարող է կինը բերել տղամարդուն, եթե մենք բացառենք երեխա ծնելու դերը:» (Աստվածաշնչյան Քարոզ Կնոջը, էջ. 122)

Դարեր անց, Սուրբ Թոմաս Աքինսարը նույնպես համարեց կնոջը թերի: «Ինչ վերաբերում է անհատական բնույթին, կինը թերի է և սխալ բեղմնավորված, քանի որ տղամարդու սերմի ակտիվ նպատակն է արտադրել արական սեռի կատարյալ նմանություն, մինչ դեռ կնոջ արտադրությունը գալիս է գործուն ուժի արատից կամ որոշ նյութական դժկամությունից կամ նույնիսկ որոշ արտաքին ազդեցությունից:» (Սուլմա Թեոլոգիկա 92)

Վերջապես նորարար և բարեփոխիչ Մարթին Լութերը կնոջից ոչ մի օգուտ չէր կարող տեսնել, բացառությամբ լույս աշխարհ բերելու այնքան շատ երեխաներ, որքան հնարավոր է, անկախ հետևանքներից: «Եթե նրանք հոգնեն կամ նույնիսկ մահանան, կարևոր չէ: Թող նրանք մահանան ծննդաբերությունից, դրա համար են նրանք այնտեղ:» (Մահ և Մահանալ)

Ռաբբի Էփշտեյնին տրվել է հետևյալ հարցը. «Ինչու՞ են ընտանիքի իգական սեռի անդամները ընտանեկան ունեցվածքի մաս համարվում:» Նա պատասխանեց.

«Նրանք պատկանում են հորը ամուսնությունից առաջ և ամուսնուն ամուսնությունից հետո:» (Էփշտեյն. Էջ. 121)

Հրեա ռաբբիները կազմել են ինն անեծքի ցուցակ, որոնք որպես Անկման արդյունք, ազդել են կնոջ վրա. «Կնոջը Նա տվեց ինն անեծք և մահ. Դաշտանային արյունահոսության և կուսության արյունահոսության բեռը, հղիության և ծննդաբերության բեռը, ինչպես նաև երեխաների դաստիարակման բեռը, նրա գլուխը ծածկված է, ինչպես մեկը, ով սգում է, նա ծակում է իր ականջը, ինչպես մտական ստրուկ կամ ստրկուհի, ով ծառայում է իր տիրոջը, նա չի համարվում վկա և ամենից հետո մահն է:» Լեոնարդ Ջ. Սուիդլեր, Կինը Հուդայականության մեջ, Կնոջ կարգավիճակը ձևավորված Հուդայականության մեջ. (Մեթուիսոն Ն. Ջ Սքեյրեքրո Փրես 1976, էջ. 115)

Նույնիսկ մինչ մեր օրերը, ուղղափառ Հրեա տղամարդիկ իրենց առավոտյան աղոթքի մեջ ընթերցում են. «Օրինյալ լինի տիեզերքի Աստված Արքան, որ ինձ որպես կին չի արարել:» Կանայք, հակառակը, ամեն առավոտ, երախտապարտ են Աստծոն, որ «արարել էք Ձեր կամքով:» Մեկ այլ աղոթք, որը կարելի է գտնել շատ հրեական աղոթագրքերի մեջ, հետևյալն է. « Փառք Աստծոն, որ Նա ինձ չի արարել որպես հեթանոս: Փառք Աստծոն, որ Նա ինձ չի արարել որպես կին: Փառք Աստծոն, որ Նա ինձ չի արարել որպես հիմար:» (Թենա Քենդաթ. «Ուղղափառ Երիտասարդների Հիշողությունները» Սուսաննա Հեչելի, լինելով Հրեա Ֆեմինիստ, Նյու Յորք . Սքոչեն Գրքեր 1983 էջ. 96-97 և Սուայդլեր էջ. 80 -81)

Որոշ Հրեական աղանդներ գործում են այնպես, ինչպես ասում է Թորայի տարբերակը, որը իր նախնական ձևից աղավաղվել է: Այն ասում է վերցրեք

կանանց, պատերազմական գերիներին ձեր տները, այնուհետ սափրեք նրանց գլուխները, այնուհետ ունեցեք սեռական հարաբերություն: Երկրորդ Օրենք 21:10-14 ասում է. «Երբ դուք գնում եք պատերազմելու ընդդեմ ձեր թշնամիների և Տերը, ձեր Աստվածը տալիս է նրանց ձեր ձեռքը, և դուք գերեվարում եք նրանց, և գերիների մեջ դուք տեսնում եք գեղեցիկ կանանց և ցանկանում եք նրանց, և վերցնում եք որպես կին, ապա դուք պետք է բերեք նրա տունը ձեր տուն և նա պետք է սափրի իր գլուխը և կտրի եղունգները և նա պետք է հանի գերու իր հագուստը և մնա ձեր տանը և սգա իր հորը և մորը մեկ ամիս և դրանից հետո դուք կարող եք մերձենալ նրան և սեռական հարաբերություն ունենալ և նա կարող է լինել ձեր կինը:

Եվ եթե դուք չեք ցանկանում նրան, դուք պետք է ազատ արձակեք նրան, դուք չպետք է վաճառեք նրան գումարի դիմաց, դուք չպետք է վերաբերեք նրան որպես ստրուկ, որովհետև դուք « ոտնահարել եք » նրան:» (Նոր Միջազգային Տարբերակ, Երկրորդ Օրենք 21:10-14)

Արիստոտելի աշխատությունից նույնպես հայտնի է, որ նա որակում է կնոջը որպես թերի տղամարդ և Յան Մաքլինը վիճարկում է, թե արդյոք կանայք հոգի ունեն: Այս բանավեճը իր գագաթակետին հասավ 1595 թվականին, Ալբրիդալիուսի գրքի հրատարակումից հետո, որը վիճում է, որ կանայք նույնիսկ մարդկային արարած չեն: Առանց զարմանքի, նույն աշխատությունը նույնպես կապում է կանանց սատանաների և շների հետ:

Փաստորեն, իզական սեռի նկատմամբ Աստվածաշնչյան և Ղուրանական վերաբերմունքի տարբերությունը սկսվել է մինչ նրանց ծնունդը: Օրինակ, Աստվածաշունչը ասում է, որ այն մոր, ով ծնել է աղջիկ երեխա, անմաքրության

ժամանակաշրջանը երկու անգամ ավելի երկար է, քան տղա երեխա ունեցողինը (Նոր Միջագային Տարբերակ Անխատացիներ 12:1-5)։

«Տերը ասում է Մովսեսին. «Ասա իսրայելցիներին.» կինը, ով հղիացել է և ծնել է տղա, ծիսականորեն անմաքուր կհամարվի յոթ օր, այնպես ինչպես նա անմաքուր է դաշտանի ժամանակաշրջանում: Ութերորդ օրը, տղային պետք է թլպատել: Այնուհետ կինը պետք սպասի երեսուներեք օր, որպեսզի մաքրվի արյունահոսությունից; Նա չպետք է որևէ սուրբ բան ձեռք տա, կամ գնա սրբավայր, մինչ չավարտի մաքրության օրերը: Եթե նա աղջիկ երեխա ունենա, երկու շաբաթ կինը կլինի անմաքուր, ինչպես իր դաշտանի ժամանակաշրջանի ժամանակ: Այնուհետ, նա պետք սպասի վաթսունվեց օր, որպեսզի մաքրվի իր արյունահոսությունից:»

Կաթոլիկ Աստվածաշունչը հստակ ասում է, որ

«Աղջիկ երեխայի ծնունդը կորուստ է:» (Դուայ–Ռեյմսի Կաթոլիկ Աստվածաշունչ, Յովհաննու 22:3)

Հակառակ այս շոկային իրավիճակի, տղաները ստանում են հատուկ գովք.

«Տղամարդը, ով կրթում է իր որդուն, կլինի իր թշնամիների նախանձի առարկան:» (Դուայ –Ռեյմսի Կաթոլիկ Աստվածաշունչ, Յովհաննու 30:3)

Հրեա Ռաբբիները հրեա տղամարդկանց պարտքն են համարել զավակներ ունենալ, սերունդը տարածելու: Միևնույն ժամանակ, նրանք չեն թաքցնում իրենց ակնհայտ գերադասությունը արական սեռի երեխաների նկատմամբ. «Բարիք է նրանց համար, ում

երեխաները արական սեռի են, սակայն վատ նրանց համար, ումը իգական սեռի են.» «Տղայի ծնունդով բոլորը ուրախ են ... աղջկա ծնունդով, բոլորը տխուր,» և «Երբ տղա է աշխարհ գալիս, խաղաղություն է գալիս աշխարհ... Երբ աղջիկ է գալիս, ոչինչ չի գալիս:» (Մուհդլեր էջ.140)

«Արդյո՞ք քո դուստրը համառ է: Ուշադիր եղիր, որ նա չդարձնի քեզ քո թշնամիների ծիծաղի առարկա, գրույց քաղաքի մեջ, ընդհանուր բամբասանքի առարկա և դնի քեզ հասարակական ամոթանքի մեջ:» (Դուայ-Ռեյմս Կաթոլիկ Աստվածաշունչ, Յովհաննու 42:11)

«Պահիր համառ դստերը խիստ հսկողության տակ, այլապես, նա կչարաշահի ներողամտությունը, որը ստանում է: Ուշադիր եղիր նրա անամոթ աչքին, մի զարմացիր, եթե նա խայտառակի քեզ:» (Դուայ –Ռեյմս Կաթոլիկ Աստվածաշունչ, Յովհաննու 26:10-11)

Կաթոլիկ Եկեղեցու դիրքը, ինչպես նշել է «Արևմուտքի և Արևելքի ամուսնությունը, էջ. 80-81. «Դժվար կլինի որևէ այլ տեղ գտնել հղումների ավելի վատ հավաքածու, որոնք վերաբերում են իգական սեռին, քան այն ինչ ապահովել են վաղ Եկեղեցու Հայրերը: Լեքին, հայտնի պատմաբանը, խոսում է այսպիսի խիստ խրախուսումների մասին, որոնք ձևավորում են Հայրերի գրվածքների այսքան տեսանելի և հսկայական մասը ... կնոջը ներկայացնում են որպես դժոխքի դուռ, մարդկային բոլոր հիվանդությունների մայր: Նա պետք է ամոթ զգա այն մտքից, որ նա կին է: Նա պետք է ապրի շարունակական ամոթ, հաշվի առնելով անեծքները, որը նա է բերել աշխարհ: Նա պետք է ամաչի իր հագուստից, քանի որ այն նրա անկման հիշողությունն է: Նա առանձնահատուկ պետք է ամաչի իր գեղեցկությունից, քանի որ այն սատանայի ամենահզոր գործիքն է: Կանանց

վրա հարձակումների ամենավարակիչը Տերտուլիանոսի խոսքերն են. « Արդյո՞ք դուք գիտեք, որ ձեզանից յուրաքանչյուրը Եվա է: Ձեր սեռի Աստծո դատապարտումը ապրում է այս դարերում, մեղքը պետք է ապրի ևս: Դուք սատանայի դարպասն եք, դուք այդ արգելված ծառի կնիք բացողն եք, դուք սատանայական օրենքի առաջին դասալիքներն եք, դուք նա եք, ով համոզեց նրան, ում դեմ սատանան բավական արի չէր հարձակվելու: » (Կնոջ Չարդարանքը Գիրք 1, հատոր 1):

Եկեղեցին ոչ միայն հաստատեց կնոջ ստորադաս կարգավիճակը, այլև գրկեց նրան օրինական իրավունքներից, որը նա մինչ այդ վայելում էր:

Հինդուական գրերում, լավ կնոջ նկարագրությունը հետևյալն է. «Կինը, ում միտքը, խոսքը և մարմինը հպատակվում են, այս աշխարհում բարձր համբավ է ձեռք բերում և հաջորդ կյանքում, իր ամուսնու հետ նույն բնակությունն է ունենում:» (Մաքե, Դավիթ և Վերա, Ամուսնություն Արևմուտք և Արևելք. Դոլֆին Գրքրե, Դուբլդայ և ընկ. 1960)

Աթենքում, կանայք ավելի լավ չէին քան հնդիկ կամ հռոմեական կանայք:

«Աթենացի կանայք միշտ փոքրամասնությունն էին, արական սեռի առարկա իրենց հորը, իրենց եղբայրներին, կամ արական սեռի իրենց որևէ ազգականի:» (Ալլեն. Ի. Ա Քաղաքակրթության պատմությունը, հատոր 3, էջ.444)

Պատմաբանը նկարագրում է հռոմեացի կնոջը որպես. «մանուկ, փոքրամասնություն, ինամակյալ, անձ, ով չի կարող գործել ըստ իր անհատական ճաշակի, անձ, ով

անընդհատ գտնվում է իր ամուսնու հսկողության և խնամակալության տակ:» (Ալլեն, Ի, Ա Քաղաքակրթության Պատմությունը, հատոր 3 էջ. 443)

Բրիտանիկա Հանրագիտարանի մեջ գտնում ենք Հռոմեական քաղաքակրթության կնոջ օրինական կարգավիճակի ամփոփումը.

«Ըստ Հռոմեական Օրենքի կինը, ինչպես պատմական ժամանակներում, ամբողջովին կախյալ էր: Եթե ամուսնացած է, նա և նրա ունեցվածքը անցնում է ամուսնու իշխանության տակ... կինը իր ամուսնու ձեռք բերված գույքն է և ստրուկը, որը միայն տղամարդու շահի համար էր: Կինը չէր կարող գործել որևէ հասարակական կամ քաղաքացիական գրասենյակում, չէր կարող լինել վկա, երաշխավոր, ուսուցիչ կամ խնամակալ, նա չէր կարող որդեգրել կամ որդեգրվել, կամ համաձայնագիր կամ կտակ գրել:» (Բրիտանիկա Հանրագիտարան 11-րդ հրատարակչություն, 1911, հատոր 28, էջ. 782)

Ըստ Անգլիական Հասարակական Օրենքի. «ամուսնությունից հետո, կնոջը պատկանող ամբողջ ունեցվածքը, անցնում է նրա ամուսնուն» (Ամերիկյան Հանրագրտարան, հատոր 29, էջ. 108): Միգուցե սա է պատճառը, որ ամուսնությունից հետո կինը վերցնում է ամուսնու ազգանունը:

Միայն 19-րդ դարում իրավիճակը սկսեց բարելավվել: «1870, փոփոխված 1882 և 1887 թվականների Ամուսնացած կանանց Ունեցվածքի մի շարք գործողությունների շնորհիվ, ամուսնացած կանայք իրավունք ստացան ունենալ սեփականություն և պայմանագրեր կնքել չամուսնացածների, այրիների և ամուսնալուծվածների

հետ:» (Բրիտանիկա Հանրագիտարան, 1968, հատոր 23, էջ. 624)

Իսլամից առաջ, նույնիսկ արաբական հասարակության մեջ, կինը ծանր պայմաններում էր ապրում: Արաբները սովորաբար ատելություն էին զգում, երբ աղջիկ էր ծնվում: Աստված, Ամենաբարձրյալ Ալլահը նկարագրում է Ղուրանում.

«Եվ, երբ նրանցից մեկին լուր է գալիս իգական սեռի ծննդյան մասին, նրա դեմքը մթնում է և նա լցվում է ներքին վշտով: Նա թաքցնում է իրեն մարդկանցից, այն չարիքի պատճառով, որը նրան տեղեկացրել են: Արդյո՞ք նա պետք պահի նրան անպատվությամբ, թե թաղի հողի մեջ: Իրոք, չարիք է նրանց որոշումը:» (Ղուրան 16:58-59)

Արաբների մեջ կային այնպիսիները, ովքեր թաղում էին իրենց դուստրերին, երբ նա դեռ կենդանի էր, մինչև նա չէր մահանում հողի տակ: Կային նաև այնպիսիները, ովքեր թույլ էին տալիս նրանց ապրել, որպեսզի միայն դեմ առ դեմ կանգնեն ստորացման և անկման կյանքին:

Եվ Ալլահը, Ամենախմաստունը, խիստորեն չէր խրախուսում, ինչպես Նա ասում է Ղուրանում.

«Եվ երբ կենդանի թաղված իգական սեռի նորածնին, (ինչպես հեթանոս արաբները սովոր էին անել,) հարցնում են, թե ո՞ր մեղքի համար են նրան սպանել:» (81:8-9)

Այս վերաբերում է նորածին աղջկան, ում կենդանի թաղել են և մահվան են դատապարտել հողի տակ: Եթե նրան խնայում էին կենդանի թաղելուց և թույլատրում էին ապրել, ապա նա իրոք ապրում էր քայքայված կյանք: Դրա պատճառն էր, որ նրան չէր թույլատրվում ժառանգել ազգականի ունեցվածքի որևէ բաժին, անկախ նրանից, թե

որքան գումար նա ուներ և անկախ նրանից թե նա, կինը տառապում էր աղքատությունից և կարիքից: Պատճառը միայն տղամարդկանց ժառանգությունն էր, որը բացառում էր կանանց: Փաստորեն, կինը բաժանվում է որպես իր ամուսնու ունեցվածքի գույք, ինչպես նրա գումարը կբաժանվի որպես ժառանգություն: Նույնպես, արաբների մեջ սովորույթ էր այն, որ որոշակի ուտեստներ անհրաժեշտ են տղամարդկանց և կանանց արգելվում էր ուտել դրանցից, ինչպես Ալլահը մեզ ասում է Ղուրանի մեջ.

«Եվ նրանք, հեթանոս արաբները ասում են. Ինչ գոյություն ունի այսպիսի կամ այնպիսի եղջերավոր անասունի որովայնի մեջ, միայն մեր տղամարդկանց համար է և արգելված է մեր իգական սեռի ներկայացուցիչներին, աղջիկներին և կանանց, սակայն, եթե այն մեռած ծնվի, նրանք բոլորը բաժին կունենան.....» (6:139)

Այս սովորության արդյունք էր, որ գոյություն ունեին շատ կանայք, ովքեր ապրում էին մեկ տղամարդու հետ, քանի որ գոյություն չունեին կանանց սահմանափակ քանակ: Նրանք չէին ցուցադրում որևէ մտահոգություն թե արդյունքում, ինչ է կատարվում կանանց հետ և ինչպես են նրանք ապրում ծանր, անարդար և անհարմարավետ պայմաններում:

Ինչպես դուք տեսնում եք, կանանց վերաբերվում էին որպես կենդանիների: Նրանց գնում և վաճառում էին: Նրանք ամուսնության խնդրում չունեին ոչ մի ընտրություն. նրանք ստիպված էին ընդունել բարձրագույն գնորդին: Նրանք երբեք չէին ժառանգում, նույնիսկ իրենց մոտիկ ազգականներից: Փաստորեն, կինը ինքն էր դառնում բաժանելու առարկա, ինչպես անհատի ունեցվածքի ժառանգության իր: Կանայք համարվում էին տղամարդու ունեցվածք և պատկանելություն: Նույնիսկ, այսպես կոչված

Ժամանակակից Եվրոպական երկրներում, նրանք չէին համարվում մարդկային արարած:Նույնիսկ կրոնական խնդիրներում, տղամարդկանց կողքին, կանանց չէր տրվում կարգավիճակ, քանի որ նրանց համարում էին անարժան աղոթելու, կամ որպես մարդկային էակ, հարմար չէին համարում:

Ընդհանուր առմամբ, ընդունելի էր թույլատրել աղջիկներին կենդանի թաղել և այս անմարդկային,անսիրտ արարքը համարվում էր մարդկային և հարգալից:Բացի այդ,ընդհանուր առմամբ ընդունելի էր,որ եթե կնոջը սպանում էին, ցանկացած պարագայում այդ չէր կարող պատժվել: Մեղավորին ոչ կարող էին սպանել, ոչ էլ ստիպել վճարել արյան գինը:

Փաստորեն, 586 թվականից հետո, կնոջը տրվել է որոշ զիջումներ և շատ վեճերից, բանավեճերից և պնդումներից հետո, անցել է բանաձև, որը հաստատել է, որ կինը մարդկային արարած է: Ամեն դեպքում այս բանաձևը սահմանել է, որ նա արարվել և ծնվել է միայն տղամարդուն ծառայելու համար:1856 թվականից հետո, Բրիտանիայում կանանց չէին թույլատրում ունենալ իրենց վաստակածը և նրանք ժառաբգության իրավունք չունեին: 1857 թվականին ամուսնալուծված կանանց տրվեց նույնպիսի իրավունք, ինչպիսիք ունեին չամուսնացած կանայք,սակայն ամուսնացած կանայք ստիպված էին սպասել մինչ 1893 թվականը, որպեսզի ստանան նույն իրավունքները: Բացի այդ, ըստ Անգլիական Օրենքի, մինչ 1805 թվականը, տղամարդուն թույլատրվում էր վաճառել կանանց և նրանք նույնիսկ ունեին որոշակի գին, որը կես շիլինգն էր:

**Ո՞ՐՆ ԷՐ ՀՐԵԱ- ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՆԿԱՏՄԱՍԲ, ՈՎ
ՓՈՐՉՈՒՄ ԷՐ ՍՈՎՈՐԵԼ ԻՐ ԿՐՈՆԸ.**

Հուդդայականության սիրտը թորան էր: Ամեն դեպքում ըստ Թալմութի, որը թորայի բացատրությունն է. «կանայք ազատվում են թորայի ուսումնասիրությունից» (Թալմութ, թորա 1:01)

Որոշ հրեա ռաբիններ խստորեն հայտնում են. «Ավելի լավ է թորայի բառերը կրակի գոհ դառնան, քան հաղորդվեն կանանց», և «Նա, ով իր դասերը թորա է սովորեցնում, կարծես սովորեցնում է լկտիություն:» (Դենիզ Լ, Քարմոդի, «Հուդդայականություն» Արվինդ Շարմայում, էջ. 197)

Սուրբ Պողոսի վերաբերմունքը Նոր Կտակարանում ավելի լավը չէ.

«Ինչպես սրբերի բոլոր ժողովների ընթացքում, եկեղեցիներում կանայք պետք լռություն պահպանեն: Նրանց չի թույլատրվում խոսել, սակայն ինչպես օրենքն է ասում, պետք է հնազանդ լինեն: Եթե նրանք որևէ բան են ցանկանում իմանալ, ապա պետք հարցնեն իրենց ամուսնուն տանը, քանի որ անպարկեշտ է կնոջը, եկեղեցում խոսելը:» (Նոր Միջազգային Տարբերակ, Կորնթացիներ Ա 14:34:35)

Ինչպե՞ս կարող է կինը սովորել, եթե նրան չի թույլատրվում խոսել:

Ինչպե՞ս կարող է կինը մտավոր աճել, եթե նա պարտավոր է լիակատար հնազանդվել:

Ո՞ՐՆ Է ՍՈՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀՐԵԱ- ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՏԵՍԱՆԱԿՅՈՒՆԻՑ

Ի՞նչ ենք մենք գտնում Նոր Կտակարանում: Արդյո՞ք այն կոչում է պատվել մորը: Հակառակը, տպավորություն է ստեղծվում, որ Նոր Կտակարանը մոր հանդեպ բարի վերաբերմունքը համարում է Աստծո ուղղու խոչընդոտ: Ըստ Նոր Կտակարանի, անձը չի կարող լինել լավ քրիստոնյա, ով արժանի է Քրիստոսի աշակերտի կոչմանը, եթե նա չատի իր մորը: Այն վերագրվում է Հիսուսին, ով ասել է. « Եթե որևէ մեկը գալիս է ինձ մոտ և չի ասում իր հորը և մորը, իր կնոջը և երեխաներին, իր եղբայրներին և քույրերին—այո, նույնիսկ իր սեփական կյանքը – նա չի կարող աշակերտ լինել» (Նոր Միջազգային Տարբերակ, Ղուկաս 14:26)

- Հնարավոր չէ, որ Հիսուսը ասեր այդ: Բոլորը եկեղեցու հայրերի և նրանց աշխատանքներն են, ովքեր մասնակցել են Նոր Կտակարանի փոփոխմանը և հեղինակմանը:

ԻՆՉ Է ԱՍՎՈՒՄ ԴԱՇՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Դաշտանի շրջանում գտնվող կնոջը վերաբերող հրեական օրենքը և կանոնակարգերը, չափազանց սահմանափակող են: Հին Կտակարանը դաշտանի շրջանում գտնվող կնոջը համարում է անմաքուր: Ավելին, նրա անմաքրությունը նույնպես «վարակում է» մյուսներին: Ցանկացած մեկը, կամ բանը որին նա դիպչում է, մեկ օրով դառնում է անմաքուր.

«Երբ կինը իր ամսական արյան հոսքի մեջ է գտնվում, ամսականի շրջանի անմաքրությունը տևում է յոթ օր և յուրաքանչյուրը, ով դիպչում է նրան, դառնում է անմաքուր մինչ երեկո: Ցանկացած բանի, որին նա պառկում է այդ ժամանակաշրջանում, դառնում է անմաքուր և ամենի վրա, որտեղ նա նստում է, դառնում է անմաքուր: Ով դիպչում է նրա անկողնուն, պետք է լվանա իր հագուստները և լոզանք ընդունի և նա անմաքուր կհամարվի մինչ երեկո: Ով դիպչում է որևէ բանի, որին նա նստել է, պետք է լվա իր հագուստները և լոզանք ընդունի և նա անմաքուր կլինի մինչ երեկո: Լինի դա անկողին, թե որևէ այլ բան որին նա նստում է, երբ որևէ մեկը դիպչի դրան, նա կլինի անմաքուր մինչ երեկո:» (Նոր Միջազգային Տարբերակ, տես. Բոլոր գլուխները, Ղևիտացիներ 15:19-23)

Շնորհիվ իր «վարակիչ» բնույթի, դաշտանի մեջ գտնվող կնոջը երբեմն «աքսորում էին», որպեսզի խուսափեին նրա հետ կապի որևէ հնարավորությունից: Նրան ուղարկում են հատուկ տուն, որը կոչվում էր «անմաքրության տուն», ամբողջ անմաքրության ժամանակաընթացքում: (Սուիդլեր, էջ. 137)

Թալմութը դաշտանի մեջ գտնվող կնոջը համարում է «ճակատագրական» նույնիսկ առանց մարմնական կապի.

«Մեր Ռաբբիները սովորեցնում են.....եթե դաշտանի մեջ գտնվող կինը անցնում է երկու տղամարդկանց միջև, և եթե նրա դաշտանի սկզբնական շրջանն է, նա պետք է սպանի նրանցից մեկին և եթե նրա դաշտանի վերջին օրերն են, նա պետք է վեճի պատճառ դառնա:» (Սադմոս 111ա)

Բացի այդ, դաշտան ունեցող կնոջ ամուսնուն արգելվում էր մտնել սինագոգ, եթե նա անմաքրություն էր գործել նրա հետ, նույնիսկ նրա ոտքերի փոշու միջոցով: Կինը, դուստրը, կամ մայրը ովքեր դաշտանի շրջանում էին, չէին կարող սինագոգում ընթերցել քահանայական օրհնություն: Ջարմանալի չէ, որ շատ հրեա կանայք մինչ օրս դաշտանին վերաբերվում են որպես անեծք: (Իբիդ, էջ.138 և Սալլը Փրայս և Հուդդայականություն և Նոր Կանայք, Նյու Յորք, Բեհրամ Հաուս, 1975 էջ.24)

ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆԸ և ԱՆԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Բոլոր կրոնների մեջ դավաճանությունը մեղք է համարվում: Աստվածաշունչը մահվան է դատապարտում երկուսին էլ և կնոջը և տղամարդուն: (Ղևիտացիներ 20:10) Իսլամը հավասարապես պատժում է երկուսին էլ և կնոջը և տղամարդուն, (Ղուրան 24:2) Աստվածաշունչը ամեն դեպքում, դավաճանություն է համարում ամուսնացած կնոջ արտամուսնական արարքը: (Նոր Միջազգային Տարբերակ, Ղևիտացիներ 20:10, Երկրորդ Օրենք 22:22, Առակներ 6:20-7:27)

«Եթե տղամարդուն քնած են գտնում մեկ այլ տղամարդու կնոջ հետ, երկուսն էլ և տղամարդը, ով քնել է նրա հետ և կինը պետք է մահանան: Դուք պետք է զտեք չարիքը Իսրայելից:» (Նոր Միջազգային Տարբերակ, Երկրորդ Օրենք 22:22)

«Եթե տղամարդը մեկ այլ տղամարդու կնոջ հետ դավաճանում է, երկուսն էլ և կինը և տղամարդը պետք է մահվան դատապարտվեն:» (Նոր Միջազգային Տարբերակ, Ղևիտացիներ 20:10)

Ըստ փոփոխված Աստվածաշնչյան սահմանման, եթե ամուսնացած տղամարդը քնում է չամուսնացած կնոջ հետ, այն չի համարվում մեղք: Ամուսնացած տղամարդը, ով արտամուսնական կապ է ունենում չամուսնացած կնոջ հետ, դավաճան չէ, ինչպես նաև նրա հետ կապված չամուսնացած կինը: Դավաճանությունը տեղի է ունենում միայն երբ տղամարդը, անկախ նրանից ամուսնացած է թե ոչ, կենակցում է ամուսնացած կնոջը: Այս դեպքում, տղամարդը համարվում է դավաճան, նույնիսկ եթե նա ամուսնացած չէ և կինը համարվում է դավաճան: Հակիրճ,

դավաճանությունը ապօրինի սեռական հարաբերություն է ամուսնացած կնոջ հետ: Ամուսնացած տղամարդու արտամուսնական կապը, Աստվածաշունչը հանցանք չի համարում: Ինչու՞ երկակի բարոյական նորմա: Ըստ Հուդայական Հանրագիտարանի, կինը համարվում է ամուսնու սեփականություն և դավաճանությունը հանդիսանում է բռնություն ընդդեմ ամուսնու բացառիկ իրավունքի, կինը, որպես ամուսնու սեփականություն, այսպիսի իրավունք չունի նրա նկատմամբ: Այսինքն, եթե տղամարդը ամուսնացած կնոջ հետ սեռական հարաբերություն է ունենում, նա ոտնահարում է մեկ այլ տղամարդու սեփականությունը և ուստի, նրան պետք է պատժել: (Ջեֆրի Հ. Թոգայ, 'Դավաճանություն,' Հուդայական Հանրագիտարան հատոր 2, 313 Նույնպես տես Ջուդիթ Փլասկով, Կրկին կանգնել Սինայի վրա, Հուդայականությունը Կանանց տեսանկյունից Նյու Յորք, Հարփեր և Ռոու Հրատարակչություն 1990 էջ. 170-177)

Մինչ այժմ Իսրայելում, եթե ամուսնացած տղամարդը տարվում է արտամուսնական կապով ոչ ամուսնացած կնոջ հետ, նրանց երեխաները համարվում են օրինական: Ամեն դեպքում, եթե ամուսնացած կինը կապ է ունենում մեկ այլ տղամարդու հետ, անկախ ամուսնացած կամ ամուրի լինելու փաստին, կնոջ երեխաները համարվում են ապօրինի և նրանց արգելվում է ամուսնանալ մեկ այլ հրեայի հետ, բացառությամբ կրոնափոխների կամ այլ ապօրինիների հետ: Այս արգելքը անցել է երեխաների ժառանգներին տաս սերունդ, մինչ դավաճանությունը ենթադրաբար թուլացել է: (Հազլեթոն, էջ. 41-42)

ԻՆՉ Է, ԵԹԵ ԿԻՆԸ ԱՅՐԻ Է

Շնորհիվ այն փաստի, որ Հին Կտակարանը ժառանգության ոչ մի իրավունք չի ճանաչում, այրիները հրեական բնակչության ամենախոցելի մասն էին: Տղամարդ ազգականները, ովքեր ժառանգում էին մահացած ամուսնու ունեցվածքը, պետք է դրանից առաջարկեյին այրուն: Ամեն դեպքում, այրիները ոչ մի ուղի չունեին ապահովելու այն բաժինը, որը տրվում էր նրանց և ապրում էին ուրիշների գթասրտության հաշվին: Ուստի, հին Իսրայելում, այրիները ամենացածր դասակարգն էին և այրիությունը մեծ անկման խորհրդանիշ էին համարվում: Մակայն, ըստ Աստվածաշնչյան ավանդույթի, այրու խոստումը երկարաձգվել է նույնիսկ այն դեպքում, երբ նա դուրս է մղվել ամուսնու գույք լինելու փաստից: Ըստ Ծննդոց 38-ի, անզավակ այրին պետք է ամուսնանա ամուսնու եղբոր հետ, նույնիսկ, եթե նա արդեն ամուսնացած է, այնպես, որ նա ժառանգներ կարողանա ունենալ իր մահացած եղբոր համար, որպեսզի համոզվի, որ իր եղբոր անունը չի մահանա:

«Այնուհետ Հուդան ասաց Օնանին, «Պառկիր քո եղբոր կնոջ հետ և լրացրու քո պարտքը որպես ամուսնու եղբայր, որպեսզի ժառանգներ տաս քո եղբորը:»» (Նոր Միջազգային Տարբերակ, Ծննդոց 38:8)

Ամուսնության վերաբերյալ այրու կարծիքը հաշվի չէին առնում: Այրուն վերաբերվում էին, որպես մահացած ամուսնու ունեցվածքի մի մաս, որի հիմնական նպատակն է պահպանել ամուսնու բարեկեցությունը: Այս աստվածաշնչյան օրենքը մինչ այժմ գործում է ժամանակակից Իսրայելում: Անզավակ այրին այնտեղ կտակի տեսքով տրվում է ամուսնու եղբորը: (Մուխիլեր, էջ. 137)

Եթե եղբայրը շատ երիտասարդ է ամուսնության համար, այրին պետք է սպասի մինչ նրա մեծանալը: Եթե հանգուցյալ ամուսնու եղբայրը մերժում է ամուսնանալ նրա հետ, ապա նրան ազատում են և նա կարող է ամուսնանալ իր ընտրությամբ: Իսրայելում տարածված երևույթ է, երբ ամուսինների եղբայրները շանտաժի են ենթարկում այրիներին, որպեսզի ձեռք բերեն իրենց ազատությունը:

Մինչ Իսլամը, հեթանոս արաբները նույն կերպ էին գործում: Այրին համարվում էր ամուսնու ունեցվածքի մաս, որին ժառանգում էին արական սեռի ներկայացուցիչները և սովորաբար նրան ամուսնացնում էին հանգուցյալ տղամարդու մեկ այլ կնոջից ծնված ավագ որդու հետ:

Ղուրանը խստորեն դատապարտում և վերացնում է այս ստոր սովորույթը, քանի որ Ալլահն ասում է.

« Եվ կնության մի առեք կանանց, ում կնության էին առել ձեր հայրերը, բացառությամբ այն դեպքի, ինչ արդեն անցել է, իրոք, այն ամոթալի և ամենաատելի և չարի ուղի է: » (4:22)

Այս տարբերակի մեջ Ալլահը արգելում է կնության առնել կանանց, ում հայրը կնության էր առել, որպես հարգանք և պատիվ հայրերի, որպեսզի չթույլատրվի իրենց զավակներին սեռական հարաբերություն ունենալ իրենց կանանց հետ, մահից հետո: Կինը դառնում է անհամապատասխան, ամուսնու որդու համար, անմիջապես, երբ հաղորդվում է ամուսնական պայմանագիրը: Տգիտության ժամանակաշրջանում, մինչ Իսլամը, մարդիկ սովոր էին արգելել այն, ինչ Ալլահն է արգելել, կապված ամուսնության հետ, բացառությամբ խորթ մոր և երկու քույրերի ամուսնությանը, որպես

մրցակից կանանց: Այնուհետ, Ալլահը լուսաբանեց այս տարբերակը:

Ըստ Աստվածաշնչյան սովորույթի, այրիները և ամուսնալուծված կանայք այնքան ցածր էին, որ բարձրաստիճան քահանան չէր կարող կնության առնել այրու, ամուսնալուծվածի կամ մարմնավաճառի.

«Կինը, ում կնության է առնում բարձրագույն քահանան, պետք է կույս լինի: Նա չպետք է կնության առնի այրու, ամուսնալուծվածի, կամ կնոջ, ով պղծված է մարմնավաճառությամբ, այլ միայն կույսի իր իսկ ժողովրդից, այնպես որ նա չի պղծի իր ժառանգներին իր ժողովրդի մեջ:» (Նոր Միջագգային Կտակարան, Ղևիտացիներ 21:13-15)

ԿԱՆԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԸ

Թավմուտը նկարագրում է կնոջ ֆինանսական վիճակը հետևյալ կերպ.

«Ինչպե՞ս է կարող կինը ունենալ որևէ բան. Ինչ որ նա ունի պատկանում է նրա ամուսնուն: Ինչ որ ամուսնունն, պատկանում է նրան և ինչը որ կնոջն է, նույնպես պատկանում է ամուսնուն... Կնոջ վաստակածը և այն, ինչ որ նա կարող է գտնել փողոցներում, նույնպես պատկանում է նրան: Կենցաղային պարագաները, նույնիսկ սեղանի վրայի հացի փշրանքները պատկանում են տղամարդուն: Եթե կինը հյուր հրավիրի իր տուն և կերակրի, ապա նա պետք է գողանա իր ամուսնուց:» (Սան. 71 Ա, Գիտ. 62 Ա)

Խնդիրը այն էր, որ հրեա կնոջ ունեցվածքը գրավում էր երկրպագուին: Հրեա ընտանիքը, հոր ունեցվածքից բաժին պետք է տար իրենց դստերը որը, ամուսնության դեպքում օժիտ պետք է համարվեր: Այս օժիտը դարձնում էր հրեա դուստրերին անցանկալի բեռ իրենց հայրերի համար: Հայրը տարիներ պետք է կրթեր իր դստերը և այնուհետ մեծ օժիտով պատրաստեր նրան ամուսնության: Այսպիսով աղջիկը հրեա ընտանիքում պատասխանատվություն էր և ոչ թե արժանիք: Այս պատասխանատվությունը բացատրում է, թե ինչու հրեական հասարակությունում աղջկա ծնունդը չէր նշվում ուրախությամբ: Օժիտը հարսանեկան նվեր էր, որը տալիս էին փեսային վարձակալության պայմաններով: Ամուսինը պետք է գործեր որպես օժիտի գործնական տեր, սակայն նա չէր կարող այն վաճառել: Ամուսնության վայրկյանից սկսած, հարսը կորցնում էր օժիտի վերահսկողությունը: Ավելին, ըստ ակնկալիքների կինը ամուսնությունից հետո պետք է աշխատեր և նրա ամբողջ վաստակը պետք է անցներ ամուսնուն ի պատասխան նրա ապահովման, որը հանդիսանում էր տղամարդու պարտականությունը: Կինը կարող էր վերադարձնել իր ունեցվածքը միայն երկու դեպքում, ամուսնալուծության կամ ամուսնուն մահից հետո: Եթե կինը կնքեր մահկանացուն առաջինը, ապա տղամարդը ժառանգում էր նրա ունեցվածքը: Ամուսնու մահվան դեպքում, կինը կարող էր վերադարձնել իր մինչ ամուսնական ունեցվածքը, սակայն նա ոչ մի իրավունք չուներ ժառանգել որևէ բան իր հանգուցյալ ամուսնու ունեցվածքից: Պետք է նշել, որ փեսան նույնպես պետք է տար ամուսնական նվեր իր հարսնացուին, սակայն կրկին, նա էր իր նվերի գործնական սեփականատերը, քանի դեռ նրանք ամուսնացած էին:

Քրիստոնեությունը, մինչ վերջերս, հետևում էր հրեական նույնատիպ սովորույթի: Քրիստոնեական Հռոմեական կայսրության մեջ և կրոնական և քաղաքացիական հեղինակություններից պահանջվում էր ունեցվածքի պայմանագիր, որպեսզի ամուսնությունը համարվեր վավերական: Ընտանիքները առաջարկում էին մեծ օժիտ իրենց աղջիկների համար և որպես արդյունք, տղամարդիկ հակված էին ավելի վաղ ամուսնանալ մինչ դեռ ընտանիքները հետաձգում էին իրենց դուստրերի ամուսնությունը ավելի ուշ ժամանակի, քան մինչ այդ սովոր էին: Համաձայն Կանոնական Օրենքի, կինը իրավունք ուներ վերականգնելու իր օժիտը, եթե ամուսնությունը չէր յայլ էր համարվում, բացառությամբ այն դեպքի, երբ նրան մեղադրում էին դավաճանության մեջ: Այս դեպքում նա կորցնում էր իրավունքը օժիտի նկատմամբ, որը մնում էր նրա ամուսնուն: Ըստ Կանոնական և քաղաքացիական օրենքի, քրիստոնյա եվրոպայի և Ամերիկայի ամուսնացած կանայք կորցրել են իրենց գույքային իրավունքը մինչ տասնիններորդ դարի վերջը և քսաներորդ դարի սկիզբը: Օրինակ, ըստ անգլիական օրենքի, կնոջ իրավունքը կազմվել և հրապարակվել է 1632 թվականին: Այս օրենքը ներառում է. "Ինչ ամուսնուն է, այն պատկանում է նրան: Ինչ պատկանում է կնոջը, պատկանում է ամուսնուն: «Կինը ամուսնությամբ ոչ միայն կորցնում է իր ունեցվածքը, այլև իր անհատականությունը: Նրա ոչ մի արարք արժեք չունի: Ամուսինը կարող է հրաժարվել ցանկացած վաճառքից կամ նվերից, որը նա է պատրաստել, որպես անօրինական, անարժեք պատրաստված բան: Անձը, որի հետ նա ունեցել է որևէ համաձայնագիր, համարվում է հանցագործ, ով մասնակից է խարդախությանը: Ավելին, նա չի կարող

դատի տալ կամ դատել իր անունից, ոչ էլ կարող է դատի տալ իր ամուսնուն: Ամուսնացած կնոջը, օրենքը վերաբերվում էր որպես մանուկի: Կինը ուղղակի պատկանում է իր ամուսնուն և ուստի կորցնում է իր ունեցվածքը, օրինական անհատականությունը և ընտանեկան անունը :»

Ի՞ՆՉ Է ԱՍՎԵԼ ԲԱԶՄԱԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եկեք այժմ լուծենք բազմակնության հարցը: Բազմակնությունը շատ հին սովորություն է, որը գոյություն է ունեցել մարդկային շատ հասարակարգերում: Նույնիսկ Աստվածաշունչը չի դատապարտում բազմակնությունը: Հակառակը, Հին Կտակարանը և Ռաբբի գրերը հաճախ վկայում էին բազմակնության օրինականությունը:

Արքա, Մարգարե Սողոմոնի մասին ասում են.

«Նա ուներ արքայական ծագումով յոթ հարյուր կին և երեք հարյուր հարճ:» (Նոր Միջազգային Տարբերակ, Թագավորություններ Ա 11 : 3)

Ասում են, որ պատվարժան Մարգարե, Արքա Դավիթը նույնպես ուներ շատ կանայք և հարճեր: (Նոր Միջազգային Տարբերակ, Մնացորդաց Ա 5:13)

«Հեբրոնից հեռանալուց հետո, Դավիթը Երուսաղեմում վերցրեց ավելի շատ հարճեր և կանայք և նրա համար ծնվեցին ավելի շատ որդիներ և դուստրեր:»

Թալմուտը խորհուրդ է տալիս ունենալ առավելագույնը չորս կին: (Սուիդլեր, էջ.115)

Եվրոպական հրեաները մինչ տասնվեցերորդ դարը շարունակում էին բազմակնությունը: Արևելյան հրեաները պարբերաբար գործածում էին բազմակնությունը, մինչ Իսրայել հասնելը, որտեղ ըստ քաղաքացիական օրենքի այդ արգելված էր: Ամեն դեպքում, ըստ կրոնական օրենքի, որը որոշ դեպքերում ոտնահարում էր քաղաքացիական օրենքը, թույլատրվում էր այդ: (Լեալի Հազելթոն, Իսրայելցի Կանայք, Իրականությունը Առասպելաբանության Ետևում Նյու Յորք, Սիմոն և Շուսթեր 1977 էջ. 41)

Ի՞նչ է ասում Նոր Կտակարանը: Ըստ հայր Յուզին Հիլմանի, իր մանրակրկիտ «Վերանայված Բազմակնություն» գիրքը ասում է. «Նոր Կտակարանի ոչ մի հատվածում գոյություն չունի որևէ բացահայտ պատվիրան, որ ամուսնությունը պետք է լինի մոնոգամ, կամ որևէ բացահայտ պատվիրան, որը արգելում է բազմակնությունը:» (Գեյջ, էջ. 142)

Ավելին, Հիսուսը բազմակնության դեմ չի խոսել, այն գործածվել է իր հասարակության հրեաների կողմից: Հայր Հիլմանը ընդգծում է այն փաստը, որ Հռոմում, եկեղեցին արգելեց բազմակնությունը, որպեսզի համապատասխանի Հունա-Հռոմեական մշակույթին, որը թույլատրում էր միայն մեկ օրինական կին, մինչդեռ հանդուրժում էր հարճը և մարմնավաճառությունը: Նա մեջբերում է Սուրբ Ավգուստինին. «Այժմ, իրոք մեր ժամանակներում և պահպանելով Հռոմեական սովորույթը, այնու չի թույլատրվում վերցնել այլ կին:» (Ջեֆրի Հ. Թոգայ, «Դավաճանություն», Հուդաիկ Հանրագիտարան, հատոր 2, շարք 313: Նույնպես տես Ջուդիթ Փլասկոֆ, Կրկին կանգնել Սինայում. Հուդայականությունը

Ֆեմինիստական տեսանկյունից, Նյու Յորք. Հարփեր & Տոդային Հրատարակիչներ 1990, էջ. 170-177)

Ղուրանը, հակառակ Աստվածաշնչի, սահմանափակեց կանանց առավելագույն քանակը չորսի, պայմանով որ նրանց կվերաբերվեն արդար և հավասար, ինչպես Աստված, Ալլահն ասաց.

«Եթե դուք վախենում եք, որ ի վիճակի չեք լինի արդարացիորեն վերաբերել որբերին, ձեր ընտրությամբ կնության առեք երկուսի կամ երեքի, կամ չորսի, սակայն, եթե դուք վախենում եք, որ ի վիճակի չեք լինի նրանց արդար վերաբերվել, ապա միայն մեկին, կամ նրան, ով պատկանում է ձեր աջ ձեռքին: Այդ ավելի մոտ է կանխելու ձեզ անարդարություն գործելուց:» (Ղուրան 4:3)

Այս պարզորեն ներկայացնում է Ղուրանի աստվածային ծագումը և Իսլամի ճշմարիտ ուղերձ լինելը, որը ի տարբերություն մարդկային փիլիսոփայության և գաղափարախոսության, մարդկային միջավայրի արդյունք չէ: Այն ուղերձ է, որը հաստատում է այնպիսի մարդկային սկզբունքներ, որոնք ոչ ավելանում են հնին, ոչ էլ հնանում են ապագայում: Վերջին հաշվով այս Ամենախիմաստունի և Ամենախիմացյալի, Աստծո, Ալլահի ուղերձն է, ում իմաստությունը և գիտելիքը հեռու են մարդկային մտքից և առաջընթացից:

Ինչպես նշվել է այս փաստաթղթի սկզբում, մինչ Իսլամը արաբական երկրներում, շատ կանայք կարող էին ապրել մեկ տղամարդու հետ, քանի որ տղամարդկանց համար գոյություն չունեին կանանց քանակի սահմանափակում: Չկար որևէ մտահոգություն, թե արդյունքում ինչ էր տեղի ունենում կանանց հետ:

Այս չի տարբերվում նրանից, թե ինչ ենք մենք այսօր տեսնում. Մեկ տղամարդ մի քանի սիրուհիներով և մեկ կինը մի քանի սիրեկաններով: Եկեք այստեղ սահման դնենք և դիտենք վիճակագրությանը:

Շատ մարդկային հասարակարգերում իգական սեռը գերազանցում է արականին:

1. Ամերիկայի Միացյալ Նահանգներում, գոյություն ունեն ամենաքիչը ութ միլիոն ավել կին, քան տղամարդ:
2. Գվինեայում, յուրաքանչյուր 100 տղամարդու հաշվարկով գոյություն ունի 122 կին:
3. Տանզանիայում, 95.1 տղամարդու հաշվարկով, 100 կնոջ:

Ի՞նչ է անհրաժեշտ հասարակությունը այսպիսի անհավասարակշիռ սեռային գործակցի դեպքում: Աստված, Ալլահը Ամենախմաստունը, 1400 տարի առաջ մեզ Ղուրանում տվել է պատասխանը, միակ տրամաբանական պատասխանը բազմակնությունն է: Կասկած չկա, որ ինչ Ամենաբարձրյալ Ալլահը օրինականացրել է մեզ համար շահավետ է, սակայն, եկեք տեսնենք, թե ինչ են ասում որոշ ժամանակակից մտքերը: Հետազոտություն անց կացվեց 15-59 տարեկան ավելի քան վեց հազար կանանց շրջանում, Նիգերայի երկրորդ մեծ քաղաքում, որը ցույց տվեց, որ այդ կանանց ավելի քան 60 տոկոսը ուրախ կլինեին, եթե իրենց ամուսինները մեկ այլ կին էլ բերեին: Նույնատիպ հետազոտությամբ, յոթանասուն վեց տոկոս կանայք, Քենիայում բազմակնությանը դրականորեն են մոտենում: Մեկ այլ հետազոտություն է արվել գյուղական Քենիայում, 27 կանանցից 25-ը համարում են, որ

բազմակնությունը միակնությունից լավ է: Այս կանայք զգում են, որ բազմակնությունը կարող է լինել երջանիկ և շահեկան փորձ, եթե կանայք համագործակցեն միմյանց հետ: (Ֆիլիպ Լ Քիլբրիդե, Մեր ժամանակների երկակի ամուսնությունը, Ուեսթփորթ, Քոն. Բերգին և Գարվեյ 1994 էջ. 108-109)

Նույնիսկ մեր օրերում, բազմակնությունը շարունակում է լինել անհրաժեշտ լուծում ժամանակակից հասարակությունների որոշ հասարակական հիվանդությունների համար: Համայնքային պարտականությունները, որը նշում է Ղուրանը կապված բազմակնության թույլտվությանը, ներկայումս արևմտյան հասարակարգերում ավելի տեսանելի են, քան Աֆրիկայում:

Օրինակ, այսօր, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, գոյություն ունի խիստ սեռային ճգնաժամ սև համայնքում, որը կապված է որոշ փաստերով.

1. Յուրաքանչյուր քսան սևամորթ երիտասարդներից մեկը մահկանացուն է կնքում մինչ 21 տարեկանը:

2. Քսանից մինչ երեսուն հինգ տարեկանների միջև տարածված է սպանությունը: (Նաթան Հեյր և Ջուլիա Հեյր, Ճգնաժամը Սևամորթ Մեռական Քաղաքականության մեջ : Սան Ֆրանցիսկո, Սևամորթ Մտածելակերպ 1989, էջ.25)

3. Շատ երիտասարդ սևամորթ տղամարդ գործազուրկ են, բանտարկված կամ թմրանյութերի վրա են: (Իբիդ էջ.26)

4. Արդյունքում, ի տարբերություն սպիտակամորթ կանանց մեկի տաս հարաբերության, քառասուն տարեկան չորս սևամորթ կանանցից մեկը երբեք չի ամուսնանում: (Քիլբրիդե, էջ.94)

5. Ավելին, 20 տարեկանից ցածր երիտասարդ աղջիկները դառնում են միայնակ մայրեր և խնամողների կարիք են ունենում :

Այս ողբերգական պայմանների ավարտը այն է, որ կանանց մեծ քանակություն ներգրավված են այսպես կոչված 'տղամարդ կիսելու' մեջ: (Իբիդ էջ.95) Այսինքն, այս դժբախտ, միայնակ կանայք կապի մեջ են գտնվում ամուսնացած տղամարդկանց հետ: Տղամարդկանց կանայք հաճախ տեղյակ են փաստին, որ ուրիշ կանայք, իրենց հետ կիսում են իրենց ամուսիններին: Ամերիկյան հասարակության մեջ տղամարդ կիսելու ճգնաժամի դիտորդները, խստորեն խրախուսում են համայնքային բազմակնությունը, որպես արական սեռի ներկայացուցիչների քիչ քանակության ժամանակավոր պատասխան մինչ ավելի համապատասխան բարեփոխումներ տեղի կունենան Ամերիկյան հասարակության մեջ: (Իբիդ) Ինչ է համայնքային բազմակնությունը, այն նշանակում է, որ համայնքը ընդունել է և երկուստեք կողմերն էլ համաձայնության են եկել, ի տարբերություն սովորաբար գաղտնի պահվող 'տղամարդ կիսելուն', որը ընդհանուր առմամբ վնաս է և կնոջը և համայքին : Տղամարդ կիսելու խնդիրը ամերիկյան համայքում, 'տղամարդ կիսելու' խնդիրը քննարկվեց հունվարի 27-ին 1993 թվականին, Ֆիլադելֆիայի Թեմփլ Համալսարանում : (Իբիդ, էջ. 95-99) Որոշ խոսնակներ առաջարկում են բազմակնությունը

որպես ճգնաժամի պոտենցիալ բուժում: Նրանք նույնպես առաջարկում են, որ բազմակնությունը չպետք է արգելել օրենքով, մանավանդ այն հասարակության մեջ, որը հանդուրժում է մարմնավաճառությունը և սիրուհիներ ունենալը: Հանդիսատես մի կնոջ մեկնաբանությունը, որ աֆրո-ամերիկացիները պետք է Աֆրիկայից ուսանեն, որտեղ բազմակնությունը գործում է պատասխանատվորեն, բուռն ծափահարությունների առիթ տվեց:

Աֆրիկյան բազմակնության մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո, Անգլիկան եկեղեցու պատվական Դավիթ Գիթարին եզրակացրեց, որ բազմակնությունը, երբ այն կատարյալ է գործում, ավելի Քրիստոնեական է, քան ամուսնալուծությունը և երկակի ամուսնությունը, քանի որ լքված կանայք և երեխաները մտահոգված են: (Քրլբրիդ, էջ. 126)

Սեռային անհավասարակշիռ գործակիցը, պատերազմական ժամանակաշրջանում, իրոք խնդիր է դառնում: Բնիկ ամերիկյան հնդկացիների ցեղերը պատերազմական կորուստներից հետո տառապում էին սեռային անհավասարակշռության գործակցից: Այս ցեղերի կանայք, ովքեր վայելում էին բարձր կարգավիճակ, ընդունեցին բազմակնությունը որպես լավագույն պաշտպանություն ընդդեմ հաճույքի անպարկեշտ գործունեությունների: Եվրոպացի նորաբնակները, առանց առաջարկելու որևէ այլ ընտրանք, մեղադրեցին այս հնդկացիական բազմակնությունը որպես 'անքաղաքակիրթ': (Չոն, Դեմիլիո և Եսթելլա Բ. Ֆրիդման, Անձնական Խնդիրներ. Սեքսուալության Պատմությունը

Ամերիկայում, Նյու Յորք. Հարփեր և Ռո Հրատարակիչներ, 1988 էջ.87)

Մենք պետք է մեզ հարց տանք, թե ո՞րն է կնոջ համար ավելի արժանի. Շնորհիվ և հարգված երկրորդ կինը լինելը, ինչպես ընդունում են Բնիկ Հնդկացիները, թե փաստացի մարմնավաճառը, ինչպես ընդունում են քաղաքակիրթ Եվրոպացի նորաբնիկները :

Արդյո՞ք կնոջ համար ավելի լավ չէ ունենալ 1/2, 1/3, կամ 1/4 –ը ամուսնու, քան ընդհանրապես չունենալ ամուսին և ապրել միայնակ կյանք: Արդյո՞ք կնոջ համար ավելի լավ չէ ունենալ որևէ մեկը, ով ժամանակ և գումար կվատնի նրա համար, հոգ կտանի և կպաշտպանի և կլրացնի նրա ցանկությունները և կարիքները: Արդյո՞ք նրա համար ավելի լավ չէ իմանալ, թե ով է իր երեխաների հայրը, քան ընտրություն կատարել բազմաթիվ սիրեկանների միջև, ովքեր անհայտանում են :

Այլ կերպ, ո՞րն է կնոջ համար ավելի արժանի, Ղուրանի դեղատոմսը, թե աստվածաբանությունը, որի հիմքում ընկած է Հռոմեական կայսրության մշակույթը:

Հետաքրքիր է նշել, որ 1948 թվականին Մյունխենում տեղի ունեցած հանրագումարի ժամանակ, քննարկվեց Գերմանիայի սեռային անհավասարակշիռ գործակիցը: Ուստի, բազմակնությունը ներառվեց, որպես հանրագումարի վերջնական առաջարկություն: (Ուտե Ֆրեվերթ, Կանայք Գերմանական պատմության մեջ, Բուրժուական ազատագրությունից մինչ Սեռական ազատությունը. Նյու Յորք, Բերջ Հրատարակչություն, 1988 էջ. 263-264)

Պետք ավելացնել, որ ըստ Իսլամի, ոչ ոք չի կարող կնոջը ստիպել ամուսնանալ:

Աստվածաշունչը, հակառակը, երբեմն դիմում է բռնի բազմակնության: Անզավակ այրին պետք է ամուսնանա ամուսնու եղբոր հետ, նույնիսկ, եթե նա արդեն ամուսնացած է, անկախ նրա կարծիքի: (Նոր Միջազգային Տարբերակ, Ծննդոց 38:8-10)

«Այնուհետ Հուդան ասաց Օնանին. 'Պառկիր քո եղբոր կնոջ հետ և լրացրու քո պարտքը նրան, որպես ամուսնու եղբայր, տալով սերունդներ քո եղբորը:՝ Սակայն Օնանը գիտեր, որ զավակները իրենը չէին լինելու, այսպիսով, երբ նա պառկում էր իր եղբոր կնոջ հետ, նա թափում էր իր սերմերը գետնին, պաշտպանվելով եղբորը զավակներ տալուց: Ինչ նա անում էր, Տիրոջ աչքին չար էր, այսպիսով Տերը նրանից խլեց կյանքը:»

Բիլի Գրահամը, երևելի Քրիստոնյա ավետարանչականը, գիտակցել է այս փաստը, ինչպես հաղորդվում է, նա ասել է. «Քրիստոնեությունը չի կարող փոխզիջել բազմակնության հարցում: Եթե ներկայիս Քրիստոնեությունը չի կարող այդպես անել, ապա այդ ի վնաս իրեն է: Իսլամը թույլատրել է բազմակնությունը որպես հասարակական հիվանդությունների լուծում և մարդկային բնույթին թույլատրել է որոշակի աստիճանի հանդուրժողականություն, սակայն միայն օրենքի խիստ սահմանված շրջանակում: Քրիստոնեական երկրները միակնության մեծ ցուցադրություն են անում, սակայն իրականում, նրանք գործածում են բազմակնությունը: Ոչ ոք տեղյակ չէ, թե ինչ դեր ունի սիրուհին արևմտյան հասարակության մեջ: Ի պատիվ, Իսլամը հիմնովին ազնիվ կրոն է և թույլատրում է մահմեդականին կնության առնել

երկրորդ կին, եթե նրան անհրաժեշտ է, սակայն խստորեն արգելում է ամեն տեսակի գաղտնի սիրային կապերը, որպեսզի պաշտպանի համայնքի բարոյական պարկեշտությունը:» (Քրիստոնյաները զրուցում են սեքսի մասին. com, նոյ. 9, 2007)

Դժբախտաբար, արևմուտքը, մասնավորապես քրիստոնյա եկեղեցական ղեկավարները, օգտագործում են բազմակնության թույլատվությունը Իսլամը քննադատելու համար: Նրանց դրոպապատճառն է ընդդիմանալ Իսլամին, հուսալով խոչընդոտ հանդիսանալ նրա առաջընթացին, նվաստացնելով այն աշխարհի աչքերում:

Թույլտվության դեմ իրենց քարոզչությունը, քննադատները ներկայացնում են հետևյալ փաստարկներով.

1. Որ մեկ կնոջից ավել ամուսնությունը դեմ է բնական օրենքին.
2. Որ այս թույլտվությունը խրախուսում է կիրք և զգայականություն, որը վնաս է ընտանիքի բարեկեցությանը
3. Որ, բազմակնության համակարգն ունի հասարակական թերություններ, վնասում է կնոջ փխրուն զգացմունքները, պատճառ է հանդիսանում խորը հիասթափության և խափանման, առաջացնում է ատելություն, որը ազդում է երեխաների պատշաճ դաստիարակությանը:
4. Որ այս օրենքը խոչընդոտ է հանդիսանում ընտանիքի ծրագրավորմանը, քանի որ կանանց հոգնակիությունը բնականորեն մեծացնում է

երեխաների քանակը, որը իր հերթին տնտեսական խնդիրների պատճառ է հանդիսանում:

Մինչ այս առարկություններին անրադառնալը, եկեք սկզբում քննենք, թե արդյոք Իսլամն է, որ ի սկզբանե հրապարակել է բազմակնության համակարգը, թե այն գոյություն է ունեցել մինչ այդ: Նույնպես, եկեք տեսնենք, թե արդյոք այն գոյություն ունի այլ կրոններում: Այնուհետ, մենք կարող ենք տեսնել, թե ինչ հիմքերով և ինչ պայմաններով է Իսլամը թույլատրում տղամարդուն կնության առնել ավելի քան մեկ կին: Արդյո՞ք այն առաջարկում հասարակական խնդիրների լուծումներ, որոնց առջև կանգնել են այսօր շատ երկրներ:

ԲԱԶՄԱԿՆՈՒԹՅՈՒՆ. ՀԻՆԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Բազմակնությունը տարածված էր հնագույն ազգերի մեջ, չբացառելով Հինդուսներին և Բուդդայականներին: Ընդհանուր առմամբ աշխարհը և մասնավորապես Արաբիան, Մարգարե Մուհամմեդի սահմանումներից առաջ, լիովին թաղված էր համախառն անբարոյականության և անառակության մեջ: Մեզանից անկիրթները, երբևէ կարող են հակասել այս պատմական փաստին, մասնավորապես, որոնք վերաբերում են պետությունների մասնավոր կյանքի կանոններին: Մեծ արքա Դասարատան, Շրի Ռամայի հայրը, բազմակին էր: Եվրոպայի քրիստոնյա միապետները, իրենց չէին զսպում մեկ կին ունենալուց: Անգլիայի արքա Հենրի 8-րդը ուներ ութ կին:

Բազմակնությունը, Ըստ Հինդու Օրենքի

Գոյություն ունի հակասությունների մի լավ գործարք, թե արդյոք բազմակնությունը սահմանափակված էր Հինդու Օրենքով: Ըստ Մանույի, խնդրին վերաբերող օրենքը հետևյալն է.

1.«Երկակի ծնված տղամարդկանց, կանանց առաջին ամուսնության համար խորհուրդ է տրվում հավասար կաստա, սակայն նրանց համար, ովքեր կրքից դրդված ցանկանում են կրկին կնության առնել, հետևյալ կանայք, ում ընտրում են ըստ ուղղակի հրամանի, կասստայից, ավելի խրախուսելի են :» (Մանու iii 12)

«Այժմ, Բրիտանական Հնդկաստանում, բավական տարածված է, որ հինդուսը չունի կատարյալ սահմանափակումներ, կապված կանանց քանակի հետ, յուրաքանչյուրը կարող է իր ցանկությամբ կրկին կնության առնել, առանց կնոջ համաձայնության կամ արդարացման:» (Մայնե, Հիդու Օրենք և Գործածությունը, էջ. 113 Իբիդ)

Բազմակնություն. Ըստ Հրեական Օրենքի

Նոր Միջազգային Տարբերակի Ելք 21:10-ում ասվում է.

«Եթե նա՝ մեկ այլ կին է՝ կնության առնում, նրա սնունդը, նրա հանդրեձը և ամուսնական պարտականությունները չպետք նվազեն:»

Հին Կտակարանի ընթերցողին ակնհայտ է, որ բազմակնությունը ոչ միայն թույլատրելի էր, այլև գործածելի և որ կանոնակարգերը սահմանվել են գրեթե ու:

Բազմակնությունը, ըստ Քրիստոնեության

Քրիստոնյա հեղինակները ասում են, որ՝ միակնությունը՝ այսինքն միայն մեկ կին կնության առնելը աստվածային կատարելություն է: Արարիչը որպես միություն սահմանել է մեկ տղամարդ և մեկ կին: (Ծննդոց 2:18-24 Մատթեոս 19:5, Կորնթացիներին Ա 6::16) Նա տղամարդկանց քանակը հավասարեցրեց կանանց քանակին:» (Աստվածաշնչի Ուեսթմինստերյան Բառարան, 1944 հրատարակչություն)

Մենք ավելի ուշ կխոսենք ենթադրյալ տղամարդկանց և կանանց քանակի մասին: Այստեղ, ես կցանկանայի մեջբերել Աստվածաշնչից, որտեղ Աստված Դավիթին ուղղում է հետևյալ խոսքերը.

« Եվ, Ես տվել եմ քեզ Դավիթ, տիրոջ տունը և տիրոջ՝ կանայք՝ հանձնեցի քո գիրկը և տվեցի քեզ Հուդայի և Իսրայելի Տունը:» (Նոր Միջազգային Տարբերակ Թագավորություններ Բ 12:8)

Ի՞նչպես է պատահել, որ Ինքն Աստվածը տվել է նրան, նրա՝ տիրոջ կանանց՝ եթե Նա մտադրվել էր պահպանել՝ մեկ տղամարդը մեկ կնոջ հետ՝ կանոնը: Ադամից հետո, նույնիսկ յոթերորդ սերնդի մեջ մենք գտնում ենք .՝ «Լամեքը երկու կին կնության առավ:» (Ծննդոց 4:19), Աբրահամը ուներ երեք կին, Հակոբը ուներ երկու կին, և հարձեր, Մովսեսը չարգելեց այն, փոխարենը նա բերեց Օրենք, կանոնավորելու այդ, ինչպես արդեն նշվել է:

Որոշ քրիստոնյաներ փորձում են հաղթահարել այս դժվարությունները նկատի ունենալով, որ նախորդ մարգարեները սխալ են գործել կնության առնելով ավելի քան մեկ կին: Սակայն, Մովսեսի պարագայում, նրանք հանդիպեցին անհաղթահարելի դժվարությունների: Նրանք ասացին, որ Մովսեսը Օրենք է բերել Աստծոց և եթե Աստծո

մտադրությունն էր ամուսնական միությունը հաստատել մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև, ապա ինչու՞ Նա տվեց Մովսեսին բազմակնության կանոններ: Վերոհիշյալ Աստվածաշնչյան բառարանը փորձում է քող զցել այս դժվարության վրա ասելով. «Մովսեսը,ով շտկում էր գայթակղությունները, անմիջապես չէր վերացնում դրանք, նա չարգելեց բազմակնությունը, սակայն չխրախուսեց այն:»

Այն պահանջ էր, որ չէր կարող ունենալ արդարացում, որովհետև Մովսեսը ինքնին, կնության էր առել երկու կին. Մեկը Զիֆթրան էր, Ջեթրոյի, արաբերենում Սուհեյբի դուստրը, մյուսը Կուշիթն էր, եթովպացի կին, ում Մովսեսը կնության էր առել Իսրայելի անապատ, երկրորդ այցի ժամանակ : (Թվեր 12:1)

Ոչ մի տեղ գոյություն չունի որևէ գրություն, կամ այլ հաստատում, որ Զիֆթրան այդ ժամանակ կենդանի չէր:

Այժմ, մենք հասնում ենք մարգարեներին, ովքեր եկել են այն քանից հետո, երբ Մովսեսը չխրախուսեց բազմակնությունը: Մենք գտնում ենք, որ բազմակնությունը շարունակվում էր Մովսեսից հետո, քանի որ Գիդեոնը, Էլկանահը, Սավուդը, Ռեհոբոմը և անհաշիվ մյուսները: (Մանրամասները դիտել՝Խաղաղության Աղավնին', Կաթոլիկ Հրատարակչություն, Դատավորներ 8:30.)

«Այժմ Գիդեոնը ուներ յոթանասուն որդի, իր ուղղակի ժառանգները, քանի որ նա ուներ շատ կանայք:»

Եվ,ԹագավորություններԱ 1:2-ում ասվում է «Ռամաթայմից գոյություն ուներ մի մարդ, Զուֆիթ, Եփրեմ երկրի բլուրներից, ում անունն էր Էլկանահ, Երամայի որդի, Էլիհույի որդի, Թահույի որդի, Զուբի որդի, Եփրամիացի:

Նա ուներ երկու կին, մեկի անունն էր Հաննա, իսկ մյուսինը Փենինա: Փենինան ուներ զավակներ, սակայն Հաննան չուներ:»

Այս նաև նշված էր Թագավորություններ Բ 12:8- ում « Ես տվեցի քեզ, քո Տիրոջ տունը և քո Տիրոջ կանայք:»

«Մարգարե Դավիթը, Երուսաղեմից իր համար վերցրեց ավելի շատ կին և հարձ:» (Նոր Միջազգային Տարբերակ, Թագավորություններ Ա 5:13) Մարգարե Սողոմոնը «ուներ յոթ հարյուր կին, արքայադուստր և երեք հարյուր հարձ:» (Նոր Միջազգային Տարբերակ, Թագավորություններ Գ 11:3)

Այժմ, մենք հասանք, Հիսուսի սահմանման ժամանակաշրջանը:

Քրիստոնեական եկեղեցու մեծ հայրերից մեկը, Սուրբ Ավգուստինուսը հայտարարել է, որ բազմակնությունը, որը երկրի սահմանադրության մեջ հանցանք չէ, և գերմանացի բարեփոխողները, տասնվեցերորդ դարի վերջերին, թույլատրեցին և վավեր համարեցին երկրորդ, նույնիսկ երրորդ կնոջ առկայությունը առաջինի հետ համահավասար, առանց որոշակի արդարացման կամ որոշակի պատճառի:

Երբ քրիստոնեությունը Հռոմում իր տեսքը ստացավ, պատմությունը ցույց տվեց, որ բազմակնությունը ճանաչվեց և քրիստոնեական վաղ կայսրերը ընդունեցին դրա վավերականությունը:

Կայսր Վալենտինիան II-ը իր հրամանագրով թույլատրեց կայսրության հպատակներին կնության առնել մի քանի կին, եթե նրանք ցանկանում են և այդ ժամանակաշրջանի եկեղեցական պատմության մեջ գոյություն չուներ որևէ

բան, որը ցույց է տալիս, որ եպիսկոպոսները և քրիստոնյա ղեկավարները առարկում էին այդ օրենքի դեմ: Բացի այդ, բոլոր հաջողակ կայսրերը բազմակին էին և սովորաբար, մարդիկ հետևում էին նրանց օրինակին: Նույնիսկ, հոգևորականներն էին ունենում մի քանի կին:

Հարկ է նշել, որ Արևելյան Հռոմեական Կայսր Յուստինիանոսը 527-565 քրիստոնեական դարաշրջանի 6-րդ դարում էր, որը նշանակում էր, որ մինչ 6-րդ դարը քրիստոնեության մեջ բազմակնության թույլտվություն բոլորովին գոյություն չի ունեցել:

Ներողություն Մուհամմեդի և Ղուրանի համար՝ գրքի հետևյալ հատվածում, ակնհայտ երևում է, որ քրիստոնյա ղեկավարները մինչ 16-րդ դարը խնդիրներ չեն ունեցել բազմակնության հետ.

«Խոսելով Աբրահամի և Հաջարի մասին, Սուրբ Քրիստոստեմը ասաց. 'Այս բաները արգելված չէին': Այսպիսով, Սուրբ Ավգուստինը նշում է, որ 'գոյություն ուներ մի անարատ սովորույթ, որ մեկ տղամարդը ուներ մի քանի կին, որը այդ ժամանակ հնարավոր էր պարտքի զգացումից ելնելով, որը այժմ հնարավոր չէ: Այն հնարավոր է ի շնորհիվ ցոփության, որպեսզի ժառանգները բազմապատկվեն, ոչ մի օրենք չի արգելում կանանց բազմաքանակությունը:» (Տես Գրոթիոս, Դե ժուր, հատոր I, էջ. 268)

Ստորին Գերմանիայից պատվելի խոստովանահայրը, 726 թվականին խորհրդակցեց Գրեգորի Պապի հետ, որպեսզի իմանա, թե որ դեպքում է ամուսնուն թույլատրվում ունենալ երկու կին, Գրեգորին նույն տարվա նոյեմբերի 22-ին պատասխանեց հետևյալ կերպ. «- Եթե կինը ունենում է

հիվանդություն, որը չի թույլատրում նրան հարաբերություն ունենալ, նրա ամուսինը կարող է կնության առնել մեկ ուրիշին, սակայն այդ դեպքում, նա պետք է իր հիվանդ կնոջը տա ամբողջ անհրաժեշտ աջակցությունը և օժանդակությունը:»

Քրիստոնեություն դավանող հեղինակները նույնպես, շատ աշխատություններ են հրատարակել բազմակնության մասին: Բերնարդո Օչինուսը, Կապուչինների Կարգի Ղեկավարը, մոտավորապես 16-րդ դարի կեսերին ի օգուտ բազմակնության հրատարակեց երկխոսություններ հրատարակեց:

՝ Հրեա Կինը՝ աշխատության մեջ, Սելդենը ապացուցեց, որ բազմակնությունը թույլատրելի էր ոչ միայն հրեաների, այլև, նմանապես շատ այլ ազգերի մեջ:

Այդ դեպքում, ի՞նչ հիմքերով կարող է դարեր շարունակ արդեն գործառության մեջ գտնվող սովորույթը համարվել ամոթալի և անպատվաբեր:

Նույն, Քրիստոնեության Դոկտրինի Տրակտատ՝ գրքի մեջ, Ջոն Միլթոնը գրում է հետևյալը.

«Ամուսնության մասին իմ տրված սահմանման մեջ, ես չասացի, միասնական համակարծիքը, որ՝ մեկ տղամարդը մեկ կնոջ հետ: Միգուցե ես պետք է ենթատեքստով մեղադրանք ներկայացնեմ մեր հավատքի սուրբ հայրապետներին, Աբրահամին և մյուսներին, ովքեր միաժամանակ ունեին ավելի քան մեկ կին, սովորական կենակցությամբ և մարմնավաճառությամբ, որպեսզի չլինի թե, ես ստիպված լինեմ Աստծո սրբավայրից բացառել շինծու սուրբ ժառանգներ, ովքեր եկել են նրանցից, այո,

Իսրայելի բոլոր որդիների, ում համար է արարվել սրբությունը:» Քանի որ ասվում է, Երկրորդ Օրենք 23:2-ում.

« Ապօրինածինը չի մտնի Տիրոջ հավաքը, նույնիսկ իր տասներորդ սերունդը չի մտնի Տիրոջ հավատքը:»

Կամ, ուստի բազմակնությունը իրական ամուսնություն է, կամ դրանից ծնված բոլոր երեխաները ապօրինի են, որը կարող էր ներառել Հակոբի ամբողջ տոհմը, Աստծո կողմից ընտրված տասներկու սուրբ տոհմերը: Մակայն, քանի որ այս պնդումը կարող էր ծայրահեղ անհեթեթ լինել և քանի որ այն անարդարության գագաթակետն է, ինչպես նաև կրոնի ամենավտանգավոր միտումը, 'մի բան համարել մեղք, որը այդպիսին չի ներկայանում և կարծես իրական է հարգանքի հարցից, թե արդյոք բազմակնությունը լինելով աննշան, այն քննարկման մեծ կարևորություն ունի:» (էջ. 231-32)

Այժմ, մենք պետք է դիտենք քրիստոնյաների փաստարկները, ընդդեմ բազմակնության համակարգի: Արդյո՞ք բազմակնությունը իրականում դեմ է բնական օրենքին:

Այս հարցի փնտրտուքների և փաստերի բացասական պատասխանը:

« Տղամարդը, ասում է Ջ. Ռ. Մքոթը, բնույթով բազմակին է և քաղաքակրթության զարգացումը տարածում է այս բնածին բազմակնությունը:» (Մարմնավաճառության

Պատմությունը, էջ. 21, ինչպես մեջբերվել է 'Բազմակնությունը Իսլամում՝ հրատարակված Իսլամական Առաքելության կողմից, Լահոր)

Դոկ. Մեսիերը ասաց. «Կինը իր բնույթով միասեր է, տղամարդը իր մեջ կրում է բազմակնության տարր:»

(Իրականացումը և դրա Բիռլոգիական խանգարումները էջ. 292-293; ինչպես մեջ է բերվել «Բազմակնությունը Իսլամում:»)

Գոյություն ունեն մի շարք երկրներ, ներառելով Տանզանիան, որտեղ իգական բնակչությունը գերազանցում է արականին: Ըստ նախկինում հրատարակված վիճակագրության, Սովետական Ռուսաստանում իգական բնակչությունը 21 միլիոնով գեազանցում է արական բնակչությանը:

Աղջիկները ընդունակ են դառնում վերարտադրության և սեռական հասունացման տղաներից ավելի վաղ: Իսլամը սահմանել է սկզբունքներ, ըստ որի կարելի է հաստատել արդյոք անձը կարող է համարվել չափահաս: Չափահաս լինելու նշաններից են .Մասնավոր մասերի մազերի աճը, երազախաբությունը, 15 տարեկան լրանալը և դաշտանի առկայությունը: Այնպես է պատահել, որ բարեխառն կլիմայական պայմաններում, աղջիկները կարող են հասունանալ 9-10 տարեկան հասակում, մինչ դեռ նույն կլիմայական պայմաններում տղաները սեռապես հասունանում են 14-15 տարեկան հասակում:

Այժմ պատկերացրեք, մարդկանց մի խումբ հաստատվել են միասին մեկ վայրում, և պատկերացրեք, որ յուրաքանչյուր տարի 50 տղա և նույնքան աղջիկ են ծնվում համայնքում: Նույնպես պատկերացրեք, որ գոյություն չունի մանկան մահացություն: Քսան տարի անց կլինի 1000 տղա և նույնքան աղջիկ:

1000 աղջիկներից բացի, 550 աղջիկներ, ովքեր ծնվել են 1-ից 11 ընդ տարիներին, հասունության կհասնեն, այսինքն կլինեն 10 –ից 20 տարեկան:

1000 տղաներից միայն 300 կհասնեն հասունության: Նրանք կլինեն առաջնածինները, ովքեր ծնվել են 1-ից 6 տարիներին, ովքեր կլինեն 15-ից 20 տարեկան:

Եթե այդ համայնքը կիրառում է միամուսնությունը, 300 տղա կարող են կնության առնել 300 աղջիկ: Այդ դեպքում ի՞նչ կլինի մնացյալ 250 աղջիկների ճակատագիրը: Այսպիսով, տղաների և աղջիկների հավասարության ենթադրյալ քանակը սխալ է, ոչ միայն վիճակագրական, այլև տեսական առումներով:

Մինչ քանակական հավասարություն հայտարարելը, նույնպես մեկ այլ փաստ է առաջ գալիս: Ամեն ամիս բոլոր առողջ կանայք ունենում են դաշտանային փուլ, որի ընթացքում սեռական հարաբերությունը չի խրախուսվում: Սակայն տղամարդը իր սեռական ունակությունը չի կորցնում: Ո՞րն է դեղամիջոցը, եթե տղամարդը ի վիճակի չէ բավարարել իր սեռական կարիքը ամեն անգամ, երբ նրա կինը դաշտանի շրջանում է:

Կամ բազմակնությունը, որը օրինական կարգավիճակ ունի, կամ մարմնավաճառին դիմելը, որը արգելված ամեն կրոններում:

Բացի այս բնական պատճառներից, ինչը հերքեց քրիստոնյա քահանաների հայցը, գոյություն ունեն մարդու կողմից արարված իրավիճակներ, որոնք դեմ են այդ հայտարարությանը: Օրինակ վերցնենք պատերազմը: Եվրոպայում, երեսուն տարվա պատերազմների և վերջին երկու համաշխարհային պատերազմների ընթացքում այնքան շատ տղամարդ մահացավ, որ բավարար չէին կնության առնելու երիտասարդ աղջիկների և երիտասարդ այրիների: Միայն

արևմտյան Գերմանիայում, Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո, վեց միլիոն կանայք չէին կարող ամուսին գտնել: Նրանց մի խումբ դիմել է կառավարությանը, հրապարակելու օրենք, որը թույլ է տալիս բազմակնությունը, այնպես, որ նրանք կարողանան ամուսիններ ունենալ: Նրանք աղերսում են իրենց գործի ընթացքը, որը նրանց տնտեսական և հասարակական ապահովություն կտա և կբավարարեր նրանց բնական կարիքները: Եկեղեցին մերժեց այս քայլը և անօգնական 6 միլիոն կանայք մատնվեցին անօրինաբար հոգալու իրենց սեռական կարիքները:

Բերտրանդ Ռասելը ասում է.

«Եվ բոլոր երկրներում, որտեղ գոյություն ունի կանանց ավելի շատ քանակ, ակնհայտ անարդարություն է, որ այդ կանայք, ովքեր ի շնորհիվ թվաբանական անհրաժեշտության պետք է մնան առանց ամուսնության, պետք է ամբողջովին հեռու լինեն սեռական փորձից:» (Ամուսնություն և Բարոյականություն էջ. 47)

Հետաքրքրական է նշել, որ աշխարհի շատ ոչ-մահմեդական երկրներ բազմակնությունը անօրինական են համարում: Տվյալ երկրներում, երկրորդ կին կնության առնելը, նույնիսկ առաջին կնոջ համաձայնության առկայության դեպքում, համարվում է օրենքի ռոտնահարում: Մյուս կողմից, կնոջը դավաճանելը, առանց նրա գիտության կամ համաձայնության, կատարյալ օրինական է, քանի դեռ օրենքը կողմնակից է: Ո՞րն է նման հակասության իրական իմաստությանը: Արդյո՞ք օրենքը նախատեսված է պարզևատրել խաբեությունը և պատժել ազնվությունը: Այն այսպես կոչված՝ քաղաքակիրթ՝ Արևմտյան Աշխարհի անպատում պարադոքսն է:

Անսահման պարադոքսի մեկ այլ օրինակ է նաև այն, ինչ տեղի է ունենում “քաղաքակիրթ” երկրներում: Նրանք ցուցադրել և օրինակ են բերել միասեռ ամուսնությունների կարևորությունը: Ավելին, նրանք օրինագծեր և օրենքներ են ընդունում, որը թույլատրում է միասեռ ամուսնությունները: 2004 թվականի, նոյեմբերի 3-ին, չորեքշաբթի օրը, լրագրող Քավան Փաթերսոնը Սթեյթլայն . org-ում գեկուցեց.

«Մասաչուսեթում, միասեռական օրինական ամուսնություններից վեց ամիս անց, միասեռ ամուսնությունների հակառակորդները 11 նահանգների ընտրողների հետ չէղյալ հայտարարեցին Ընտրությունների Օրը, հաստատելով սահմանադրական փոփոխությունները, որոնք ամրագրում են ամուսնությունները, որպես բացառապես հետերոսեքսուալ հաստատություն:

Փոփոխությունները հաղթեցին Արքանզաս, Ջորջիա, Քենթուկի, Միչիգան, Միսսիսիպպի, Մոնթանա, Հյուսիսային Դակոտա, Օկլահոմա, Օհայո, Յուտա և նույնիսկ Օրեգոն նահանգներում, մեկ նահանգում, որտեղ համասեռամուլ իրավունքների ակտիվիստները գերակշռության հույս ունեին:

Ներկայումս, ավելի քան 20 միասեռական ամուսնության իրավունքների դատական հայց է ներկայացվել 11 նահանգներում. Կալիֆորնիա, Քոնեքթիկուտ, Ֆլորիդա, Ինդիանա, Մերիլենդ, Մասսաչուսեթս, Նեբրասկա, Նյու Ջերսի, Նյու Յորք, Օրեգոն և Վաշինգտոնում: Հայցերի մեծամասնությունը ձևավորվել են, երբ Մասսաչուսեթ նահանգում յոթ միասեռ գույգերի գործն է բացվել, ովքեր հաջողությամբ վիճարկել են, որ Բեյ Նահանգի

Սահմանադրությունը երաշխավորում է նրանց ամուսնության իրավունքը:»

Արդյո՞ք հետրյալ կերպ պետք է վարվեն քաղաքակիրթ և մտավոր մարդիկ: Նվիրել իրավունքներ և օրենք հաստատել, որոնք թույլ են տալիս միասեռ ամուսնությունները, երբ մենք գիտենք, որ բոլոր կրոնները արհամարհում են համասեռամոլությունը:

Այն նույնիսկ հասել է այն աստիճանի, որ մարդիկ ամուսնանում կամ սեռական հարաբերություն են ունենում նաև կենդանիների հետ, ինչպես ներկայացնում են արևմտյան պոռնոգրաֆիկ ֆիլմերը, որի մասին զեկուցել է մի կայք:

Այս ամենը տեղի է ունենում «արտահայտման ազատություն, կրոնի ազատություն, մարդու իրավունքներ և անկախություն նշանաբանների ներքո:»

ԻՆՉ Է ԱՍՎՈՒՄ ՔՈՂԻ և ԳԼԽԱՇՈՐԻ ՄԱՍԻՆ

Ամբողջ աշխարհում կանայք միլիոնավոր դուլարներ են վատնում դեմքի գեղեցկության համար: Ընկերությունները արտադրելով՝ գեղեցկության՝ արտադրանք, հսկայական վաճառք են կատարում: Ճափազանցություն չէ ասել, որ դեմքին գործածվող արտադրանքը գերազանցում է այլ արտադրանքներին: Այս ինքնին ապացուցում է, որ մարդիկ վերաբրվում են իրենց արտաքինին անհատական, մանավանդ, եթե այն հասնում է իրենց դեմքերին: Մարդիկ, մանավանդ կանայք, մեծ հպարտություն և ժամանակ են վատնում շպարելով իրենց դեմքերը:

Ալլահը տղամարդու և կնոջ գեղեցկությունը տեղադրել է դեմքին: Միգուցե մարմնի ամենագրաված մասը դեմքն է, որը գործածվում է հաղորդակցության դեպքում: Դեմքը հաղորդում է մարդու տրամադրությունը և արտահայտում է բնավորությունը և շարժումները:

Եկեք այժմ լույս սփռենք այն բանին, ինչ Արևմուտքում համարվում է կնոջ բռնության և ստրկության ամենամեծ խորհրդանիշը. Քողը կամ գլխաշորը: Եկեք լսենք, թե տարբեր կրոնների և աղանդների ղեկավարները ինչ են ասում քողի մասին:

Ըստ Ռաբբին Դոկ. Մենաչեմ Մ. Բրայերի, Յեշիվա Համալսարանի Աստվածաշնչյան Գրականության պրոֆեսորի, իր «Հրեա Կինը Ռաբբիական Գրականության մեջ» գրքի, ասվում է, որ հրեա կնոջ սովորույթն էր հասարակություն դուրս գալ գլուխը ծածկած, երբեմն նույնիսկ ամբողջ դեմքը ծածկած, թողնելով բաց միայն մեկ աչքը: Նա մեջբերում է հին մի քանի հայտնի ռաբբիների խոսքերը, ովքեր ասում են. «Վայել չէ Իսրայելի դուստրերին գլխաբաց դուրս գալ» և «Անիծվի տղամարդը, ով թույլ է տալիս տեսնել իր կնոջ մազերը... կինը, ով բացահայտում է իր մազերը ինքնագարդարման համար, աղքատություն է բերում»:»

Ռաբբիական օրենքը արգելում է օրհնանքի կամ աղոթքի ընթերցումը գլխաբաց ամուսնացած կնոջ ներկայությամբ, քանի որ կնոջ բացված մազերը համարվում են «մերկություն»:

Դոկ. Բրայերը նույնպես բացատրում է, որ հրեա կնոջ քողը միշտ չէ որ համարվում է համեստության նշան: Երբեմն, քողը խորհրդանշում է ավելի տարբերության և շքեղության

կարգավիճակ, քան համեստություն: Քողը անձնավորում էր պատվելի կնոջ արժանապատվությունը և գերազանցությունը: Այննույնպես ներկայացնում էր կնոջ անմատչելիություն, որպես ամուսնու տիրապետությամբ սրբագործված: Հին Կտակարանում ակնհայտ է, որ կնոջը գլխաբաց թողնելը մեծ անամոթություն է և այդ իսկ պատճառով քահանաները ստիպված էին ծածկել կասկածյալ դավաճանողին փորձությամբ, իր դատին: (Նոր Միջագային Տարբերակ, Թվեր 5:16-18)

« Քահանան պետք է բերի նրան և կանգնեցնի Տիրոջ առջև: Այնուհետ, նա պետք է կավե կճուճով սուրբ ջուր վերցնի և խորանի հատակի փոշի լցնի ջրի մեջ: Այն բանից հետո, երբ քահանան կանգնեցրել է կնոջը Տիրոջ առջև, նա պետք է թուլացնի նրա (պետք է բացի նրա մազերը, ըստ կաթոլիկ տարբերակի) մազերը և նրա ձեռքերի մեջ դնի հիշեցման առաջարկը, հացահատիկի առաջարկը խանդի համար, մինչ նա ինքը պահում է դառը ջուրը, որը անեծք է բերում:»

Այս տեսանկյունից քողը կարևորում է կնոջ ինքնահարգանքը և հասարակական կարգավիճակը: Ցածր խավի կանայք հաճախ քող էին կրում, բարձր կարգավիճակի տպավորություն թողնելու համար: Այն փաստը, որ քողը արժանապատվության նշան էր, հրեական հասարակության մեջ մարմնավաճառներին չէր թույլատրվում ծածկել իրենց գլուխները: Ամեն դեպքում, հաճախ մարմնավաճառները հատուկ գլխաշորեր էին կրում, արժանապատիվ երևալու համար: Եվրոպայում հրեա կանայք շարունակում էին քող կրել մինչ 19-րդ դարը, երբ նրանց կյանքը ավելի միացավ շրջապատող աշխարհիկ մշակույթին: 19-րդ դարի եվրոպական կյանքի արտաքին ճնշումը նրանցից շատերին ստիպեց գլխաբաց

դուրս գալ :Որոշ հրեա կանայք ավելի հարմար գտան փոխարինել ավանդական քողը կեղծամով, որպես քողարկելու մեկ այլ ձև:

Այժմ, ամենաբարեպաշտ հրեա կանայք ծածկում են իրենց մազերը միայն սինագոգի մեջ: Նրանցից ոմանք, Հասիդիկ աղանդը մինչ այժմ կեղծամ է գործածում: (Մենաչեմ Մ. Բրայեր՝ Հրեա Կինը Ռաբբիական Գրականության մեջ՝ Հոգեհասարակական տեսանկյունը՝ (Հոբոկեն Ն. Ջ, Կտավ հրատարակչատուն 1986 էջ. 239) և Իբիդ էջ. 316-317: Նույնպես տես Սուինդլեր էջ. 121-123, Իբիդ էջ. 139, Սյուսան Ու. Շնայդեր՝ Հրեաները և Կանայք » (Նյու Յորք. Սիմոն և Շուսթեր 1984), էջ. 237)

Ինչ վերաբերում է քրիստոնեական ավանդույթին, հայտնի է, որ կաթոլիկ միանձնուհիները ծածկում են իրենց գլուխները հարյուրավոր տարիներ, սակայն այն բոլորը չէ: Նոր Կտակարանում Սուրբ Պողոսը քողի մասին շատ հետաքրքիր հայտարարություններ է արել.

« Եվ յուրաքանչյուր կին, ով աղոթք կամ մարգարեություն է անում բաց գլխով, անպատվում է իր գլուխը- այն կարծես նրա գլուխը սափրած է: Եթե կինը չի ծածկում իր գլուխը, նա պետք է կտրի իր մազերը և եթե կնոջ համար անպատվություն է կտրել կամ սափրել մազերը, նա պետք է ծածկի գլուխը:» (Նոր Միջազգային Տարբերակ, Կորնթացիներ Ա 11:5-10)

« Դատեք ինքներդ, թե արդյո՞ք պատշաճ է կնոջ համար գլխաբաց աղոթել Աստծոն:» (Նոր Միջազգային Տարբերակ, Կորնթացիներ Ա 11:13)

«Սուրբ Թերթուլիանը իր հայտնի «Կույսերի քողարկումը» քննախոսության մեջ գրեց. «Երիտասարդ կանայք, դուրս

կրում եք ձեր քողերը փողոցում, այնպես որ դուք պետք է կրեք դրանք եկեղեցու մեջ, դուք կրում եք դրանք, երբ դուք օտարների մեջ եք, ապա կրեք դրանք ձեր եղբայրների մեջ...»

Բացի այդ, այսօր, Կաթոլիկ եկեղեցական օրենսգրքի մեջ գոյություն ունի մի օրենք, որը պատվիրում է կանանց ծածկել իրենց գլուխները եկեղեցու մեջ (Ռ Թոմսոն «Կանայք Ստյուարտական Անգլիայում և Ամերիակայում» Լոնդոն, Ռոուլթեյջ և Քեզան Պոդոս 1974 էջ. 162)

Որոշ քրիստոնեական աղանդներ, ինչպիսիք են Ամիշները և Մենոմիթները, մինչ այսօր իրենց կանանց պահում են քողով: Քողի պատճառը, ինչպես առաջարկում են իրենց եկեղեցական ղեկավարները, այն է, որ «Գլխի ծածկելը տղամարդուն և Աստծոն հնազանդության նշանն է:» Միննույն տրամաբանությունը ներկայացրել է Սուրբ Պողոսը Նոր Կտակարանի մեջ: (Մարի Մուրեյ, «Հոր Օրենքը » Լոնդոն, Ռոուլթեյջ 1995, էջ. 67)

ԱՍՓՈՓՈՒՄ

Ինչ է ասում Նոր Կտակարանը (Նոր Միջազգային Տարբերակը) կնոջ մասին

Տիմոթեոս Ա. 2:11-14 «Թող կանայք լռությամբ, ամբողջ հնազանդությամբ ուսանեն: Սակայն, ես թույլ չեմ տալիս, որ կինը սովորեցնի կամ խոսքով իշխի տղամարդուն, սակայն լուռ մնա: Քանի որ նախ Ադամը արարվեց, այնուհետ Եվան: Եվ Ադամը չի խաբվել, սակայն կինը խաբվեց և հանցանք գործեց:»

Կորնթացիներ Ա 14:34 «Թող ձեր կանայք լուռ մնան եկեղեցիների մեջ, քանի որ նրանց չի թույլատրվում խոսել, սակայն նրանց պատվիրված է հնազանդվել, ինչպես նաև օրենքն է ասում: Եվ, եթե նրանք ուսանեն որևէ բան, թող նրանք հարցնեն իրենց տղամարդկանց տանը, քանի որ ամոթ է կնոջը խոսել եկեղեցու մեջ:»

Կորնթացիներ Ա 11:5-10 «Սակայն յուրաքանչյուր կին, որը աղոթք կամ մարգարեություն է անում գլխաբաց, անպատվում է իր գլուխը, քանի որ այն նման է կարծես նա ածիլված է: Քանի որ, եթե կինը չի ծածկվում, թող նա նույնպես կտրի իր մազերը, սակայն, եթե ամոթ է կնոջը կտրել կամ ածիլվել, թող ծածկվի: Քանի որ տղամարդը իրոք պարտավոր չէ ծածկել իր գլուխը, քանի որ նա Աստծո պատկերն ու փառքն է, սակայն կինը տղամարդու փառքն է: Քանի որ ոչ թե տղամարդն է կնոջից, այլ կինը տղամարդուց: Տղամարդը չի արարվել կնոջ համար, այլ կինը տղամարդու: Քանի որ կինը պարտավոր է քոյ դնել իր գլխին, հրեշտակների պատճառով:»

Կորնթացիներ Ա 11:13 «Դատեք ինքներդ, արդյո՞ք պատշաճ է կնոջը գլխաբաց աղոթել Աստծուն:»

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Ծննդոց 3:12- 16 «Եվ տղամարդը, Աղամը ասաց. Կինը, ում տվեցիր ինձ, նա տվեց ինձ ծառից և ես համոտեսեցի : Եվ Տեր Աստվածը ասաց կնոջը. Այդ ի՞նչ ես արել: Եվ կինը ասաց. Օձը խաբեց ինձ և ես համոտեսեցի: Եվ Տեր Աստվածը ասաց օձին, քանի որ դու այդ արել ես, անիծված լինես բոլոր կենդանիների միջև և բոլոր գազանների մեջ, որովայնի վրա պիտի սողաս և ողջ կյանքդ հող պետք է ուտես, Եվ ես

թշնամություն կդնենք քո և այդ կնոջ միջև և քո և նրա սերունդների միջև, այն կջախջախի քո գլուխը և դու կջախջախես նրա գարշապարը: Կնոջն ասաց. Ես կբազմացնեմ քո ցավերը և վիշտը, ցավով դու պետք է երեխաներ բերես և քո ամուսնուն պետք է ենթարկվես և նա պետք է իշխի քեզ վրա:»

Ղևիտական 12:2-5 «Խոսիր Իսրայելի զավակների հետ ասելով. Եթե կինը հղիացել և արու զավակ է ծնել, ապա նա անմաքուր կլինի յոթ օր, այսինքն այնքան, որքան իր դաշտանի ժամանակաշրջանում է համարվում: Ութերորդ օրը թող նա թլպատի իր որդուն: Եվ այնուհետ նա պետք է շարունակի արյամբ երեսուներեք օր, որպեսզի մաքրվի, նա չպետք է դիպչի որևէ սուրբ բանի կամ մտնի սրբավայր, մինչ չլրանա նրա մաքրության օրերը: Սակայն, եթե նա աղջիկ զավակ ունենա, ապա նա անմաքուր կլինի երկու շաբաթ, ինչպես իր դաշտանի ժամանակաշրջանում և նա կշարունակի արյունը վաթսուն վեց օր, մինչ մաքրվելը:»

Ժողովող 7:26-28 «Եվ ես գտա ավելի դառը քան մահը, կնոջ, ով որոգայթ է, ում սիրտը թակարդ է և ում ձեռքերը շղթա են: Տղամարդը, ով գոհացնում է Աստծոն, կազատվի նրանից, սակայն մեղավորին նա կթակարդի... մինչ ես դեռ փնտրում, սակայն չէի գտնում, ես գտա մեկ շիտակ մարդ հազարների մեջ, սակայն ոչ մի շիտակ կին նրանց բոլորի մեջ:»

Ղևտական 15:19-30 «Եվ, եթե կինը ունի ամսական, իր դաշտանը և նրա և արյան հոսքը մարմնից է, նա պետք է հեռու լինի յոթ օր, և ով դիպչի նրան, կլինի անմաքուր մինչ երեկո: Եվ այն բոլոր առարկաները, ինչի վրա նա պատկում է դաշտանի ժամանակ, կլինի անմաքուր. Նույնպես, յուրաքանչյուր առարկայի, ինչին նա նստում է, կլինի

անմաքուր: Եվ ով դիպչի նրա անկողնուն, պետք է լվանա իր հագուստը և լոգանք ընդունի ջրով և լինի անմաքուր մինչ երեկո: Եվ ով դիպչի այն առարկային, որին նա նստել է, պետք է լվանա իր հագուստը և ջրով լոգանք ընդունի և անմաքուր լինի մինչ երեկո: Եթե այն լինի նրա անկողինը, կամ որևէ առարկա, որի վրա նա նստում է, եթե տղամարդը դիպչի այն, նա կլինի անմաքուր մինչ երեկո: Եվ, եթե որևէ մեկը պառկի նրա հետ և նրա անմաքությունը նրա մեջ է, նա պետք է անմաքուր համարվի յոթ օր և ամբողջ անկողինը, որտեղ նա պառկել է, կլինի անմաքուր: Եվ, եթե կնոջ դաշտանը անկանոն է, կամ եթե այն սահմանված ժամանակից անկանոն է, բոլոր օրերը պետք է անմաքուր համարվեն: Այն անկողինը, որտեղ նա կպառկի, նրա համար կլինի ինչպես դաշտանի ժամանակաշրջանի անկողին, և ինչի վրա նա նստի, կլինի անմաքուր, ինչպես մեկուսացման անմաքություն: Եվ, ով դիպչի այդ առարկաներին, կլինի անմաքուր և պետք է լվանա իր հագուստները և ջրով լոգանք ընդունի և անմաքուր լինի մինչ երեկո: Սակայն, եթե նա դադարի արյունահոսությունը, ապա նա պետք է հաշվի յոթ օր և դրանից հետո նա կլինի մաքուր: Եվ, ութերորդ օրը նա պետք է առնի երկու տատրակ կամ երկու աղավնու ձագ և բերի դրանք քահանային, վկայության խորանի դուռը: Եվ, քահանան դրանցից մեկը պետք է զոհաբերի որպես մեղքերի թողություն և մյուսը ողջակեզ անի: Եվ քահանան պետք է թողություն խնդրի Տիրոջից նրա անմաքության համար:»

Այլ կերպ ասած և Նոր Կտակարանը և Հին Կտակարանը մեզ ուսուցանում են, որ .

1. Կինը պետք է ուսուցանի լռությամբ և հնազանդությամբ:
2. Կինը չպետք է սովորեցնի:
3. Աղամի և Եվայի մեղքը հավասար չեն: Աղամը չի խաբվել, այլ Եվան:
4. Կինը պետք է եկեղեցիների մեջ լռություն պահպանի: Անպարկեշտ է նրանց այնտեղ բացել իրենց բերանները: Եթե նրանք հարց ունեն, ապա պետք է հարցնեն իրենց ամուսիններին մինչ եկեղեցի գնալը և այնուհետ նրանց ամուսինները համար կհարցնեն եկեղեցում:
5. Կինը չպետք է գլխաբաց աղոթի կամ մարգարեություն անի:
6. Եթե կինը աղոթք է անում գլխաբաց, ապա նա պետք է սափրի իր գլուխը:
7. Տղամարդը արարվել է Աստծո փառքով և տեսքով և Կինը արարվել է Տղամարդու փառքով, ուստի Տղամարդը պետք է իշխի նրան:
8. Յուրաքանչյուր կին, ով տղա երեխա է ունենում, պետք է անմաքուր լինի մեկ շաբաթ: Սակայն, յուրաքանչյուր կին, ով աղջիկ զավակ է ունենում, պետք է անմաքուր լինի երկու շաբաթ:
Ուստի, իգական սեռի ներկայացուցիչները ի համեմատություն արական սեռի, կրկնակի անմաքուր են դարձնում իրենց մայրերին:
9. Մինչ հնարավոր է յուրաքանչյուր հազար տղամարդու միջից ընտրել մեկ շիտակ մարդ, անհնար է նույնիսկ մեկ կին գտնել յուրաքանչյուր հազարի մեջ:
10. Կինը թակարդ է, նրա սիրտը ծուղակ և նրա ձեռքերը շղթաներ: Տղամարդը, ով գոհացնում է

Աստծոն, հեռու կմնա նրանից, սակայն նա կթակարդի մեղսավորին:

11. Եթե կինը իր դաշտանի ժամանակաշրջանում է և դիպչում է աթոռի կամ անկողնու կամ որևէ մեկ այլ առարկայի, ապա այն անմիջապես դառնում է անմաքուր: Յուրաքանչյուրը, ով այնուհետ դիպչում է այդ առարկաներին, նույնպես դառնում է անմաքուր: Նրանք այնուհետ, պետք է լոզանք ընդունեն և լվանան իրենց հագուստները, որովհետև, նրանք դիպչել են առարկայի, որին դիպչել է դաշտանի մեջ գտնվող կինը:

Ինչ են ասում կնոջ մասին Քրիստոնեության պատվարժան սրբերը .

«Կինը ստի դուստրն է, Դժոխքի պահապանը, խաղաղության թշնամին, նրա միջոցով Ադամը կորցրեց դրախտը:» (Սուրբ Ջոն Դեմանսինե)

« Կինը գործիք է, որը սատանան գործածում է պահելու ձեր հոգիները:» (Սուրբ Կուպրիան)

« Կինը սատանայի թևի տակի շատրվանն է, նրա ձայնը օձի շնչոց է:» (Սուրբ Անտոնիոս)

«Կինը ունի իժի թույն, վիշապի չարություն» (Սուրբ Գրիգորի)

- (Բոլոր հետրյալ մեջբերումները կարելի է գտնել Քարեն Արմսթրանգի «Կտակարան ըստ Կնոջ» գրքում. Լոնդոն Ելմ թրի Գրքեր, 1986 էջ, 52-62; Տես նույնպես Նենսի վան Վուուրեն «Կնոջ խորտակումը, ինչպես գործածվում է եկեղեցիների կողմից, Վիուկների որսորդները և Այլ սեռերը Ֆիլադելֆիայում» Ուեսթմիսթեր փրեսս էջ. 28-30)

Ինչպես մենք տեսնում ենք, հնագույն պատմության մեջ, քրիստոնեությունը և նույնիսկ մինչ իսլամական դարաշրջանը, կնոջը վերաբերում էր որպես կենդանու և տնային ունեցվածքի, պակաս հարգանքով և անարդար վերաբերմունքով: Դժբախտաբար ժամանակակից աշխարհը մտել է սոցիալության երկրորդ փուլ իր ջանքերով, որպեսզի շտկի մինչ-Իսլամական ժամանակների հիմարությունը: Տարօրինակ է, որ կինը, ով կիսամերկ և կիսահագնված համարվում է ազատ և ազատագրված, սակայն կինը, ով ծածկում է իրեն հնազանդվելով Աստծոն, պահպանելով իր համեստությունը, ծաղրի առարկա է դառնում և համարվում է ծայրահեղական, ամուսնուց ճնշված:

Շատերը արևմուտքում խոսում են «խուսքի ազատության, արտահայտման ազատության և այլնի մասին:» Այսպիսով, եթե ընդունելի է, որ կինը կրում է բիկինի և կարճ կիսաշրջագեստ հասարակության մեջ, ցուցադրելով բոլորին իր մարմինը, թափահարելով այն որպես ծախու մի իր, ապա արդյո՞ք ընդունելի չպետք է լինի, որ կինը կրի արտաքին զգեստ, որը քողարկում է նրա գեղեցկությունը մեկ այլ մարդուց, պահպանում է նրա պատիվը, հարգանքը և հավատարմությունը ամուսնուն և թաքցնում է նրա գեղեցկությունը, որպեսզի միայն ամուսինը վայելի այն: Մինչդեռ ամուսինը համոզված է, որ իր կինը սուրբ և հատուկ է միայն նրա համար : Նա գիտի, որ ոչ մի այլ տղամարդ բացի իրենից երբեք չի տեսել իր կնոջ գեղեցկությունը և զարդարանքը, բացառությամբ նրա մոտիկ բարեկամների, հոր, եղբայրների, հորեղբայրների և այլն: Սա կնոջ իրական հարգանքն ու պատիվն է :

Որոնք են որոշ հիվանդագին ազդեցությունները, որոնք կերտվում են կանանց համեստության պակասի հետևանքով և հեռացնում են նրանց իրենց ճշմարիտ վայրից, իրենց ազնիվ եղբայրների պաշտպանությունից և հսկողությունից:

Ա. Ընդհանուր հարգանքի կորուստ կնոջ նկատմամբ
 Բ. Ամուսնավուծությունների աճ.

Գ. Երեխաների անտեսում.

Դ. Երեխաները սխալ կրթություն և դաստիարակություն.

Ե. Բռնաբարությունների աճ.

Զ. Տղամարդկանց գործազրկության աճ, որը առաջնորդում է անգործության, որը և խրախուսում է գինեմոլությունը, թմրամոլությունը, բռնաբարությունը, մարդասպանությունը, կողոպուտը և այլ հասարակական չարիքներ:

Այս ամենը տեղի է ունենում ազատության և անկախության անվան տակ:

Եթե դուք իրոք ցանկանում եք ազատ և ազատագրված լինել, ապա շրջեք էջը իմանալու, թե ինչը իրոք կարող է ազատել և ազատագրել ձեզ:

Իսլամն է, որը կարող է ճշմարտացիորեն ազատել և ազատագրել մարդկանց: Իսլամը ազատ է արձակում մարդկանց արարածներից երկրպագելուց և ստրկանալուց: Իսլամը խրախուսում է մարդկանց երկրպագել Արարչին, այլ ոչ թե արարածին:

Ձեզանից ոմանք, կարող են հարցնել, թե ի՞նչ է Իսլամը, ո՞վ է Ալլահը և ի՞նչ է Ղուրանը:

ԻՆՉ Է ԻՍԼԱՄԸ

Իսլամը արաբերեն բառ է, որը նշանակում է հնազանդություն, որը ուղղված է մեկ և միակ իրական Աստծոն, ով չունի գուգընկերներ, որդի, հայր, մայր: Նա միջոց գոյություն է ունեցել և հավերժ է և երբեք չի քնում, ննջում կամ մահանում: Իսլամը կյանքի լիարժեք ուղղի է: Իսլամը ակնհայտ է դարձրել ամենը, յուրաքանչյուրին, ով ցանկանում է ապրել առաքինի, պատվելի կյանք, հնազանդվելով Աստծո պատվիրաններին: Մահմեդականը հավատում է, որ գոյություն չունի որևէ մեկը իր և իր տիրոջ միջև, ոչ մի բարեխոս, այսպիսով նրանք ուղղում են իրենց ամբողջ երկրպագությունը միայն Ալլահին: Եթե որևէ մեկը մեղք է գործում, նա ուղղակիորեն մեղանշում է Աստծոն:

Ո՞Վ Է ԱԼԼԱՀԸ

Ալլահ բառը Աստծո արաբերեն տարբերակն է և նույնիսկ մինչ օրս արաբ քրիստոնյաները և հրեաները Աստծոն կոչում են "Ալլահ":

Մահմեդականները նրանք են, ովքեր կամովի հնազանդվում են մեկ և միակ Աստծոն և ուղղում են իրենց երկրպագությունը միայն Նրան: Նույնպես մահմեդականը հավատում է, որ Աստված Իր ամենաներառյալ գիտելիքներով և իմաստությամբ աննպատակ չի արարել մարդուն և Աստված չի արհամարհել մարդկությանը: Ավելի շուտ Աստված մարգարեներ է ուղարկել, որպեսզի նրանք հայտնեն ուղերձը, որ «գոյություն չունի երկրպագության արժանի աստվածություն, բացառությամբ միայն Աստծո», և երբ Աստված ուղարկեց այս մարգարեներին, նա նրանց

հետ ուղարկեց աստվածային հայտնություններ և գրքեր, ինչպես Աստված ուղարկեց Մովսեսին Թորա, Դավիթին Սաղմոսներ, Հիսուսին Կտակարաններ և Մուհամմեդին Ղուրան:

ԻՆՉ Է ՂՈՒՐԱՆԸ

Ղուրանը Ալլահի կողմից ուղղված վերջին հայտնությունն է ամբողջ մարդկությանը: Այն հայտնվել է Ալլահի վերջին մարգարեյից, Մուհամմեդից (Խ.Ա.Ո.Ն): Ղուրանը ավարտուն տեսքի բերեց և չեղյալ համարեց բոլոր նախորդ գրքերը և հայտնությունները, ինչպիսիք էին Թորան, Սաղմոսները, Կտակարանները և այլն: Մահեմադականները հավատում են այս բոլոր հայտնություններին, իրենց բնական տարբերակին, մինչ աղավաղվելը և առանց որևէ մեկի բացառության, հավատում են բոլոր մարգարեներին և առաքյալներին, որոնց ուղարկել է Աստված: Մահմեդականին պատվիրվել է կրոնական բոլոր հարցերի դեպքում դիմել երկու հիմնական աղբյուրների.

1. Ղուրանի, որը վերջին գիրքը և վերջնական հայտնությունն է, որը ուղարկվել է Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն) ավելի քան 1400 տարի առաջ: Այն մինչ այսօր մնացել է իր նախնական տեսքով: Գոյություն ունի միայն մեկ տարբերակ և այն չի փոփոխվել և չի փոփոխվի մինչ ժամանակի ավարտը:

2. Մարդկության վերջին և վերջնական մարգարեյի, Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) վավերական սովորույթներին և պատմություններին: Մարդկության այս վերջին մարգարեն, մեզ

պարզաբանել է ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է իմանալ կապված մեր կյանքի ապրելակերպի հետ. Ինչպես սնվել, քնել, ամուսնանալ, աղոթել, բիզնես անել, աշխատել, հոգ տանել մեր ընտանիքների մասին, գործածել լոգասենյակը և նույնիսկ ինչպես մեզ մաքրել և ինչպես կրել կոշիկ: Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) մեզ չի թողել առանց որևէ հրահանգի: Նա ամենը պարզաբանեց մեզ, որովհետև այն հայտնություն և ուղղորդություն էր, որը նա ստացել էր Ամենագոր Ալլահից: Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն) պարտավորվածություն էր վստահվել, տարածելու աստվածային ուղերձը, նույն ուղերձը, որը Ալլահը տվել էր բոլոր մյուս մարգարեներին և առաքյալներին, որպեսզի նրանք բերեն իրենց ժողովուրդներին: Այն Իսլամի ուղերձն էր, կատարյալ հնազանդությունը, երկրպագությունը և հպատակությունը միայն Ալլահին: Մարգարեները զգուշացրել են մարդկությանը բազմաստվածության և Մեկ Իրական Աստծոն զուգընկեր տալու վտանգներից: Նրանք կոչ էին անում մարդկանց այն ամենի ինչ բարիք է և օգուտ նրանց համար և զգուշացնում էր նրանց այնից, ինչ վնաս և չարիք էր նրանց համար: Այսպիսով, մահմեդականները չեն երկրպագում Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն), նրանք չեն երկրպագում Քաբբան, Մեքքայում գտնվող սև քառակուսի կառույցին, նրանք երկրպագում են Մուհամմեդի Տիրոջը և Քաբբայի Տիրոջը, ով Ամենաբարձրյալ Ալլահն է:

Ի՞նչ են կարծում մահմեդականները տղամարդու և կնոջ արարման նպատակի մասին:

Մահմեդականը ընդունում է, որ մարդկության, կանանց և տղամարդկանց արարման միակ նպատակն է երկրպագել Ալլահին, պայքարելով ընդդեմ Սատանայի ուժերի և ապրել կյանքը ըստ Ալլահի Պատվիրանների, որպեսզի խրախուսեն Դրախտի հավերժական հաճույքը: Ինչպես Ալլահն ասում է.

« Եվ, Ես, Ալլահը, արարել եմ ջին և մարդ, որպեսզի նրանք Ինձ, Միայն երկրպագեն:» (51:56)

Նույնպես Ալլահն ասաց.

« Ոչ, Սակայն երկրպագեք Ալլահին և եղեք երախտապարտների մեջ:» (39:66)

Մեկ այլ դրվագի մեջ Նա ասում է.

« Ասա, օվ Մուհամմեդ. «Իրոք, ինձ պատվիրել են երկրպագել Ալլահին հնազանդվելով Նրան և և անկեղծորեն գործել առաքինի արարքներ, միայն հանուն Նրա:»» (39:11)

Երկրպագությունը ունի բազմակողմանի իմաստ, որը ներառում է ամենը, ինչ սիրում է Ալլահը և գոհանում է դրանցով, սկսած խոսքերից մինչ հավատքին վերաբերող արարքներ, անկախ նրանից, թե արդյոք երկրպագության այս արարքները ակնհայտ են, թե թաքնված: Ամենակարևորը այն է, որ երկրպագությունը կատարվի այնպես, ինչպես Մարգարե Մուհամմեդն էր (Խ.Ա.Ո.Ն) անում: Պատճառն այն է, որ Ամենաբարձրյալ Ալլահը պատվիրեց մարդկությանը հետևել Իր վերջին մարգարեյի օրինակին: Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) եկել էր բոլոր ռասսաների և ազգերի համար, այլ ոչ թե միայն

արաբների: Այսպիսով, ամբողջ մարդկության պարտքն է հետևել վերջին մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն) :

Արդյո՞ք մահմեդականը երկրպագում, աղոթում կամ պահք է պահում ինչպես նա է ցանկանում, ըստ իր ցանկությունների և քմահաճույքների:

Ոչ, նա պետք է երկրպագի, աղոթի և պահք պահի ըստ Մարգարե Մուհամմեդի, որովհետև նա մարդկության մեջ լավագույնն էր և լավագույնս է հասկացել Ալլահի աստվածային հայտնությունը:

Բացի այդ, Ալլահը պատվիրել է ամբողջ մարդկությանը հետևել նրան և ուսուցանել իրական կրոնը նրա օրինակի միջոցով: Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) լույս էր, որը ուղղորդում է ուղղին, ուղղի, որը կառաջնորդի մեզ առ մեր Ամենաողորմած Տերը:

Այժմ, երբ մենք գաղափար կազմեցինք մերօրյա աշխարհի կնոջ կարգավիճակի մասին, եկեք տեսնենք, թե ինչ է ասում Իսլամը նախկինում քննարկված թեմաների մասին:

ՄԱՍ 2 ԿՆՈՋ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԻՍԼԱՄՈՒԻՄ

Եթե մենք ուշադրություն դարձնենք, թե ինչ է ասում Ղուրանը կնոջ մասին, մենք շուտով կարող ենք գիտակցել, որ կնոջ Իսլամական գաղափարը ծայրահեղորեն տարբերվում է Հրեա-Քրիստոնեական տարբերակից: Թող Ղուրանը խոսի իր անունից.

Ղուրանի մեջ մենք գտնում ենք մի ամբողջ գլուխ նվիրված կանանց, որը կոչվում է Ան-Նիսաա, Չորրորդ Գլուխ, որը արաբերեն նշանակում է «Կանայք»: Այս գլխի մեջ, մենք կարող ենք շատ կարևոր հարցեր գտնել որոնք կապված են կանանց, ընտանիքի, համայնքի և այլնի հետ.....:

Առաջին արաբաձի իսլամական գաղափարը կարելի է գտնել Ղուրանի տարբեր հատվածներում, օրինակ.

«Օվ, Ադամ, բնակվիր քո կնոջ հետ Դրախտում և կերեր նրանից, ինչպես դուք երկուսդ էլ ցանկանում եք, սակայն մի մոտեցեք այս ծառին, այլապես դուք երկուսդ էլ կլինենք անարադարներից և սխալվողներից: Այնուհետ Սատանան շշնջաց նրանց առաջարկներ, որպեսզի բացահայտի այն, ինչը թաքնված է նրանցից, իրենց մասնավոր մասերից, մինչ այդ, նա ասաց.

«Ձեր Տերը չի արգելում ձեզ այս ծառը պահպանել, որպեսզի դուք կարողանանք դառնալ հրեշտակներ կամ դառնալ անմահներ: Եվ, Սատանան երդվեց նրանց երկուսին Ալլահի անունով, ասելով. «Իրոք, ես անկեղծ խորհրդատուներից մեկն եմ ձեր երկուսի համար: Այսպիսով, Սատանան շեղեց նրանց խաբելով: Այնուհետ, երբ նրանք կերան ծառից, որը թաքնված էր նրանցից, իրենց մասնավոր մասերից, դարձավ դրսևորում նրանց և նրանք

սկսեցին իրենց քողարկել Դրախտի տերևներով: Եվ նրանց Տերը կանչեց նրանց ասելով. «Արդո՞ք ես արգելել եմ ձեզ այդ ծառը և ասել ձեզ. Իրոք Սատանան ձեզ համար բացահայտ թշնամի է:» Նրանք ասացին. «**Մեր Տեր, Մենք սխալվել ենք: Եթե Դու չներես մեզ և պարզես քո Ողորմածությունը մեզ, մենք իրոք կլինենք պարտվածներից:**» (Ղուրան 7:19-23)

Արարման երկու պատմությունների հաշվի ուշադիր դիտարկումը, բացահայտում է որոշ կարևոր տարբերություններ: Ի տարբերություն Աստվածաշնչի, Ղուրանը պատասխանատվությունը դնում է և Ադամի, և Եվայի վրա, իրենց սխալի համար: Ղուրանի ոչ մի հատվածի մեջ, մենք չենք կարող գտնել նույնիսկ մի փոքր ակնարկ, որ Եվան գայթակղեց Ադամին ուտել ծառից, կամ նույնիսկ, որ նա կերավ Ադամից առաջ: Ղուրանի մեջ Եվան ոչ գայթակղող է, ոչ հրապուրող և ոչ էլ ստող: Ավելին, Եվային չպետք է մեղադրել ծննդաբերության ցավերի համար: Ըստ Ղուրանի, Ալլահը ոչ ոքի չի պատժում մեկ ուրիշի մեղքերի համար: Եվ Ադամը և Եվան, երկուսն էլ մեղք են գործել և այնուհետ թողություն են խնդրել Ալլահից և Նա ներել էլ նրանց երկուսին էլ:

Սրանք ընդհամենը մի քանի տարբերակներ են, որոնք պարզաբանում են կնոջ կարգավիճակը Իսլամի մեջ: Ինչպես մենք տեսնում ենք, այստեղ և Ղուրանի այլ տարբերակներում, Ամենաբարձրյալ Ալլահը հավասարապես է դիմում և տղամարդուն և կնոջը:

Ինչպե՞ս պետք է տղամարդը վերաբերի կնոջը: Ի՞նչ է ասում Իսլամը կնոջ և նրանց մասին, ովքեր ճնշում կամ վատ են վերաբերվում կանանց:

Ղուրանի մեջ Ալլահն ասում է.

«Օվ, դուք, ովքեր հավատում եք .Ձեզ արգելվում է ժառանգել կանանց իրենց կամքին հակառակ: Ոչ էլ դուք պետք է կոպիտ վերաբերվեք նրանց, որպեսզի վերցնեք նրանցից օժիտի բաժինը, որը դուք եք տվել նրանց, մինչ նրանք չգործեն բացահայտ անօրինական սեռական հարաբերություն և պատվարժան ապրեք նրանց հետ: Եթե դուք դադարեք հավանել նրանց, կարող է պատահել, որ դուք չեք հավանում որևէ բան և Ալլահը դրա միջոցով կբերի մեծ բարիք:» (4:19)

Հաշվի առնելով փաստը, որ մինչ Իսլամ ընդունելը հեթանոս արաբները սովորություն ունեին կենդանի թաղել իրենց իգական սեռի երեխաներին, ստիպել կանանց մերկ պարել Քաաբայի շուրջ, իրենց տարեկան տոների ժամանակ և կանանց վերաբերել որպես ստրուկների և սեռական հաճույքի առարկաներ, ովքեր չունեն ոչ մի իրավունք կամ դիրք, ամեն դեպքում Պատվելի Ղուրանի ուսմունքը հեղափոխական էր: Չնմանվելով մյուս կրոններին, որոնք կանանց վերագրում են ժառանգական մեղքի պարտքը և թուլությունը և տղամարդիկ տիրապետում են առաքինության և ազնվականության, Իսլամը վերաբերվում է տղամարդկանց և կանանց որպես նույն էություն, որոնք արարվել են որպես մեկ միակ հոգի:

Ալլահը հայտնում է Ղուրանի մեջ .

« Օվ, մարդկություն. Վախեցեք ձեր Տիրոջից, Ով արարել է ձեզ մեկ անձից, Ադամից և նրանից, Ադամից, Նա արարել է իր կնոջը Եվային և նրանցից երկուսից, Նա արարել է շատ տղամարդ և կին և վախեցեք Ալլահից, Ում միջոցով դուք խնդրում եք ձեր փոխադարձ իրավունքները և մի կտրեք

ընտանեկան հարաբերությունները: Իրավմամբ, Ալլահը Հավերժ Դիտորդ է ձեզ:» (4:1)

«Իրոք, մահմեդական տղամարդիկ և կանայք, հավատացյալ տղամարդիկ և կանայք, հավատարիմ, հնազանդ տղամարդիկ և կանայք, ճշմարտացի տղամարդիկ և կանայք, տղամարդիկ և կանայք, ովքեր համբերատար են, տղամարդիկ և կանայք, ովքեր խոնարհ են, տղամարդիկ և կանայք, ովքեր բարեգործություն են տալիս, տղամարդիկ և կանայք, ովքեր պահք են պահում, տղամարդիկ և կանայք, ովքեր պահպանում են իրենց առաքինությունը, տղամարդիկ և կանայք, ովքեր շատ են հիշատակում Ալլահին իրենց սրտերով և խոսքերով, Ալլահը նրանց համար պատրաստել է թողություն և մեծ պարգև Դրախտում :» (Ղուրան 33:35)

«Հավատացյալներ, տղամարդիկ և կանայք, մեկը մյուսի օգնականներ, պաշտպաններ, աջակիցներ են, նրանք հրամայում են ամենը ինչը բարիք է և արգելում են ամենը, ինչը չարքի է, նրանք կատարում են կանոնավոր աղոթքներ և տալիս են կանոնավոր բարեգործություն և հնազանդվում են Ալլահին և Նրա Մարգարեյին: Ալլահը կշնորհի Իր Ողորմածությունը նրանց: Իրոք, Ալլահը Ամենագոր, Ամենախիմաստունն է:» (Ղուրան 9:71)

««Այսպիսով իրենց Տերը ընդունում է իրենց խնդրանքը և պատասխանում է նրանց ասելով. «Երբեք Ես թույլ չեմ տա ձեզանից որևէ մեկի գործը կորչի, լինի նա արական սեռի, թե իգական:»» (Ղուրան 3:195)

« Ով չարիք է գործում, չի հատուցի բացառությամբ նրանց նման և ով առաքինի արարք է գործում, լինի տղամարդ, թե կին և Ալլահի եզակիության իրական հավատացյալ է,

այսպիսինը կմտնի Դրախտ, որտեղ նրանց կտրամադրվի ամենը առատությամբ, առանց սահմանափակման:» (Ղուրան 40:40)

« Ով գործում է առաքինի, տղամարդ թե կին և ունի հավատք, իրոք նրան մենք կտանք նոր կյանք, որը լավ և անբիծ է և մենք կշնորհենք այդպիսինին իրենց պարզև ըստ իրենց լավագույն արարքների:» (Ղուրան 16:97)

Ակնհայտ է, որ կնոջ Ղուրանական տեսանկյունը չի տարբերվում տղամարդու տեսանկյունից: Նրանք երկուսն էլ Աստծո արարածներ են, ում վերջնական նպատակն է երկրի վրա երկրպագել իրենց Տիրոջը, առաքինի արարքներ է գործել և խուսափել չարիքից և երկուսն էլ կգնահատվեն հավասարապես: Ամեն դեպքում, իրենց պատասխանատվությունները տարբերվում են ըստ իրենց բնույթի և ֆիզիկական կերպարի:

Ղուրանը երբեք չի նշում, որ կինը սատանայի դարպասն է կամ, որ նա բնույթով ստախոս է, ոչ էլ այն նշում է, որ տղամարդը արարվել է Աստծո կերպարով: Բոլոր տղամարդիկ և բոլոր կանայք նրա արարածներն են, այս է ամենը : Ըստ Ղուրանի, կնոջ դերը երկրի վրա սահմանափակված չէ միայն զավակ լույս աշխարհ բերելով: Նա պետք է գործի այնքան բարի արարքներ, որքան ցանկացած տղամարդ պետք է անի: Ղուրանը երբեք չի ասում, որ ոչ մի արդար կին երբևէ գոյություն չի ունեցել, ինչպես մենք տեսնում ենք նշված այլ տեքստերում: Հակառակը, Ղուրանը հրահանգում է բոլոր հավատացյալներին, կանանց ինչպես տղամարդկանց, հետևել այն կատարյալ կանանց օրինակին, ինչպիսիք են Կույս Մարիամը և Փարավոնի կինը:

« Եվ Ալլահը սահմանում է որպես օրինակ նրանց, ովքեր հավատում են, Փարավոնի կնոջը. Ջգուշացիր նա ասաց. «Օվ իմ Տեր, կառուցիր ինձ համար քեզ մոտիկ առանձնատուն Դրախտում և փրկիր ինձ Փարավոնից և նրա արաքներից և պահպանիր ինձ նրանցից, ովքեր սխալվում են :»» (66:11)

Նաև գոյություն ունի մեկ ամբողջ գլուխ, որը կոչվում է Մարիամի, Հիսուսի մոր անունով: Այն Ղուրանի 19-րդ գլուխն է և այն կոչվում է 'Մարիամ', որը համապատասխանում է Մերի անվանը:

Ամենաբարձյալ Ալլահը նրա մասին ասաց Ղուրանում.

« Եվ Մարիամը, Մերին, Ամրանի դուստրը, ով պահպանեց իր առաքինությունը: Եվ մենք նրա մեջ շնչեցինք Մեր Հոգին և նա վկայեց Խոսքերի ճշմարտությունը նրա Տիրոջ և նույնպես հավատում է Նրա գրեթե և նա Ալլահի հավատարիմ և հնազանդ ստրուկներից է :» (66:12)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Տղամարդկանցից շատերը հասել են կատարելության աստիճանի, սակայն կանանցից ոչ մեկը չի հասել այս աստիճանի, բացառությամբ Ասիայի, Փարավոնի կնոջ և Մարիամի, Մերիի, Ամրանի դստեր...» (Մահիի Ալ-Բուխարի, Հատոր 4 Հադիթ համար 623)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մերին, Ամրանի դուստրը, կանանց միջից լավագույնն էր (նրա ժամանակի աշխարհում) և Խադիջան լավագույնն էր կանանց միջից (այս ազգի) :» (Մահիի Ալ-Բուխարի, Հադիթ համար 642, հատոր 4)

Եվ այս բոլորը ուղղակի Ղուրանում և Իսլամում կանանց տրված պատվի և հարգանքի մի քանի օրինակներ են:

**ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ՏՂԱՄԱՐՈՒ և ԿՆՈՋ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.(ԱՅՄԻՆՔՆ ԿՆՈՋ և
ԱՍՈՒՍՆՈՒ)**

Ղուրանը, ի տարբերություն փոփոխված Աստվածաշնչի և Թորայի, երբեք չի համարել կնոջը տղամարդու պատկանելություն: Ղուրանը խորապես նկարագրում է ամուսինների փոխհարաբերությունները ասելով.

« Եվ Նրա նշաններից է, որ Նա արարել է ձեզ համար կողակիցներ ձեզանից, որպեսզի դուք կարողանաք բնակվել հանգստությամբ նրանց հետ և Նա դրել է սեր և ողորմածություն ձեր սրտերի մեջ, իրոք, դրանում են նշանները նրանց համար, ովքեր անբաղաճում են :» (30:21)

Այս է Ղուրանական ամուսնության գաղափարը. Մեր, ողորմածություն և հանգստություն, ոչ թե պատկանելություն և կրկնակի չափանիշներ:

Ղուրանը ընդգծում է տղամարդու և կնոջ էական միությունը ամենագեղեցիկ առակներով.

« Նրանք, ձեր կանայք, ձեր հագուստն են և դուք հագուստ եք նրանց համար:» (2:187)

Ինչպես հագուստն է թաքցնում ձեր մերկությունը, այնպես էլ ամուսինը և կինը, մտնելով ամուսնական փոխհարաբերության մեջ, պահպանում են միմյանց ողջախոհությունը: Հագուստը հարմարավետություն է տալիս մարմնին, այսպիսով, թող ամուսինը

հարմարավետություն գտնի իր կնոջ ընկերակցության մեջ և նա, ամուսնու: Հագուստը շնորհ է, գեղեցկությունը մարմնի զարդարանք, այսպիսով, նույնպես կանայք իրենց ամուսիններին են, ինչպես իրենց ամուսինները նրանց : «Իսլամը նույնպես, կնոջը չի համարում «Մատանայի գործիք», սակայն Ղուրանը կոչում է նրան 'մուսանա' - դարպաս ընդդեմ Մատանայի, որովհետև լավ կինը ամուսնանալով տղամարդու հետ, օգնում է նրան պահպանել իր կյանքի մաքրությունը: Այդ պատճառով է, Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) համարում ամուսնությունը ամենաառաքինի գործողությունը : Նա ասաց.

«Երբ տղամարդը ամուսնանում է, նա լրացնում է իր կրոնը:» (Տաբարանի ալ- Աուսաթ, հատոր 3, էջ. 161)

Նա(Խ.Ա.Ո.Ն) մահմեդականին ամուսնությունը պատվիրում է ասելով.

«Ամուսնությունը իմ ուղղու մի մասն է և ով շեղվում է իմ ուղղուց, ինձանից չէ, (այսինքն, իմ հետևորդներից) : (Սահիհ ալ Բուխարի և Սահիհ Մուսլիմ)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ոչ մի հավատացյալ տղամարդ, չպետք է ատի հավատացյալ կնոջ: Եթե նա չի հավանում նրա բնավորության մի գիծ, նա կարող է գոհանալ մեկ այլ գծով:» (Սահիհ Մուսլիմ #61)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց. «Ով հավատում է Ալլահին և Վերջին Օրվան, թող բարի խոսի կամ այլապես լռի: Բարի վերաբերվի կնոջը, քանի որ կինը արարվել է կողոսկրից... (Սահիհ Մուսլիմ)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ազդու էր մահմեդականներին պատվիրելով բարի լինել իրենց կանանց նկատմամբ, երբ նա կարդում էր իր հայտնի քարոզը Ողորմածության Լեռան, Արաֆաթի վրա, իր ուղեկիցների ներկայությամբ, ովքեր հավաքվել էին Հաջ ալ- Վոդդա (Հրաժետի Հաջի): Այնտեղ նա պատվիրեց ներկաներին և նրանց միջոցով բոլոր այն մահմեդականներին, ովքեր հետևելու էին նրանց, կանանց նկատմամբ լինել բարի և հարգալից: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Վախեցեք Ալլահից, կապված կանանց հետ: Իրոք, դուք կնության եք առել նրանց Ալլահի վստահությամբ և նրանց մարմինները թույլատրելի եք դարձրել Ալլահի խոսքի միջոցով: Դուք ունեք իրավունք նրանց վրա և նրանք ունեն ձեր վրա հարգալից իրավունքներ, ըստ ձեր միջոցների, կապված սննդի և հագուստի հետ:» (Դուք պետք է սնեք նրանց և հագցնեք նրանց առաքինաբար) (Սահիհ Մուսլիմ)

Իսլամական օրենքները և ուսմունքները կնոջը համարում են ոգեպես տղամարդուն հավասար: Նրանց միջև եղած միակ տարբերությունը ֆիզիկականն է, որը հիմնված է աշխատանքի արդար բաժանման սկզբունքի վրա: Այն տղամարդուն տալիս է ամենաձանր աշխատանքը և պատասխանատու է դարձնում ընտանիքի պահպանմանը: Այն տալիս է տան կառավարման, երեխաների դաստիարակման աշխատանքը կնոջը, աշխատանք, որը մեծ կարևորություն ունի առողջ և բարգավաճ հասարակության կառուցման համար :

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ԲԱԶՄԱԿՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Եկեք հիշենք, թե ինչ է նշվել Առաջին Մասում, Հինդու, Բաբելոնյան, Պարսկական, Աթենական, Հրեական և մինչ Իսլամական Արաբների մասին:

Այս ազգերը չեն ճանաչում որևէ սահման կանանց թվի մեջ, որոնց տղամարդիկ կարող են կնության առնել: Ամեն դեպքում, Իսլամը սահմանափակում և սահմանում է քանակը և կարգավորում է այն: Ղուրանը սահմանում է.

«Եվ, եթե դուք վախենում եք, որ դուք ի վիճակի չեք արդար վերաբերվել որք աղջիկներին, ապա կնության առեք կանանց ձեր ընտրությամբ, երկու, երեք կամ չորս, սակայն, եթե դուք վախենում եք, որ դուք ի վիճակի չեք լինի արդար վերաբերվել նրանց, ապա միայն մեկ կամ ստրուկների, ովքեր ձեր աջ ձեռքի տակ են: Այն ավելի մոտ է կանխելու ձեզ անարդարություն գործելուց:» (Ղուրան 4:3)

Եթե ամուսինը չի կարող իրականացնել այս հավասարությունը, նա չպետք է կնության առնի ավելի քան մեկ կին:

Տղամարդու վերաբերմունքը բոլոր կանանց նկատմամբ պետք է լինի այնպիսին, որ նրանցից որևէ մեկի կողմից չլինի ցավի, խանդի, դժգոհության, դժկամության և հիասթափության որևէ պատճառ:

Ամուսնու կողմից չպետք է լինի որևէ դաժանություն, անարդարություն, կողմնակալություն կամ կողմնապահություն: Ենթադրվում է, որ տանը պետք է գերիշխի խաղաղություն, ներդաշնակություն և հանգստություն, որտեղ ամուսինը հավատարմորեն հետևում է Իսլամի հրահանգներին, կապված բոլոր կանանց ընդհանուր բուժման և սպասարկման խնդիրների հետ:

Արդարություն և ազնվություն հաստատելու համար, ամուսինը պետք է ունենա համապատասխան տնտեսական միջոցներ, նրանցից յուրաքանչյուրին ապահովելու համապատասխան սնունդ, հագուստ և կյանքի այլ անհրաժեշտություններ: Ամուսինը պետք է անց կացնի հավասար ժամանակ յուրաքանչյուր կնոջ տանը: Նա պետք է իր գիշերները բաժանի նրանց միջև և պետք է համապատասխանաբար այցելի իր կանանց: Սա նրան հնարավորություն կտա ամեն օր հետևել նրանց բարեկեցությանը և լավ հարաբերություններ պահպանել նրանց բոլորի հետ:

Իսլամը շատ պարագաներում եզակի է: Այն եզակի է հաշվի առնելով մարդ արարածի բնական կարիքները և ցանկությունները: Իսլամական օրենքները և ուղեցույցները կառուցված են կատարյալ արդարության վրա, շնորհելով յուրաքանչյուր կողմին այն, ինչին նրանք արժանի են և ինչ լավագույնն է նրանց համար, առանց ճնշելու որևէ մեկին: Ինչպես Ամենաբարձրյալ Ալլահը ասաց Ղուրանի մեջ.

« Իրոք, Ալլահը հրահանգում է արդարություն և երկրպագություն ոչ ոքի բացառությամբ Ալլահի միայն և լինել համբերատար ներկայացնելու ձեր պարտավորվածությունները Ալլահին և անելով դրանք այնպես, ինչպես Մարգարեն է սահմանել և օգնություն ցուցաբերել հարազատ բարեկամներին, նույնպես Ալլահը արգելել է բոլոր չար արարքները, անօրինական սեռական հարաբերությունները, ծնողներին չհնազանդվելը, բազմաստվածությունը, սուտ խոսելը, կեղծ վկայություն տալը, Ալլահը արգելում է սպանել անմեղ մարդու և այն ամենը, ինչ արգելված է ըստ Իսլամական Օրենքի և ամեն

տեսակի ճնշումները: Նա, Ալլահը հորդորում է ձեզ, որ դուք զգույշ լինեք:» (Ղուրան 16:90)

Այս տարբերակը պարզորեն ցույց է տալիս, որ Իսլամը հրահանգում է ամենը ինչ բարիք և օգտակար է տղամարդկանց և կանանց համար և արգելում է ամենը, ինչը նույնպես վնաս է նրանց:

Իսլամը ծայրահեղական կրոն չէ, հակառակը այն երկու ծայրահեղությունների մեջ է: Ինչպես Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

« Ուստի մենք դրաձրել ենք ձեզ իրական մահմեդականներ, արդար և լավագույն ազգ, որպեսզի դուք վկա լինեք մարդկությանը... » (Ղուրան 2:143)

Իսլամը Հուդայականության և Քրիստոնեության երկու ծայրահեղությունների մեջ է. Եկեք համեմատենք.

Իսլամը թույլատրում է տղամարդուն կնության առնել մինչ չորս կին, պայմանով, որ ամուսինը արդար վերաբերվի իր բոլոր չորս կանանց : Եթե ամուսինը վախենում է, որ արդար չի լինի նրանց նկատմամբ, նա պետք է կնության առնի միայն մեկ կին:

Հրեաները գնացել են ծայրահեղության, թույլատրելով տղամարդուն կնության առնել այնքան կին, որքան նա է ցանկանում առանց սահմանների կամ որևէ սահմանափակումների:

Մյուս կողմից, Քրիստոնյա միաձուռիներին, քահանաներին և վանականներին չի թույլատրվում ամուսնանալ: Նրանք ստիպված են ապրել վանական կյանք և մնալ ողջախոհ և կենտրոնանալ երկրպագության և եկեղեցական ծառայության վրա:

Ամենաիմաստուն Ալլահը արարել է ամենը և դրա համար արարել է գույզն ու ամուսինը: Այսպիսով, ով փոճում է փոխել կամ ճնշել բնական թեքումը և հակումը, ամենայն հավանականությամբ գնում է ձախողման: Ամուսնության այս արգելքը դեմ է և տղամարդկանց և կանանց բնական շարժմանը, ցանկությանը և հակմանը: Ճնշելով և արգելելով իրենց թույլատրելի ելքերը, ամուսնությունը, այս ցանկություններին, նրանք դեմ են գնում իրենց մարդկային բնույթին: Այս է պատճառը, թե ինչու ենք մենք տեսնում շատ Քրիստոնյա քահանաների, հովիվների և եկեղեցականների, ովքեր շրջվել են դեպի երիտասարդ երեխաները, որպեսզի բավարարեն իրենց բնական ցանկությունները, ինչպես մենք տեսնում ենք, թե ինչպես են նրանց շարունակաբար մեղադրում մանկապղծության և գայթակղության մեջ: Մենք Ալլահի ապաստանն ենք խնդրում այս չար արարքներից:

Խնդրում ենք տեսնել 59-րդ էջի վիճակագրությունը:

Արարածների Արարիչը գիտի, թե ինչն է լավագույնը նրանց համար: Եթե ինժեները մեքենա է պատրաստում, նա լավագույնը գիտի, թե երբ մաքենան կարիք ունի գազի, յուղի կամ ձևափոխման: Ինժեները տեղյակ է, թե ինչ պայմաններում կարելի է մեքենան գործածել, տաք եղանակային պայմաններում, ձյան, անձրևի և այլնի...: Ինժեները տեղյակ է այն պայմաններին, ըստ որի մեքենան կարելի է կարգավորել և պահպանել:

Իսկ ինչ կասեք Ալլահի մասին, եզակիի, ով արարեց ամենը գոյության, Եզակիի, ով չունի համեմատություն Իր գերագույն գոյությամբ և վսեմ հատկանիշներով: Ալլահը արարեց տղամարդուն և կնոջը և Նա տեղյակ է, թե որոնք են նրանց բնական հակումները և

տրամադրությունները: Ամենախիմաստուն Ալլահը տեղյակ է, որ մարդկանց հակումները, հնարավորությունները և շարժումները տարբեր են, ոմանք ունեն բարձր սեռական շարժում, ոմանք ցածր, ոմանք հարուստ են, ոմանք աղքատ, ոմանք կարող են պատշաճ կերպով կառավարել իրենց ընտանիքները, մինչդեռ ոմանք ի վիճակի չեն կառավարել իրենց:

Օրինակ, տղամարդը, ով ունի ցանկություն և ֆինանսական, ֆիզիկական և մտավոր հնարավորություն և չի վախենում կանանց ճնշելուց, ունի հնարավորություն, ըստ իր ցանկության, կնության առնել չորսի: Ինչ վերաբերում է տղամարդուն, ով չունի ունեցվածք, կամ ունակ չէ և ունի վախ լինել անարդար կանանց նկատմամբ, նա պետք է կնության առնի մեկին:

Ի տարբերություն մարդու զրված օրենքների, որոնք սահմանափակված են որոշակի իրավիճակներով և որոշակի մարդկանցով, Իսլամի կրոնը հաշվի է առնում բոլոր մարդկանց բոլոր իրավիճակները, անկախ ժամանակից և վայրից:

Բազմակնության շահեկանությունը բազմազան է: Որոշները շահեկան են անհատների և որոշները համայնքի համար:

- Հնարավոր է, որ կինը, ով ունակ չէ երեխա ունենալ և ամուսինը ցանկանում է երեխաներ
- Կինը հնարավոր է, որ հիվանդ է և ունի առողջական խնդիրներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում հղիությանը կամ կապված դրա հետ
- Տղամարդը միշտ պատրաստ է ծնելության և զավակներ ունենալու և հնարավոր է, որ ցանկանում

է լրացնել իր ցանկությունները իր կնոջ հետ: Ամեն դեպքում ամսականների և հետծննդաբերական արյունահոսության ժամանակ տղամարդուն չի թույլատրվում իր կնոջ հետ սեռական հարաբերություն ունենալ: Ունենալով երկրորդ, երրորդ և չորրորդ կինը, ամուսինը ի վիճակի է մերձենալ իր մյուս կանանց, լրացնելով իր բնական ցանկությունները և հակումները: Նրա կանայք ծառայում են որպես բնական և թույլատրելի ելք տղամարդու համար: Եթե մի կինը ի վիճակի չէ երեխաներ ունենալ, կամ հիվանդ կամ հոգնած է, ամուսինը կարող է այցելել իր մյուս կանանցից մեկին:

- Ընդհանուր առմամբ, կանայք ամուսնությանը միշտ պատրաստ են և շատ տղամարդիկ պատրաստ չեն կրել ֆինանսական և ամուսնական պատասխանատվության: Իսլամում տղամարդը պատասխանատու է ընտանիքի բոլոր ծախսերի, տան, վարձի, կնոջ և երեխաների կարիքների և այլնի համար... : Կինը պարտավոր չէ նպաստել առօրյա ծախսերին, սակայն նա հնարավորություն ունի իր ընտրությամբ աջակցել:
- Կանանց թվաքանակը գերազանցում է տղամարդկանց թվաքանակին, այսպիսով կնության առնելով երկու, երեք կամ չորս կին, ամուսինը շատ օգուտներ է բերում նրանց.

Ա. Ֆինանսապես ապահովում է կանանց

Բ. Ապահովում է սեռական ցանկությունների օրինական, թույլատրելի ելքը

Գ.Նա նույնպես հանդիսանում է նրանց երեխաների օրինական հայրը, ապահովելով նրանց կարիքները
 Դ.Ապահովում է կանանց կյանքի մտավոր, ֆիզիկական և ֆինանսական զուգընկերությունը
 Ե.Ապահովված լինելով ընտանեկան հոգսերից, կինը, մայրը կարող է կենտրոնանալ երեխաների պատշաճ դաստիարակության վրա և կարիք չունի աշխատել տանից դուրս:

Ի՞նչ է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ՔՈՂԻ ԿԱՍ ԳԼՈՒԽԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախորդ, առաջին գլխի ընթերցումից հետո, ակնհայտ է, որ Իսլամը չի հայտնագործել գլխաշորը, սակայն, Իսլամը հաստատել և ամրապնդել է այն: Ղուրանը կոչ է անում հավատացյալ տղամարդկանց և կանանց իջեցնել իրենց հայացքները և պահպանել իրենց համեստությունը և այնուհետ կոչ է անում հավատացյալ կանանց երկարեցնել իրենց գլխաշորերը, որպեսզի ծածկեն պարանոցը և կուրծքը, ինչպես Ամենաբարձրյալ Ալլահն է ասում.

«Ասեք հավատացյալ տղամարդկանց իջեցնել իրենց հայացքները արգելված բաներին նայելուց և պահպանել իրենց սեռական մասերը անօրինական սեռական գործողություններից: Այդ ավելի անբիժ է նրանց համար: Իրոք, Ալլահը Ամենատեղյակն է, թե ինչ են նրանք անում: Եվ, ասացեք հավատացյալ կանանց իջեցնել իրենց հայացքները արգելված բաներին նայելուց և պահպանել իրենց սեռական մասերը անօրինական սեռական

գործողություններից և չցուցադրել իրենց գեղեցկությունը, բացառությամբ միայն նրա, ինչ տեսանելի է և գցեն իրենց քողերը իրենց ամբողջ մարմնով և չբացահայտել իրենց գեղեցկությունը բացառությամբ իրենց ամուսինների, կամ իրենց հայրերի կամ իրենց ամուսինների հայրերի կամ իրենց որդիների կամ իրենց ամուսինների որդիների կամ իրենց եղբայրների կամ իրենց եղբայրների որդիների կամ իրենց քույրերի որդիների...» (24:30,31)

Կանայք, այսպիսով, կարող են ցուցադրել իրենց գեղեցկության առարկաները, ինչպիսիք են դիմահարդարումը և զարդեղենը այլ առաքինի կանանց և որոշակի տղամարդկանց, ինչպիսիք են իրենց մերձավոր բարեկամները:

Այլ մարդկանց առջև, Մարգարեյի կանանց և բոլոր մահմեդական կանանց պատվիրվել էր լրացնել Հիջաբի, գլխաշորի պահանջը, կրելով Ջիլբաբ, որը ամբողջ մարմինը քողարկող երկար արտաքին հագուստ է..

«Օվ Մարգարե, ասա քո կանանց և դուստրերին և հավատացյալների կանանց երկարեցնել իրենց քողերը ամբողջ իրենց մարմիններով: Այդպես ավելի լավ կլինի, որպեսզի նրանց ճանաչեն որպես ազատ պատվելի կանանց, որպեսզի նրանց չանհանգստացնեն: Եվ Ալլահը Ամենաներող, Ամենատղորմածն է:» (33:59)

Եվ Ղուրանը ասում է Մարգարեյի ժամանակաշրջանի հավատացյալ տղամարդկանց.

«Եվ դուք հարցնում եք նրա կանանց ձեր ցանկացած որևէ բան, հարցրեք նրանց ծածկոցի ետևից, այդ անաղարտ է ձեր և նրանց սրտերի համար:» (33:53)

Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն)կանայք օրինակ էին ծառայում բոլոր կանանց համար և համարվում էին հավատացյալների Մայրեր:Եթե նրանց կարող են դիմել քողարկման ետևից,որպեսզի խուսափեն որևէ գայթակղությունից կամ անվայելչությունից,այդ դեպքում որքան անհրաժեշտ է այդպիսի քողարկումը սովորական կանանց համար, ովքեր կարող են գայթակղության ավելի մեծ աղբյուր հանդիսանալ:Մարգարեյի(Խ.Ա.Ո.Ն) ժամանակաշրջանից ակնհայտ է,որ ուղեկցորդները չէին վերագրում այս տարբերակը միայն Մարգարեյի կանանց սակայն, կիրառում էին այն նաև իրենց կանանց հետ, Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն)կատարյալ խրախուսանքով:Տարբերակի մեջ տրված քողարկման պատճառը այն է,որ «այն անաղարտ է ձեր սրտերի և նրանց սրտերի համար» և մեկ այլ տարբերակի մեջ մենք ընթերցում ենք.

«Ասա հավատացյալ տղամարդկանց իջեցնել իրենց հայացքները արգելված բաներին նայելուց և պահպանել իրենց սեռական մասերը անօրինական սեռական գործողություններից: Այդ ավելի անաղարտ է նրանց համար:Իրոք, Ալլահը Ամենատեղյակն է, թե ինչ են նրանք անում :» (24:30)

Հաղորդում են,որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ասաց, «Ով երիտասարդներ, ձեզանից յուրաքայուրը, ով կարող է թույլ տալ իրեն, թող ամուսնանա, քանի որ դա ավելի արդյունավետ է հայացք իջեցնելուց և ողջախոհությունը պահպանելուց:Եվ, ով չի կարող թույլ տալ,թող պահք պահի, քանի որ դա վահան է նրա համար:» (Մահիհ Մուսլիմ,Ամուսնության Գիրք #3)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Եթե ձեզանից մեկին կին է դուր գալիս և նա գրավվում է նրանով,թող նա գնա իր կնոջ

մոտ և հարաբերություն ունենա նրա հետ, քանի որ այդ ետ կմոտի այն, ինչ նրա սրտի մեջ է:» (Սահիհ Մուսլիմ, Ամուսնության Գիրք #10)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Հարության Օրը Ալլահի դիմաց ամենաչար մարդը կլինի տղամարդը,ով մերձեցել է իր կնոջը և կինը մեձեցել է նրան և տղամարդը հրապարակել է նրա գաղտնիքները:» (Սահիհ Մուսլիմ Ամուսնության Գիրք# 123)

Իսլամը ցանկանում է անբիծ հասարակություն հաստատել,որտեղ տեղ չկա նույնիսկ աչքին երևացող անբարոյականությանը: Մեռերի ազատ խառնվելը արգելված է, տղամարդկանց և կանանց խորհուրդ է տրվում ամուսնանալ երիտասարդ տարիքում,որպեսզի նրանք կարողանան օրինական կերպով լրացնել իրենց ցանկությունները և նրանց ասվում է «իջեցնել իրենց հայացքները» հասարակական վայրերում, որպեսզի աչքը չհանդիսանա Մատանայի գործիք:Իրենց քողարկելով,կանայք պահպանում են արժանապատվությունը և պարկեշտությունը:Նրա հագուստը պարզաբանում է,որ նա վաճառքի առարկա չէ,գովազդելով նրա գեղեցկությունը և հնարավորություն տալով տղամարդկանց վավաշոտ աչքերին և սուլոցներին:Մենք մի փոքր պետք է հիշենք մերօրյա անբարոյական հասարակությունը,որտեղ սեռերը խառնվում են անպարկեշտ հագուստներից և դավաճանությունը մոայլություն է տալիս միայն այն դեպքում,երբ տեղի է ունենում ամուսնությունից հետո:Մինչ ամուսնությունը,անհատներին խրախուսում են փորձել տարբեր զուգրնկերներ և տեղի ունեցող անհավատարմությունը, թշվառությունը, խանդը և

անվտանգությունը, հանդիսանում են այդպիսի կյանքի անհրաժեշտ արդյունք:

Ուստի, Ամենաբարձրյալ Ալլահը պատվիրել է բոլոր կանանց քողարկել իրենց: Ի տարբերություն Քրիստոնեական քողի ավանդության, Իսլամական քողը տղամարդու իշխանության կամ կնոջ ենթարկվածության նշան չէ: Ի տարբերություն Հրեական ավանդույթի, Իսլամական քողը պճնանքի կամ ամուսնացած կնոջ պատվի տարբերակման նշան չէ: Իսլամական քողը հնազանդություն է Ալլահի պատվիրաններին և համեստություն, որը պաշտպան է ծառայում կնոջը, բոլոր կանանց: Իսլամը կարևոր ուսմունքն է, որ միշտ ավելի լավ է ապահովել, քան գղջալ:

Քողը կամ գլխաշորը ներկայացնում է սեր և հարգանք ամուսնու և կնոջ միջև և թույլ է տալիս, որ այն համբերատար լինի: Երբ տղամարդը տեսնում է իր կնոջից ավելի գեղեցիկ կին, նրա և կնոջ միջև հարաբերությունը կարող է վատթարանալ և ի վերջո հանգեցնել բաժանման կամ ամուսնալուծության: Իսլամը փորձում է կանխել սա:

Մեզ կարևոր է հասկանալ, որ Ալլահը, ամեն գոյության Արարիչը, ամենի և ամեն մարդու Պահապանը օրինականացրել է Իր աստվածային օրենքները հաշվի առնելով Իր արարածի շահը: Ալլահը պատվիրեց և խորհուրդ տվեց մեզ անել ամեն բարիք և ի օգուտ մեզ և արգելեց մեզ այն ամենը, ինչ կարող է վնասել, ինչպես Նա, Ամենաբարձրյալը ասում է Ղուրանի մեջ.

«Իրոք, Ալլահը հրամայում է արդարություն և երկրպագություն միայն Ալլահին և համբերատարություն, որպեսզի ներկայացնել

պարտավորվածությունները Ալլահին և գործել դրանք այնպես, ինչպես Մարգարեն է ասել և օգնել մերձավորներին և բարեկամներին, նույնպես Ալլահը արգելել է ամեն չար արարք,անօրինական սեռական գործողությունները, անհնազանդությունը ծնողներին, բազմաստվածությունը, սուտը, սուտ վկայությունը, Ալլահը արգելում է անմեղ մարդու սպանությունը և ամենը, ինչը արգելում է Իսլամական օրենքը և ամեն տեսակի ճնշումը:Նա,Ալլահը,հորդորում է ձեզ, որ դուք կարողանանք ուշադիր լինել:» (Ղուրան 16:90)

Ըստ Իր ներառյալ գիտելիքների և իմաստության Ալլահը օրինականացրել է աստվածային օրենքները և ուղարկել է դրանք մարդկությանը,որպեսզի նրանք կիրառեն Իր երկրի վրա,հաշվի առնելով Իր արարածների կարիքները և ցանկությունները, պատվիրելով բարիքը և արգելելով չարիքը և վնասը: Այս աստվածային օրենքները, որոնք Ալլահը ուղարկել է մարդկության վերջին առաքյալին,Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն),կիրառելի են բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում: Այս աստվածային օրենքները, որոնք զերծ են ճնշումից, խաբեությունից, հրակնաստներից, քաղաքական օրակարգերից և նմանատիպ բաներից այն են, ինչ Ալլահը օրինականացրել է Իր արարածների համար:Ալլահը չի ցանկանում որևէ այլ օրենքների գործածում,բացառությամբ Իսլամի աստվածային օրենքների,որոնք ներառված են Ղուրանի և Մարգարե Մուհամմեդի վավերական պատումների մեջ:Յուրաքանչյուրը,ով օժտված է բանականությամբ և սրտով, պետք է փնտրի առաջնորդություն այս աստվածային օրենքներով, Իսլամի օրենքներով:Այս աստվածային օրենքները նման չեն մարդու կերտած օրենքներին, մարդու կերտած օրենքները

շարժառիթ են որոշակի մարդկանց համար և դրանք հաշվի չեն առնում անհատներին և ընդհանուր առմամբ ամբողջ հասարակության կարիքները և ենթակա են փոփոխության, երբ փոփոխվում է իշխանությունը: Ամեն դեպքում, Իսլամի աստվածային օրենքները փոփոխության չեն ենթարկվել 1400 տարի և չեն փոփոխվի մինչ ժամանակի ավարտը: Այս օրենքները արարել է Միակը, Ամենաբարձրյալ Ալլահը, ով արարել է ամեն գոյությունը: Արդյո՞ք ամենի արարիչը տեղյակ չէ, թե ինչն է շահավետ և լավագույնը իր արարածների համար:

Բացի այդ, ելնելով մեր հանդեպ ունեցած Իր գթասրտությունից և ողորմածությունից, Ալլահը չի արհամարհել մեզ այս կյանքում, չի թողել առանց որևէ ուղղորդության կամ հրահանգի, թե ինչպես ապրել մեր կյանքը: Ամենափաստուն և Գիտակ Ալլահը ուղարկել է հրահանգների գիրք Իր արարածներին, որը հանդիսանում է Ղուրանը: Ելնելով իր գթասրտությունից, նա նույնիսկ հրահանգի գրքի հետ միասին ուղարկել է մեզ ուսուցիչ, Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն), որպեսզի նա այն բացատրի մարդկությանը: Ամբողջ ուղղորդությունը և հրահանգը, որը անհրաժեշտ է ապրելու առաքինի կյանք ըստ Ալլահի պատվիրանների, բոլորը ներառված են Ղուրանի և Մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) վավերական պատումների մեջ:

Ավելին, Ղուրանը այնքան է մտահոգված պաշտպանելու կանանց մարմինները և հեղինակությունը, որ տղամարդը, ով փորձում է կեղծ մեղադրել կնոջը անպատվության մեջ, դաժանորեն պատժվում է, ինչպես Ալլահը ասում է Ղուրանի մեջ.

« Եվ նրանք, ովքեր մեղարդում են առաքինի կանանց և չեն ներկայացնում չորս վկա, պահպանելու մեղադրանքը- Խարազանք նրանց ութանասուն հարված և հավերժ մերժեք նրանց վկայությունը,քանի որ այդպիսի տղամարդիկ թույլ ստախոսներ են և անհնազանդ են Ալլահին:» (24:4)

Համեմատեք Ղուրանական տարբերակը,բռնաբարության համար սահմանվող Աստվածաշնչի անփույթ պատժի հետ:

« Եթե տղամարդը հանդիպում է կույսի, ում չի խոստացել ամուսնություն և բռնաբարում է նրան և նրանց հայտնաբերում են, նա պետք է վճարի աղջկա հորը արծաթե հիսուն շեկել:Նա պետք է կնության առնի աղջկան, քանի որ նա ոտնահարել է նրան: Նա չի կարող ամուսնալուծվել նրանից մինչ մահ:» (Նոր Միջազգային Տարբերակ. Երկրորդ Օրենք 22:28-30)

Այստեղ մի պարզ հարց է ծագում,թե ո՞վ է իրականում պատժվում: Տղամարդը, ով միայն տուգանք է վճարում բռնաբարության համար, թե կինը, ով ստիպված է ամուսնանալ տղամարդու հետ,ով բռնաբարել է նրան և ապրել նրա հետ մինչ մահ: Նաև մեկ այլ հարց է ծագում, թե ո՞րն է ավելի պաշտպանում կնոջը,Ղուրանական, թե Աստվածաշնչյան անփույթ վերաբերմունքը:

Որոշ մարդիկ,մանավանդ Արևմուտքում,հակված են ծաղրելու համեստության պաշտպանության ամբողջ փաստարկը: Նրանց փաստարկը այն է,որ լավագույն պաշտպանությունը համատարած կրթությունն է, քաղաքակիրթ վարքը և ինքնազսպվածությունը:Մենք պետք է ասենք. Հիանալի է, բայց ոչ բավարար:

1. Եթե 'քաղաքակրթությունը' բավարար պաշտպանություն է, ապա ինչու են Հյուսիսային Ամերիկայի կանայք վախենում միայնակ քայլել մութ փողոցով կամ նույնիսկ դատարկ այգու կողքով:
2. Եթե ինքնագսպվածությունը պատասխան է, ապա ինչու՞ ենք մենք ամեն օր լրատվությամբ լսում աշխատատեղում տեղի ունեցող սեռական ոտնձգության մասին: Վերջին տարիներին սեռական ոտնձգության մեղադրանքները ներառում են ծովային զինվորականներին, մենեջերներին, Համալսարանական պրոֆեսորներին, Սենատորներին, Գերագույն Դատարանի աշխատակիցներին և Ամն-ի նախագահին:

Տեսեք հետևյալ վիճակագրությունը, որը հաղորդել է Թագավորական Համալսարանի Կանանց բաժնի ղեկանը մի բրոշյուրի մեջ.

«Կանադայում ամեն վեց բուսեն մեկ կնոջ ենթարկում են սեռական ոտնձգության», Կանադայում,

3 կանանցից 1 կյանքի ընթացքում կենթարկվի սեռական ոտնձգության»,

4 կանանցից 1-ը իր կյանքի ընթացքում կենթարկվի բռնաբարության կամ դրա փորձի»,

8 կանանցից մեկը կենթարկվի սեռական ոտնձգության քույր կամ համալսարան այցելելուց և հետագոտությունը ցույց է տվել, որ կանադացի համալսարանական տարիքի տղամարդիկ ասել են, որ նրանք կգործեն սեռական ոտնձգություն, եթե համոզված լինեին, որ նրանց չեն ձերբակալի:»

Երբեմն հիմնովին սխալ է հասարակությունը, որում մենք ապրում ենք: Կյանքի և մշակույթի կտրուկ փոփոխությունը կատարյալ անհրաժեշտություն է: Համեստության մշակույթը դառնում է անհրաժեշտություն, համեստություն հագուստի, խոսքի և տղամարդկանց ու կանանց վարվելաձևի մեջ: Այլապես մռայլ վիճակագրությունը օր օրի կաճի և դժբախտաբար, միայն կանայք կվճարեն գինը:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մեր ժամանակակից աշխարհի ծաղրանքներից մեկը այն է, որ գլխաշորը մեծարվում է, որպես 'սրբության' և գովասանքի նշան, երբ կրում են ցուցադրելու Կաթոլիկ վանամայրերի հեղինակությունը, և երբ կրում են մահմեդական կանայք նախատինք, 'ճնշման' նշան, երբ կրում են նպատակ ունենալով հնազանդվել Ալլահին և հետևել Ալլահի պատվիրաններին և հետևել համեստությանը: Մահմեդական կանայք քողարկում են իրենց որպես անկեղծ հնազանդություն իրենց արարչին, Ալլահին և որպես այդպիսին ցուցադրում են Ալլահի իշխանությունը Իր արարածների վրա: Այդ պատճառով նրանց քննադատում և ծաղրում են: Սակայն ոչ մահմեդական կանայք գլխաշոր են կրում, որպեսզի ցուցադրեն տղամարդու իշխանությունը և գովասանքի են արժանանում : Հեզնական է այդպե չէ՞ :

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ 'ԶԻՆԱՅԻ'
ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ և
ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղուրանի մեջ Ամենաբարձրյալ Ալլահն ասում է. «Եվ մի մոտեցեք անօրինական սեռական հարաբերություններին, այդ ճնշում և մեծ մեղք է և չար ուղղի:» (17:32)

Ալլահն ասաց. «Իրոք, նրանք, ովքեր սիրում են այդ, անօրինական սեռական հարաբերության հանցանքը, պետք է քարոզվեն նրանց միջև, ովքեր հավատում են, նրանք կունենան դաժան պատիժ այս աշխարհում և Հետագա Կյանքում: Եվ, Ալլահը տեղյակ է և դուր ոչ:» (24:19)

Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուղեկցորդներից մեկը հաղորդեց. Մի քանի հեթանոսներ, ովքեր շատ մարդկանց կյանք էին խլել և չափից դուրս անօրինական սեռական գործողություն էին արել, եկան Մուհամմեդի մոտ և ասացին. «Օվ, Մուհամմեդ, ինչ որ դու ասես և հրավիրես մարդկանց բարիք է, սակայն մենք ցանկանում ենք, եթե դու կարող ես տեղեկացնել մեզ, թե արդյոք մենք կարող ենք քավել մեր անցյալ չար արարքները:» Այսպիսով, Աստվածային Տարբերակները հայտնվեցին.

«Նրանք, ովքեր Ալլահի հետ ոչ ոքի չեն վկայակոչում, ոչ էլ խլում են այդպիսի մարդու կյանք, ինչպես արգելել է Ալլահը, բացառությամբ արդար պատճառի, ոչ էլ անօրինական սեռական գործողություն են գործել և ով այդ գործել է, կստանա պատիժ:» (25:68)

Իսլամի մեջ 'Զինան' դավաճանությունը, անբարոյականությունը համարվում է մեծ հանցանք և մեղք:

ԱՐԴՅՈ՞Ք ԻՍԼԱՄԻ ՄԵՋ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԴԻՍ
ՊԱՏԻԺԸ

Ղուրանի մեջ Ալլահն ասում է. «**Կնոջը և տղամարդուն, ովքեր մեղավոր են անօրինական սեռական հարաբերության մեջ, խարազանեք նրանցից յուրաքանչյուրին հարյուր անգամ: Թող ոչ մի խղճմտանք ետ չպահի ձեզ իրենց գործի մեջ, պատժի, որը սահմանել է Ալլահը, եթե դուք հավատում եք Ալլահին և Վերջին Օրվան: Եվ, թող հավատացյալների մի խումբ ականատես լինեն իրենց պատժին: Այս պատիժը վերաբերում է ամուրուն, ով գործում է վերոհիշյալ մեղքը, սակայն եթե ամուսնացած անձն է գործում այն, անօրինական սեռական հարաբերությունը, պատիժը ըստ Ալլահի Օրենքի, քարկոծումն է մինչ մահ:**» (24:2)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) դատեց, որ ամուրին, ով մեղավոր է անօրինական սեռական հարաբերության մեջ, վտարվի մեկ տարի և ստանա օրինական պատիժը (հարյուր խարազան) : (Մահիհ ալ Բուխարի #6833)

Բանի Ասլամ տոհմի մի մարդ եկավ Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ և տեղեկացրեց նրան, որ նա անօրինական սեռական հարաբերություն է ունեցել և նա չորս անգամ վկայեց ընդդեմ իրեն: Ալլահի Մարգարեն պատվիրեց մինչ մահ քարկոծել նրան, քանի որ նա ամուսնացած էր: (Մահիհ ալ Բուխարի #681)

ԱՐԴՅՈ՞Ք ԱՅԼ ԿՐՈՆՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒՄ ԵՆ ԱՅՍ ՊԱՏԻԺԸ

Երկրորդ Օրենք 22:20-25 պարզորեն հաղորդում է. «Ամեն դեպքում, եթե մեղադրանքը ճշմարիտ է և չի գտնվում աղջկա կուսության որևէ ապացույց, նրան պետք է բերել իր հոր տան դուռը և այնտեղ նրա քաղաքի տղամարդիկ պետք

է մինչ մահ քարկոծեն:Նա լինելով իր հոր տանը, Իսրայելին պախարակող արարք է գործել: Դուք պետք է գտեք չարիքը ձեր միջից:Եթե տղամարդուն գտնում են կողակցելով մեկ այլ տղամարդու կնոջ հետ, երկուսն էլ և տղամարդը ով կողակցել է նրան և կինը պետք է մահանան: Դուք պետք է գտեք չարիքը Իսրայելից: Եթե տղամարդը քաղաքի մեջ հանդիպում է կույսի, ում ամուսնություն է խոստացել և նա կողակցում է նրան., դուք պետք է երկուսին էլ տանեք քաղաքի դարպասների մոտ և մինչ մահ քարկոծեք,աղջկան, որովհետև նա գտնվել է քաղաքի մեջ և օգնության չի կանչել և տղամարդուն, որովհետև նա ոտնահարել է մեկ այլ տղամարդու կնոջը: Դուք պետք է գտեք չարիքը ձեր միջից:Սակայն, քաղաքից դուրս, եթե տղամարդը հանդիպել է աղջկան,ում ամուսնության խոսք է տվել և պատվազրկել է նրան, միայն տղամարդը, ով գործել է այդ պետք է մահանա:»

Մարգարեյի ուղեկցորդներից մեկը հաղորդեց, որ հրեա տղամարդկանց և կանանց, ովքեր Ջինա էին գործում, բերում էին Ալլահի Մարգարեյի մոտ: Ալլահի Մարգարեն գնաց Հրեաների մոտ և ասաց. «Ի՞նչ եք դուք գտնում Թորայի մեջ մեկի մասին, ով Ջինա է գործում:» Նրանք ասացին. «Մենք նրանց ետընթաց նստեցնում ենք և շրջում ենք :» Նա ասաց. «Բերեք ինձ 'Թորա' եթե դուք ճշմարտությունն եք ասում:» Նրանք բերեցին այն և ընթերցեցին և երբ նրանք հասան քարկոծման Տարբերակին, անձը, ով ընթերցում էր դրեց իր ձեռքը դրավրա և ընթերցեց այն, ինչ նախորդում էր և ինչ հետևում էր: Ալլահի Մարգարեյի հետ գտնվող ուղեկցորդներից մեկը ասաց նրան. «Ասա նրան բարձրացնել իր ձեռքը», այսպիսով նա բարձրացրեց այն և այնտեղ գտնվում էր քարկոծման տարբերակը:Այսպիսով, Ալլահի Մարգարեն

պատվիրեց քարկոծել նրանց:» (Մուսլիմ, Երդումների Գիրքը, Հուդուդ #26)

Այս սովորույթը նշված է Թորայի մեջ և պատմության ընթացքում շատ հրեաներ կիրառել են այն: Հետևաբար Իսլամը ամրապնդեց այս աստվածային պատվիրանը, այլ ոչ թե հայտնագործեց այս պատիժը: Մեկ անգամ ևս, Ալլահը ելնելով Իր Ամենաներառուն Իմաստությունից և Գիտելիքից տեղյակ է, թե ինչն է լավագույնը Իր արարածների համար և միայն օրինականացրեց այն, ինչը պաշտպանում է Իր արարածներին վնասից: Բացի այդ, այս պատժի կիրառումը ծառայում է քավություն այս մեծ մեղքին:

Ի՞ՆՉՈՒ ՊԵՏՔ Է ԱՅԴՊԵՍ ՊԱՏԺԵԼ ՈՐԵՔ ՄԵԿԻՆ

- Հնազանդվել և ենթարկվել Ալլահի պատվիրաններին
- Դադարեցնել վտանգի և վարակիչ հիվանդությունները տարածումը համայնքի ներսում. 'Ձինա' -ան անբարոյականությունը և դավաճանությունը մահացու և վարակիչ հիվանդությունների ամենամեծ պատճառն է, որոնցից են ՁԻԱՀ-ը, Հերպեսը և այլն:
- Վերջ դնել ամուսնալուծությանը, բաժանմանը և այլն... 'Ձինա' -ն պատճառ է հանդիսանում ընտանիքների բաժանման և խնդիրների:
- Կանխել մարդկանց ստիգ, գողությունից, սպանությունից, անպատվությունից, նախանձից և այլն և մյուսներին ծառայել որպես օրինակ, դաս, զգուշացում:

- Կանխել մանուկների ծնունդը, ովքեր չգիտեն իրենց իրական ծնողներին, որը առաջնորդում է մտավոր և ֆիզիոլոգիական խնդիրների
- Կանխել ապօրինի ծնունդները

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի մայիսի 13-ին հրատարակված Նյու Յորք Թայմսը, Գարդիներ Հարիսը հաղորդում է, որ 2007 թվականի Ամերիկայի Միացյալ Նահանգներում 10 երեխայից չորսին ծնում են միայնակ մայրերը, մասնաբաժին, որը արագորեն աճում է և այստեղ և արտերկրում, այս վիճակագրությունը թողարկվել է ըստ կառավարական գործիչների, չորեքշաբթի:

Մինչ 1970 թվականը միայնակ մայրերի մեծամասնությունը դեռահասներ էին: Սակայն, վերջին տարիներին 20-30 տարեկան չամուսնացած կանանց ծնելիության մակարդակը աճել է, 2002 թվականին հասնելով 34 տոկոսի համեմատած 30-34 տարեկանների: 2007 թվականին, 20 տարեկանների շրջանում, երեխաների 60 տոկոսը ծնվել է ամուսնությունից դուրս, դեռահասներին բաժին է հասնում 23 տոկոսը և 30 և բարձր տարիքի կանանց, 17 տոկոս:

Արտամուսնական ծնունդների աճը տեղի է ունենում այն ծնողների մոտ, ովքեր միասին են ապրում, սակայն ամուսնացած չեն, կենսակցության փաստարկները, որոնք համարվում են ավելի քիչ հաստատուն, քան ամուսնությունները, ուսումնասիրում են երևույթը:

Հատվածը առանձնապես տարածված է իսպանախոս կանանց մեջ, աճելով 20 տոկոսից ավել 2002 թվականից

մինչ 2006թվականները, ամենավերջին տարին,որի ժամանակ ռասսայական միջադեպերը հասանելի են:Ըստ կառավարական ծննդյան վկայականների,իսպանախոս չամուսնացած կանանց 11 տոկոսը երեխա են ունեցել 2006 թվականին, ի համեմատություն սևամորթ չամուսնացած կանանց, որը կազմում է 3 տոկոս:

Սակայն փորձագետները պնդում են,որ աճը Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեծ մտահոգության առիթ է տալիս, որովհետև գույգերը այլ շատ երկրներում ավելի կայուն են և երեխաների կառավարական օգնությունը բարձր մակարդակի վրա է:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ծնված արտամուսնական երեխաները հակված են առողջական և կրթական ավելի աղքատիկ արդյունքների, քան ամուսնացած կանանց երեխաները,սակայն դրա պատճառը կարող է հանդիսանալ այն, որ չամուսնացած մայրերը ստիպված են կիսել այդ խնդիրները:

Ըստ խորհրդի,Ամերիկայի Միացյալ Նահանգներում չամուսնացած կանանց ծննդաբերական սակագինը կայունացել է 1995-ից մինչ 2002 թվականները և նվազել է չամուսնացած դեռահասների և սևամորթ կանանց միջև:

Սակայն 2002 թվականից վեր,չամուսնացած կանանց ծնելիությունը վերսկսել է աճել: 1940 թվականին ծնվածների միայն 3. 8 –ն էր չամուսնացած կանանցից:

2007 թվականին,Կոլումբիայի և Միսսիսիպպի նահանգները ունեյին արտամուսնական ծնելիության բարձր ցուցանիշը. 59 և 54 տոկոս նշված կարգով: Ամենացածր ցուցանիշը, 20 տոկոսը, Յուտա նահանգում

էր: Նյու Յորքում, վարկանիշը 41 տոկոս էր, Նյու Ջերսիում 34 տոկոս և Կոնեկտիկուտում 35 տոկոս:

Սարա Բրաունը, Ազգային Խորհրդի գործադիր տնօրենը, ով հանդես է գալիս կանխելու դեռահասների և չծրագրավորված հղիությունները, ոչ կառավարական դատապաշտպանների խումբը, պնդում է, որ սեռական հարաբերությունը և հղիությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում ենթարկվում է ավելի մեղմ պատժի, որտեղ չծրագրավորված հղիությունները, ծնելիությունը և արհեստական ընդհատումները ավելի բարձր ցուցանիշ ունեն, քան այլ արդյունաբերական ազգերը:

«Այս միտումները կարող են բավարարել երիտասարդ չափահասների կարիքները,» ասում է նա, «սակայն, այդ երեխաների շահերից հեռու է:»

Հիվանդությունների Վերահսկման և Կանխալզելման կենտրոնը 2006 թվականին հաղորդում է.

- Չամուսնացած կանանց կենդանի ծնելիության քանակը. 1,641,946
- Չամուսնացած կանանց ծնելիության վարկանիշը. 50.6 ծնունդ է 1000 չամուսնացած կանանց մեջ, որոնց տարիքն է 15-44 տարեկանը
- Չամուսնացած կանանց ծնելիության տոկոսը. 38,5 % -ն է.

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ և ԿԱՆԱՆՑ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ամուսնական հարցերի շրջանակում, Ալլահը սահմանափակել է ամուսնուն չորս կին կնության առնելով, պայմանով, որ նա ըստ իր

հնարավորությունների, իր բոլոր կանանց վերաբերի արդար և հավասար: Եվ, Նա պարտադրել է ամուսիններին ապրել նրանց հետ բարությամբ, ինչպես Նա ասել է Ղուրանի մեջ. «Եվ, ապրիր նրանց հետ պատվով:» (4:19)

Ալլահը կնոջը արարել է որպես ամուսնու ընտանիքի հոգ տանող, բարիք պատվիրող և չարիք արգելող և Նա արարել է նրան երեխաների պահապան, ամուսնու բացակայության ժամանակ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Կինը ամուսնու ընտանիքի պահապանն է և Դատաստանի Օրը նրան կհարցնեն նրանց մասին, ովքեր նրա հոգացության տակ են:» (Սունան Աբու Դաուդ #2928, Բուխարի #7138 և մյուսներ)

Ինչպես տեսնում ենք, Իսլամը կնոջը բարձրացրել և տվել է պատվելի կարգավիճակ:

Սկսած Յոթերորդ դարից, Իսլամը ամուսնացած կնոջը պարզել է անկախ անհատականություն, որը Հրեա-Քրիստոնեական Արևմուտքը զրկել էր մինչ վերջին ժամանակները: Իսլամում, հարսնացուն և նրա ընտանիքը պարտավոր չեն որևէ նվեր տալ փեսացուին: Մահմեդական ընտանիքի աղջիկը պատասխանատվություն չէ: Իսլամում կինը այնքան պատվարժան է, որ կարիք չունի նվերներ տալու պոտենցիալ ամուսիններին: Փեսացուն պետք է հարսանեկան նվեր պարզևի հարսնացուին: Այդ նվերը պատկանում է նրան և ոչ փեսացուն, ոչ էլ հարսնացուի ընտանիքը մասնաբաժին կամ հսկողություն չունեն: Մերօրյա շատ մահմեդական հասարակարգերում հարյուր հազարավոր դուլարների ամուսնական նվերը անսովոր բան չէ: Հարսնացուն իր ամուսնական նվերը պահպանում է նույնիսկ ամուսնալուծության

դեպքում: Ամուսնուն չի թույլատրվում որևէ մասնաբաժին ունենալ կնոջ ունեցվածքից, վերցնել այն, բացառությամբ այն դեպքի, երբ կինը կամովի է առաջարկում: Ղուրանը բացահայտորեն սահամնում իր դիրքորոշումը.

«Եվ, տվեք կանանց ում դուք կնության եք առնում իրենց օժիտը բարի սրտով, սակայն, եթե նրանք, իրենց բարի կամքով վերադարձնում են դրանից որևէ բաժին, վերցրեք այն և վայելեք առանց վնասի որևէ վախի, ինչպես Ալլահն է այն դարձրել թույլատրելի:» (4:4)

Կնոջ ունեցվածքը և վաստակը նրա կատարյալ իշխանության տակ են և ենթակա միայն նրա և երեխաների գործածմանը: Նրանց կենցաղային ապահովությունը ամուսնու պատասխանատվությունն է: Անկախ նրանից թե որքան ունևոր է կինը. նա պարտավոր չէ գործել որպես ընտանիքի մատակարար, քանի դեռ նա ինքը կամովի չի ընտրել այն: Ամուսինները ժառանգում են միմյանց: Ավելին, Իսլամում ամուսնացած կինը պահպանում է իր անկախ օրինական անհատականությունը և իր ընտանեկան անունը:

Մահմեդական մայրերը, կանայք, դուստրերը և քույրերը ժառանգելու իրավունքները ստացել են տասներեք հարյուր տարի առաջ, մինչ Եվրոպան ճանաչեց դրանց գոյությունը: Ժառանգության բաժանումը հսակայական թեմա է, որը մանրամասնորեն լուսաբանվել է Ղուրանի մեջ. (Տես 4:7, 11, 12, 176)

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ԿՆՈՋ ԿՐՈՆԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ինքն էր կանանց կրոն ուսուցանելու օր հստակեցրել:

Որոշ կանայք խնդրեցին Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) օր հստակեցնել իրենց համար, քանի որ տղամարդիկ զբաղեցնում էին նրա ամբողջ օրը: Ըստ այդմ, նա խոստացավ մեկ օր հստակեցնել կրոնական դասերի և պատվիրանների համար: Այդ դասերից մեկի ընթացքում Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Կինը, ում երեք զավակները մահկանացուն են կնքել, նրան կպաշտպանեն Դժոխքի Կրակից:» Մի կին հարցրեց, «Եթե միայն երկուսը կնքեն մահկանացուն:» Նա պատասխանեց, «Նույնիսկ երկուսը կպաշտպանեն նրան Դժոխքի կրակից:» (Մահիի ալ-Բուխարի#103)

Այս պատումը ցույց է տալիս Մարգարե Մուհամմեդի(Խ.Ա.Ո.Ն) անհանգստությունը և հարգանքը կանանց նկատմամբ:Լինելով մահմեդականների առաջնորդը, նա հստակեցրել էր որոշակի օր,երբ նա ինքն էր տալիս կրոնական հրահանգներ և ուղղորդություն: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

«Երբ դասի անհատներ կրկնակի պարզև կունենան .նրանցից մեկը կին ստրուկի տերն է, ով լավ վարվելաձև է ուսուցանել նրան և կրթել հնարավոր լավագույն կրոնական ուղղով և ազատ է արձակել նրան և այնուհետ կնության առել:» (Մահիի ալ- Բուխարի #97)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց. «Եթե ձեզանից որևէ մեկի կինը մզկիթ գնալու թույլտվություն է խնդրում, մի արգելեք նրան:» (Մահիի Ալ- Բուխարի #873)

Իսլամը խրախուսում է կնոջը կրոն ուսուցանել,քանի որ նրանք պատասխանատու են իրենց երեխաների

կրթության և դաստիարակության համար: Հայտնի է, որ Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մահից հետո, նրա ուղեկցորդները կրոնական կրթություն և վճիռներ էին փնտրում Աիշայից, նրա կնոջից, ով ըստ Ալլահի Մարգարեյի վավերական պատման, համարվում էր ամենագիտակ մարդկանցից մեկը :

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ԱՂՋԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ և ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղուրանը խստորեն մեղադրում է այս դաժան սովորույթը.

«Եվ, երբ նրանցից որևէ մեկին ավետում են աղջիկ երեխայի ծնունդը, նրա դեմքը մթազնում է և նա լցվում է ներքին վշտով: Նա թաքցնում է իրեն մարդկանցից, իրեն հաղորդված չարիքի պատճառով: Արդյո՞ք նա պետք է պահի նրան անպատվությամբ, կամ թաղի նրան գետնին: Իրոք, չարիքը նրանց որոշումն է:» (16:59)

Նշվում է, որ այս չար հանցագործությունը երբեք չէր դադարի Արաբիայում, եթե չլիներ Ղուրանի խիստ քննադատական պայմանները, որոնք մեղադրում էին այս սովորույթը (16:59, 43:17, 81:8-9) Ավելին, Ղուրանը ոչ մի տարբերություն չի դնում աղջիկների և տղաների միջև: Ի հակադրություն Աստվածաշնչի, Ղուրանը աղջիկ զավակի ծնունդը համարում է Աստծո օրհնություն և պարզև, այնպես ինչպես նաև տղա զավակի ծնունդը: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ասաց. ” Ալլահը արգելել է ձեզ չհնազանդվել մայրերին, կենդանի թաղել դուստրերին և պահպանել մյուսների իրավունքները և հարցնել նրանց: (Մահիհ Մուսլիմ, Իրավաբանական Որոշումների Գիրք #12)

Ղուրանը նույնիսկ նշում է սկզբից աղջիկ գավակի ծննդյան պարզևը.

«Այլահին է պատկանում երկինքների և երկրի իշխանությունը: Նա արարում է, ինչ Նա է ցանկանում: Նա աղջիկ գավակներ է պարզևում նրան, ում Նա է ցանկանում և պարզևում է արու գավակներ նրան, ում Նա է ցանկանում:» (42:49)

Որպեսզի մահմեդական հասարակության մեջ գոյություն ունեցող աղջիկ գավակների մանկասպանությունը վերացնի, Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) խոստացավ նրանց, ովքեր օրհնվել էին աղջիկ գավակներով, մեծ պարզև, եթե նրանց սիրով դաստիարակեն.

«Նա, ով զբաղվում է դուստրերի դաստիարակությամբ և լավ է վերաբերվում նրանց, նրանք կպաշտպանեն նրանց Դժոխքի Կրակից» (Մահիհ Ալ- Բուխարի և Մահիհ Մուսլիմ)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

«Ով երկու աղջիկների պահպանում է մինչ նրանց հասունությունը, նա և էս կգանք Հարության Օրը հետևյալ կերպ և նա միացրեց իր մատները:» (Մահիհ Մուսլիմ)

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ՄՈՐ և ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսլամի մեջ մայրությանը կցված պատիվին, հարգանքին և ինքնագնահատականին հավասարազոր չէ ոչինչ: Ամենաբարձրյալ Աստծոն երկրպագելուց հետո երկրորդ կարևոր բանը ծնողների բարի վերաբերմունքի կարևորությունն է .

«Եվ ձեր Տերը ասել է, որ դուք ոչ ոքի չերկրպագեք բացառությամբ Նրա: Եվ, որ դուք պարտական լինեք ձեր ծնողներին: Եթե նրանցից մեկը կամ երկուսը ծերության են հասնում ձեր կյանքի ընթացքում, ոչ մի անհարգալից խոսք մի ասեք նրանց, ոչ էլ բղավեք նրանց վրա, սակայն դիմեք նրանց պատվով: Եվ խոնարհեք նրանց առջև հնազանդության թևը և փոխարինեք ստարացումը գթասրտությամբ և ասեք. «Իմ Տեր, Պարզևի՛ր նրանց Քո Ողորմածությունը, քանի որ նրանք ինձ մեծացրել են, երբ ես փոքր էի: »» (17:23-24)

Այլ հատվածներում ևս Ղուրանը յուրահատուկ շեշտ է դնում մոր ծննդաբերության և խնամքի մեծ դերի վրա.

«Եվ մենք պատվիրում ենք տղամարդուն լնել պարտական և բարի իր ծնողների նկատմամբ: Նրա մայրը գրկանքով կրում է նրան: Եվ գրկանքով լույս աշխարհ է բերում նրան և նրան կրում և կրծքից կտրում է երեսուն ամիս, մինչ նա հասնում է կատարյալ հզորության և հասնում է քառասուն տարեկան, նա ասում է. «Իմ Տեր, Պարզևի՛ր ինձ հզորություն և ունակություն, որ ես կարողանամ երախտապարտ լինել Քո շնորհի համար, որը Ղու պարզևել ես ինձ և իմ ծնողներին և որ ես ի վիճակի լինեմ անել առաքինի բարի գործեր այնպիսիք, որոնք գոհացնում են Քեզ և բարիք են բերում իմ հետնորդներին: Իրավմամբ ես շրջվել եմ Քեզ զոջմամբ և իրավմամբ ես մահմեդականներից մեկն եմ, հնազանդվել եմ Քո կամքին:» (46:15)

Ալլահը նույնպես ասաց.

«Եվ Մենք պատվիրել ենք տղամարդուն լինել պատասխանատու և բարի իր ծնողների նկատմամբ: Նրա մայրը կրել է նրան դժվարությամբ և տկարությամբ,

դժվարության և տկարության մեջ և նրան կրծքով կերակրել է երկու տարի – շնորհակալ եղեք Ինձ և ձեր ծնողներին: Իմն է վերջնական հանգրվանը:» (31:14)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ալլահը արգելել է ձեր անհնազանդությունը մայրերին, կենդանի թաղել դուստրերին և մերժել մյուսների իրավունքները և պահանջել դրանք...» (Սահիհ Մուսլիմ, Իրավաբանական Որոշումների Գիրքը #12)

Մի տղամարդ եկավ Մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) մոտ թույլտվություն խնդրելու Ջիհադի, այսինքն, մարտնչելու հանուն Ալլահի: Մարգարեն հարցրեց նրան. «Արդյոք ք քո ծնողները կենդանի են:» Նա պատասխանեց, «Այո» Մարգարեն ասաց նրան. «Ճառայիր նրանց:» (Սահիհ ալ Բուխարի նամար 248, հատոր 4)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) կտրականապես զգուշացրել չիսզել բարեկամական կապերը, քանի որ նա ասաց. « Անհատը, ով խզում է բարեկամական կապերը, չի մտնի Դրախտ:» (Սահիհ Ալ- Բուխարի, Հադիս 13, հատոր 8)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց. “Յուրաքանչյուրը, ով տենչում է իր կենսապահովությունը և սերունդը, պետք է բարի հարաբերություններ պահպանի իր մերձավորների և բարեկամների հետ:” (Սահիհ Ալ- Բուխարի, Հադիս համար 281, հատոր 3)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) խորությամբ նկարագրում է մայրերի յուրահատուկ դերը Իսլամում.

«Մի տղամարդ հարցրեց Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) .«Ու՞մ պետք է ես պատվեմ ամենից շատ:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)

պատասխանեց. «Քո մորը:» Եվ, ո՞վ է հաջորդը:» հարցրեց տղամարդը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց. «Քո մայրը:» «Եվ, ո՞վ է հաջորդը:» հարցրեց տղամարդը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց «Քո մայրը:» «Եվ, ո՞վ է հաջորդը» հարցրեց տղամարդը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց՝ Քո հայրը:»» (Բուխարի և Մուսլիմ)

Իսլամում մայրը արժանանում է հարգանքի և լավագույն վերաբերմունքի:

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ԴԱՇՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Իսլամը դաշտանի մեջ գտնվող կնոջը չի համարում «մաքրության բացակայություն ունեցող:» Նա չի համարվում ոչ «անձեռնմխելի», ոչ էլ «անիծված:» Նա շարունակում է իր առօրյա կյանքը, միայն մի քանի սահմանափակումներով. Ամուսնացած զույգերին չի թույլատրվում սեռական հարաբերություն ունենալ դաշտանի ժամանակաընթացքում: Նրանց միջև թույլատրելի է ցանկացած այլ հարաբերություն: Դաշտանի մեջ գտնվող կինը ազատվում է որոշ կրոնական ծեսերից, որոնցից են ամենօրյա աղոթքները և պահքը:

Հաղորդվում է, որ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուղեկցորդներից մեկը նշել է, որ հրեաների մեջ գոյություն ունեին այնպիսիք, ովքեր դաշտանի մեջ գտնվող կնոջ տանը ոչ սնվում էին, ոչ էլ նրա հետ մնում էին այնտեղ: Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուղեկցորդները հարցրեցին Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) դրա մասին և Ալլահը Հզոր և Վսեմ, լուսաբանեց.

« Նրանք հարցնում են քեզ դաշտանի մասին, Ասա.«Այդ վնասակար բան է, հետևաբար, հեռու մնացեք կանանցից դաշտանի ժամանակաշրջանում...» (2:222)

Ալլահի Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն)ասաց.«Ամեն ինչ արեք բացառությամբ սեռական հարաբերության:» (Սահիհ Մուսլիմ, Դաշտանի Գիրք #16)

Հաղորդում են,որ Աիշան,Մարգարեյի կինը ասաց. «Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց ինձ. «Փոխանցիր ինձ մզկիթի խսիրը, որը պատրաստված է արմավենու մանրաթելից :» Ես պատասխանեցի . «Ես դաշտանի մեջ եմ:» Նա ասաց. « Քո դաշտանը քո ձեռքի մեջ չէ:» (Սահիհ Մուսլիմ, Դաշտանի Գիրք# 11)

Հաղորդում են,որ Աիշան ասաց. «Դաշտանի ժամանակ ես ըմպում էի, այնուհետ ես փոխանցում էի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) և նա իր բերանը մոտեցնում էր այն մասին, որտեղ իմ բերանն էր մոտեցել և ըմպում էր: Ես կծում էի ոսկրոտ միսը դաշտանի ընթացքում, այնուհետ ես այն փոխանցում էի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) և նա իր բերանը մոտեցնում էր այնտեղ, որտեղ իմ բերանն էր մոտեցել:» (Սահիհ Մուսլիմ, Դաշտանի Գիրք #14)

Նույնիսկ Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) պառկում էր իր կանանց հետ և մոտենում էր նրանց, ինչպես Աիշան ասաց. «Եթե մեզանից մեկը դաշտանի մեջ էր, Ալլահի Մարգարեն խնդրում էր նրան Իզար, գոտկատեղի ծածկոց դնել,այնուհետ նա մոտենում էր նրան, Իզարի վերևից:» (Սահիհ Մուսլիմ, Դաշտանի Գլխի մասում)

Ինչպես մենք տեսանք, սա բոլորովին հակառակն էր մյուս նավատքների մարդկանց գործողություններին: Այս ապացուցում է,որ Իսլամի մեջ ծայրահեղականություն գոյություն չունի: Իսլամը երկու ծայրահեղությունների միջին ուղղին է:

ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆԸ ԻՆՉ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Քրիստոնեության և Հուդդայականության մեջ, ամուսնալուծությունների խնդրում, Իսլամը նույնպես գրավում է միջին դիրք: Իսլամի մեջ ամուսնությունը սուրբ կապ է, որը չպետք է կոտրել, բացառությամբ անհաղթահարելի պատճառների: Չույզերը պետք է փորձեն բոլոր հնարավոր միջոցները, երբ նրանց ամուսնությունները վտանգի մեջ են: Չի կարելի դիմել ամուսնալուծության, բացառությամբ, երբ այլևս որևէ ելք գոյություն չունի: Արտաքուստ Իսլամը ճանաչում է ամուսնալուծությունը, սակայն խստորեն պախարակում է այն: Եկեք սկզբում կենտրոնանանք ճանաչմանը: Իսլամը ճանաչում է երկու կողմերի իրավունքները, ովքեր ցանկանում են ավարտել իրենց ամուսնական հարաբերությունները: Իսլամը ամուսնուն տալիս է Տալակի, ամուսնալուծության իրավունք: Ավելին, Իսլամը, ի տարբերություն հուդդայականության, կնոջը իրավունք է պարգևում լուծարել ամուսնությունը, Խուլայի միջոցով: Եթե ամուսինը լուծարում է ամուսնությունը իր կնոջից ամուսնալուծվելով, նա չի կարող վերադարձնել նրան տրված ամուսնական որևէ նվերը: Ղուրանը հստակորեն արգելում է ամուսնալուծվող ամուսնուն ետ վերցնել իրենց ամուսնական նվերները անկախ դրանց արժեքի կամ գնի:

« Եթե դուք մտադրություն ունեք փոխարինել կնոջը մեկ ուրիշով և դուք նրան մեծ օժիտ եք տվել, մի վերցրեք որևէ բան դրանից, դուք կվերցնեք այն անօրինական, առանց որևէ իրավունքի և մեղքի դրսևորմամբ:» (4:20)

Այն դեպքում, երբ կինն է ընտրում ավարտել ամուսնությունը, նա կարող է ամուսնուն վերադարձնել ամուսնական նվերները: Այս դեպքում ամուսնական

նվերների վերադարձը արդար փոխհատուցում է ամուսնուն, ով ձգտում է պահպանել իր կնոջը, մինչ դեռ նա ընտրում է լքել նրան: Ղուրանը մահմեդական տղամարդուն պատվիրել է ետ չվերցնել կանանց տրված որևէ նվեր, բացառությամբ այն դեպքի, երբ կինը ինքն է ընտրում լուծարել ամուսնությունը:

« Տղամարդկանց անթույլատրելի է ետ վերցնել իրենց կանանցից որևէ օժիտ, որը դուք եք տվել ձեր կանանց,բացառությամբ երբ երկու կողմերն էլ վախենում են, որ նրանք ի վիճակի չեն լինի պահպանել Ալլահի պատվիրած սահմանները: Այնուհետ, եթե դուք վախենում եք, որ նրանք ի վիճակի չեն լինի պահպանել Ալլահի պատվիրած սահմանները, ապա նրանց վրա ոչ մի մեղք չի լինի, եթե նրանք վերադրձնեն օժիտը ամուսնալուծության դիմաց: Այս սահմաններ են, որոնք պատվիրել է Ալլահը,, այսպիսով մի ոտնահարեք դրանք:Եվ ով ոտնահարում է Ալլահի պատվիրած սահմանները,ապա այդպիսիք չարագործներ են:» (2:229)

Նույնպես մի կին եկավ Մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) մոտ ձգտելով լուծարել իր ամուսնությունը: Նա ասաց Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն), որ ոչ մի բողոք չունի իր ամուսնու բնույթի կամ վարվելաձևի դեմ: Նրա միակ խնդիրը այն է, որ նա անկեղծորեն չի հավանում նրան, այլևս չկարողանալով ապրել նրա հետ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց կնոջը.«Արդյո՞ք դու կվերադարձնես նրան իր այգին,ամուսնական նվերը,որը նա է տվել:» Կինը պատասխանեց. «Այո»: Այնուհետ Մարգարեն պատվիրեց տղամարդուն ետ վերցնել այգին և ընդունել ամուսնության լուծարումը: (Սահիհ ալ Բուխարի)

Որոշ դեպքերում մահմեդական կինը կարող է ցանկություն ունենալ պահպանել իր ամուսնությունը, սակայն ստիպված է խնդրել լուծարում, ելնելով որոշակի ազդեցիկ պատճառներից, ինչպիսիք են. Ամուսնու դաժանությունը, առանց պատճառի լքելը, ամուսնական պարտականությունների չկատարելը և այլն: Այս դեպքերում, մահմեդական դատարանը լուծարում է ամուսնությունը:

Մահմեդական տղամարդը չպետք է ամուսնալուծվի միայն այն պատճառով, որ նա չի հավանում կնոջը: Ղուրանը մահմեդական տղամարդկանց հրահանգում է լինել բարի իրենց կանանց նկատմամբ, նույնիսկ գաղջ զգացմունքների կամ խորշման դեպքում.

« **Օվ, դուք, ովքեր հավատում եք: Ձեզ արգելվում է ժառանգել կնոջը իրենց կամքին հակառակ և դուք չպետք է կոպտորեն վերաբերվեք նրանց, որպեսզի ի վիճակի լինեք վերցնել օժիտի մասը, որը դուք եք տվել, քանի դեռ նրանք չեն գործել բացահայտ սեռական հարաբերություն և ապրեք պատվով նրանց հետ: Եթե դուք խորշեք մի բանից, կարող է նշանակել, որ դուք խորշում եք բանից, որից Ալլահը բարիք է բերում:**» (4:19)

Մարգարե Մուհամմեդը համապատասխան հրահանգ տվեց.

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ոչ մի հավատացյալ տղամարդ չպետք է աստի հավատացյալ կնոջ: Եթե նա խորշի նրա բանվորության մի գծից, նա կարող է գոհանալ մեկ այլով:» (Մահիհ Մուսլիմ, Կրծքով Սնուցման Գիրք #61)

Իսլամը գործնական կրոն է և գիտակցում է, որ գոյություն ունեն հանգամանքներ, երբ ամուսնությունը կարող է հասնել կործանման կետին, հանգամանքներ, երբ բարի խոսքերը և խորհուրդները կենսունակ լուծումներ չեն: Այս դեպքերում, Ղուրանը առաջարկում է մի քանի գործնական խորհուրդներ ամուսիններին, ում զուգրնկերը մեղավոր է: Ամուսնուն, ում կնոջ հիվանդագին վարքագիծը սպառնում է ամուսնությանը, Ղուրանը տալիս է չորս այլընտրանք, որոնք մանրամասնված են հետևյալ տարբերակների մեջ.

« Ինչ վերաբրում է այն կանանց, ում կողմից դուք հիվանդագին վարքագիծ եք տեսնում, խրատեք նրանց սկզբում, այնուհետ մերժեք կլիսել իրենց անկողինը և եթե այդ արդյունք չտա, ապա թեթևակի հարվածեք նրանց, եթե այդ օգտակար կլինի և եթե նրանք հնազանդվեն, մի փնտրեք նրանց դեմ անհանգստություն: Իրոք, Ալլահը Ամենաբարձրյալ, Ամենամեծն է: Եթե դուք վախենում եք կնոջ և տղամարդու միջև եղած խոչընդոտից, ապա նշանակեք երկու միջնորդ, մեկը տղամարդու ընտանիքից և մյուսը կնոջ ընտանիքից, եթե նրանք երկուսն էլ խաղաղություն են ցանկանում, Ալլահը պատճառ կլինի նրանց հաշտեցմանը: Իրոք, Ալլահը Ամենագիտակն է, ամեն քանի Քաջատեղյակն է:» (4:34-35)

Սկզբում պետք է փորձել առաջին երեքը: Եթե դրանք ձախողվեն, այդ դեպքում պետք է փնտրել ընտանիքների օգնությունը: Պետք է նշել, որ ապստամբ կնոջ վերոհիշյալ կարգերով կարգավորելը, ժամանակավոր միջոցառումներ են, որը գործի է դրվում ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, որպես երրորդ ելք, այն հույսով, որ կարող է վերացնել կնոջ սխալները: Եթե դա տեղի ունենա,

ամուսնուն չի թույլատրվում որևէ այլ կերպ շարունակել անհանգստացնել կնոջը, ինչպես նշվել է տարբերակի մեջ: Եթե այդ տեղի չունենա, ամուսնուն այլևս չի թույլատրվում գործածել այս միջոցը և ընտանիքի վերականգնման վերջնակետը սպառվում է:

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) պատվիրել էմահմեդական ամուսիններին, չգործածել այս միջոցները, բացառությամբ ծայրահեղ դեպքերի, որոնցից են կնոջ բացահայտ անառակությունը և անհնազանդությունը : Նույնիսկ այս դեպքերում պատիժը պետք է մեղմ լինի, քանի որ Իսլամը դրել է կանանց կարգապահության ցուցումները և սկզբունքները: Դրանցից են .

- 1 - Նա պետք է թեթևակի ապտակի նրան, ինչպես փոքրիկ երեխայի
- 2- Նա չպետք է հարվածի դեմքին
- 3 –Նա չպետք է հարվածի նրան այնպես, որը կարող է սպի կամ հետք թողնել

Բացի այդ, Իսլամի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մեղադրել է ցանկացած տեսակի անարդար հարվածը: Մի քանի մահմեդական կին բողոքել են նրան, որ իրենց ամուսինները հարվածել են նրանց:Լսելով այդ,Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) կտրականապես հայտարարեց, որ.

« Նրանք, ովքեր այդպես են անում, հարվածում են իրենց կանանց, ձեզանից լավագույները չեն:» (Աբու Դաուդ #2146)

Այս պարագայում պետք է հիշել, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

« Ձեզանից լավագույնը նա է, ով լավագույնն է իր ընտանիքի նկատմամբ և ես ձեզանից լավագույնն եմ իմ ընտանիքի նկատմամբ:» (Ատ-Թիրմիզի# 3895)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) Ֆաթիմա բնթ Քեյս անունով մի մահմեդական կնոջ խորհուրդ տվեց չամուսնանալ մի մարդու հետ, որովհետև նրան գիտեյին որպես կնոջ վրա ձեռք բարձրացնող.

« Ես գնացի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ և ասացի. Աբուլ Ջահմ և Մուավիան մտադրվել են կնության առնել ինձ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) խորհրդի կարգով ասաց. Ինչ վերաբերում է Մուվիային, նա աղքատ է և Աբուլ Ջահմը սովորություն ունի կնոջ վրա ձեռք բարձրացնել:» (Մահիի Մուսլիմ)

Հարկ է նշել, որ Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) երբեք չի դիպչել, հարվածել կամ չար ու անվայել խոսք ասել իր կանանցից որևէ մեկի հետ: Ոչ էլ նա դիպչել կամ սեղմել է որևէ կնոջ ձեռքը, ով նրա բարեկամներից չէր: Քանի որ նա (Խ.Ա.Ո.Ն) օրինակ և նախատիպ է, որին հետևում են մահմեդականները իրենց ամենօրյա կյանքում և արարքներում:

Հարկ է նշել, որ Թավմուտը որպես պատիժ հավանություն է տվել կնոջ վրա ձեռք բարձրացնել, կարգապահություն հաստատելու համար: Ամուսնուն հարկավոր չեն ծայրահեղ պատճառներ, ինչպիսիք են բացահայտ անբարոյականությունը: Նրան թույլ են տալիս կնոջ վրա ձեռք բարձրացնել նույնիսկ, եթե նա միայն մերժում է տնային գործեր կատարել: Ավելին, նա չի սահմանափակվում միայն թեթև պատիժ գործածելով:

Նրան թույլատրվում է կնոջ համառությունը կոտրել խարազանով կամ սովամահությամբ:

Կնոջը, ում ամուսնու վատ վարքը ամուսնական անհանգստությունների պատճառ է, Ղուրանը տալիս է հետևյալ խորհուրդը.

«Եթե կինը վախենում է ամուսնու դաժանությունից կամ լքումից, նրանց երկուսի վրա մեղք չէ, եթե նրանք խաղաղության համաձայնության գան միմյանց հետ և խաղաղության համաձայնությունը ավելի լավ է: Մարդկային ներքին եսը իշխում է ազահությունը: Սակայն, եթե դուք բարիք գործեք և հեռու մնաք չարիքից, իրոք, Ալլահը Քաջատեղյակ է, թե ինչ եք դուք գործում:» (4:128)

Ամփոփելով, Իսլամը մահմեդական ամուսնական գույգերին առաջարկում է ավելի կենսունակ խորհուրդներ, որպեսզի նրանք դժվարության կամ լարվածության դեպքում փրկեն իրենց ամուսնությունը: Եթե ամուսիններից մեկը վտանգում է ամուսնական հարաբերությունները, Ղուրանը հակառակ կողմին խորհուրդ է տալիս անել ամեն հնարավորը և արդյունավետը, որպեսզի փրկեն սուրբ կապը: Եթե բոլոր միջոցները ձախողվում են, Իսլամը գույգերին թույլատրում է խաղաղ և բարեկամաբար բաժանվել:

Ցավոք, շատերը հայտարարում են, որ մահմեդական երկրներում կանանց ճնշում, չարաշահում, բռնաբարում և ձեռք են բարձրացնում և այլն: Ասում են, որ արևմտյան երկրներն են կանանց ազատագրել, իրավունքներ և պաշտպանություն տվել: Ամեն դեպքում, խնդիրը ուսումնասիրելուց հետո, պարզ է, որ ամեն ինչ ճիշտ հակառակն է: Արևմուտքում կնոջ բռնությունը և ճնշումը

մեզ լավ հայտնի մի բան է: Այն չի կարող համեմատվել Մահմեդական Ազգերի հետ: Նույնպես, մահմեդական երկրներում այդ ամենի գոյության պատճառը Իսլամի իրական ուսմունքի տգիտությունն է:

ԿԱՆԱՆՑ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ. Այս երկրում ընտանեկան բռնության արդյուքում ամեն օր չորս կին են մահանում. Ամուսինների և ընկերների սպանության գոհեր և վիրավորներ են դառնում: Ըստ Ֆեդերալ Գործակալության տվյալների, տարեկան մոտավորապես 1,400 կին: Կողակիցներից սպանված կանանց քանակը ավելի շատ է, քան Վիետնամի պատերազմի գոհված զինվորների քանակը:

ԾԵԾ. Չնայած, ըստ պաշտոնական տվյալների հայտարարության, տարեկան գոյություն ունեն միայն 572,000 հաշվետվություններ, ամենապահպանողական հաշվարկները ցույց են տալիս, երկուսից չորս միլիոն կին տարբեր դասակարգերից և ազգերից, տարեկան ծեծի են ենթարկվում: Այդ բռնի միջադեպերից ամենաքիչը 170,000 այնքան լուրջ են, որոնք պահանջում են հոսպիտալացում, շտապ օգնություն կամ բժշկի ուշադրություն:

ՄԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ.

Տարեկան, մոտավորապես 132,000 կին հայտնում են, որ նրանք դարձել են բռնաբարության կամ դրա փորձի գոհ և նրանց կեսը տեղեկություններ ունեն հարձակվողների մասին: Հաշվում են, որ շատ կանայք երկուսից վեց անգամ ենթարկվում են բռնաբարության, սակայն չեն հայտնում

այդ մասին: Տարեկան 1,2 միլիոն կին ստիպողաբար ենթարկվում են բռնաբարության իրենց նախկին կամ ներկայիս գուզընկերների կողմից, ոմքան ավելի քան մեկ անգամ:

ԹԻՐԱԽՆԵՐ. Կանայք կրկնակի ավելի են ենթարկվում սեռական ոտնձգության, քան տղամարդիկ: Երիտասարդ կանայք, մեկուսացված կանայք, ամուսնալուծվածները, միայնակները, ցածր վարձատրվող կանայք և Աֆրո-Ամերիկացիները բռնաբարության և ոտնձգության անհամաչափ զոհեր են: Ընտանեկան բռնությունների գործակիցը հինգ անգամ ավելի բարձր է այն ընտանիքներում, որոնց աղքատության գործակիցը ցածր է և գործազուրկ տղամարդիկ երկու անգամ ավելի շատ են ոտնձգություն կատարում, քան նրանք, ովքեր աշխատում են:

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՎՐԱ. Բռնի անչափահասների հավանականությունը, ովքեր մեծացել են բռնություն տեսած ընտանիքներում, չորս անգամ ավելի մեծ է: Երեխաները, ովքեր ականատես են եղել տնային բռնության չափահասության ընթացքում, հինգ անգամ ավելի մեծ հավանականություն ունեն գործելու կամ ենթարկվելու բռնության :

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Կանայք, ովքեր ենթարկվել են ծեծի, կրկնակի կարիք ունեն առողջական պահպանման և ծախսերի, քան նրանք, ովքեր երբեք չեն ենթարկվել: Հղի կանանց մոտավորապես 17 տոկոսի զեկուցում են, որ նրանք ենթարկվել են ծեծի, որի արդյունքն է վիժումները, մեռելածնությունը և թերհաս մանուկներ ունենալու կրկնակի կամ քառակի հավանականությունը: Անօթևան և ինքնասպան գոհերի շարքում համաչափ ներկայացված են ոտնահարված կանայք: Որոշ նահանգներում ընտանեկան բռնության գոհերին մերժում են ապահովագրությունը, որովհետև համարվում է, որ նրանք ունեն «նախընտրական գոյության վիճակ»:

Խնդրում ենք դիտել էջ.56 վիճակագրությունը:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԻՍԼԱՄԸ ԱՅՐՈՒ ԿԱՍ ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Ի տարբերություն մյուս փոփոխված գրքերի, հանձինս Թորայի, Աստվածաշնչի և Կտակարանների, Ղուրանը պարզաբանում է, որ այրիները և ամուսնալուծվածները ազատ են ամուսնանալու իրենց ընտրյալի հետ:

Ղուրանը այրիներին և ամուսնալուծվածներին խարան չի ամրացնում.

« Եվ, երբ դուք ունեք ամուսնալուծված կանայք և նրանք լրացնում են իրենց սահմանված ժամանակաշրջանը, կամ վերադարձրեք նրանց ողջամիտ հիմունքներով կամ ազատեք նրանց ողջամիտ հիմունքներով: Սակայն մի վերադարձրեք նրանց վիրավորելու համար և ով այդպես

անի, ապա նա վնասել է իրեն: Եվ մի վերաբերվեք Տարբերակներին և Օրենքներին Ալլահի որպես ծաղր, սակայն հիշեք Ալլահի շնորհը ձեզ և այն, ինչ Նա ուղարկել է ձեզ Ղուրանից և Մարգարեյի ուղղիներից, որով նա հրահանգում է ձեզ: Եվ վախեցեք Ալլահից և իմացեք, որ Ալլահը ամենի Քաջատեղյակն է :» (2:231)

« Եվ նրանք ձեզանից, ովքեր մահկանացուն են կնքում և թողնում են կանայք իրենց ետևից, կանայք պետք է սպասեն ամուսնության չորս ամիս և տաս օր, այնուհետ, երբ նրանք լրացնում են իրենց ժամանակաշրջանը, ոչ մի մեղք չկա ձեզ վրա, եթե կանայք անեն, ինչպես նրանք են ցանկանում, կապված ամուսնության հետ, արդար և պատվելի ձևով: Եվ Ալլահը Քաջատեղյակ է, թե դուք ինչ եք գործում:» (2:234)

« Եվ նրանք ձեզանից, ովքեր մահկանացուն են կնքում և ետևից կանայք են թողնում, պետք է թողնեն իրենց կանանց մեկ տարվա ապահովություն և կացություն առանց դիմելու նրանց, սակայն, եթե կանայք հեռանան, ոչ մի մեղք չկա ձեզ վրա, քանի որ այն, ինչ նրանք անում են իրենց, ներկայացնում է պատվելի օրինական ամուսնություն: Եվ Ալլահը Ամենահզոր, Ամենափմաստունն է:» (2:240)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Անձը, ով խնամում է այրու կամ աղքատի նման է Մուջահիդի, զինվորի, ով մարտնչում է հանուն Ալլահի, կամ նրա, ով աղոթքներ է ներկայացնում ամբողջ գիշեր և պահք է պահում ամբողջ օրը:» (Մահիի Ալ-Բուխարի, Հադիս համար 265, հատոր 7)

Ըստ էության, Մարգարեյի բոլոր կանայք մինչ այդ ամուսնացած են եղել, բացառությամբ նրա կին Աիշայի, թող Ալլահը գոհանա նրանցով:

Այսպիսով ի՞նչ էք դուք այժմ կարծում: Հուսանք, որ մենք պարզաբանել ենք որոշ թյուրըմբռումներ և թյուրիմացություններ, որը մենք ունեյինք Իսլամի մասին: Եվ հուսանք, որ մենք ավելի լավ ենք հասկանում կնոջ դերը Իսլամում:

Այսպիսով, եկեք նշենք մի քանի բան, որ Իսլամը արել է կնոջ համար և հիշենք, որ այս ուսմունքները և օրենքները հայտնվել են Մարգարե Մուհամմեդին 14 դար առաջ և իրական մահմեդականները կիրառում են դրանք այսօր:

Իսլամը Ալլահի առջև, հավասարեցրեց կնոջը և տղամարդուն

Իսլամը մեղադրեց կնոջ ճնշման և նվաստացման նախաիսլամական կիրառումը:

Իսլամը կնոջը տվեց ժառանգության և անհատական անկախ սեփականության իրավունք, առանց հոր, ամուսնու, եղբոր, որդու կամ որևէ մեկի խոչընդոտների:

Իսլամը կնոջը տվեց իրավունք առանց ճնշման ընդունել կամ մերժել ամուսնական առաջարկը

Իսլամը ամուսնության դեպքում կնոջից չի պահանջում փոխել իր անունը:

Իսլամը պաշտպանում է ընտանիքը և դատապարտում է ամուսնական հավատարմության դավաճանությունը: Այն ճանաչում է միայն մեկ տեսակի ընտանիք. Ամուսին և կին, ովքեր միացած են վավերական ամուսնական պայմանագրով:

Իսլամի կարևոր գործոն է ծնողներին պատվելը, հարգելը հնազանդվելը և նրանց մասին հոգ տանելը:

Մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) ուսմունքն է. «Լավագույնները ձեզանից ամենաբարին են իրենց կանանց նկատմամբ և ես ձեզանից լավագույնն եմ իմ ընտանիքի նկատմամբ:»

Իսլամը հրահանգում է մտածելակերպի, վարքագծի և արտաքինի բարձր բարոյականություն: - Նորաձևությունը և սոցիալական դրվագները, որոնք կնոջը վերածում են սեռական առարկայի և ենթարկում են շահագործման, որպես այդպիսին Իսլամում անընդունելի են:

Իսլամը պահանջում էն տղամարդկանց և կանանց պահպանել ողջախոհությունը և բարոյական չափանիշները:

Իսլամը կամ նրա գիտնականները չեն հայտնագործել ծածկվելը կամ գլխաշորը, ոչ էլ այն սովորույթ է: Այն Ալլահի պատվիրանն է, որը ամրապնդել է Իսլամը: Գլխաշորը պաշտպանում և օգնում է կնոջը, ներկայացնում է նրա արժանապատվությունը և հարգանքը և պահպանում է ամուսնու և կնոջ սերն ու ջերմությունը:

Իսլամը արգելում է կանանց, երեխաների և ծերերի սպանողը, նույնիսկ պատերազմի ժամանակ: Ասում են. «Պատմությունը չի տեսել ավելի ողորմած զավթիչ, հաղթող կամ արշավող, քան մահմեդականներն են:»

Իսլամը արգելում է առանց էական ապացույցների կնոջ չար և հիվանդագին վարքի նույնիսկ կեղծ մեղադրանքները:

Իսլամը այնքան շատ բան ունի առաջարկելու մեր աշխարհին, որը բարոյական ուղղորդության և առաջնորդման մեծ կարիք ունի:

Դեսպան Հերման Էյլթսը, 1985 թվականի հունիսի 24-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի Արտաքին Կապերի պալատի Ներկայացուցիչների առջև արած վկայության մեջ ասում է . «Երկրագնդի մահմեդական համայնքը հասնում է մեկ բիլիոնի: Այն ազդեցիկ է: Մակայն ինձ համար հավասարապես ազդեցիկը այն է, որ այսօր Իսլամը ամենաարագ աճող միաստված կրոնն է: Սա մի բան է, որը մենք պետք է հաշվի առնենք: Ինչ որ բան ճիշտ է Իսլամում: Այն բազմաթիվ մարդկանց է գրավում: »

Այսպիսով մի խաբվեք կամ շեղվեք տեղեկատվությունից, որը բացասական բաներ է ասում Իսլամի և մահմեդականների մասին: Ինքներդ ընթերցեք: Գիտակցեք, որ Իսլամը բարձրացրել է կնոջը և ըստ արժանավույն նրան պատիվ և հարգանք է տվել: Այժմ դուք գիտեք, որ Իսլամը ծայրահեղ կրոն չէ: Այսպիսով, մի նայեք ծայրահեղականների և տգետ մարդկանց արարքներին և ասեք, որ «Իսլամն է նրանց այդ ուսուցանել:» Յուրաքանչյուր բանական մարդ կարող է համաձայնվել, որ չի կարելի վրդովել կամ դատել մի ամբողջ կրոն կամ ազգ, հիմնվելով տգետների արարքներին, ովքեր ձևացնում են մի բան, որ նրանք չեն:

Իսլամի բացասական նկարագիրը համաշխարհային տեղեկատվության մեջ պետք է ավարտվի և մարդիկ հավաստի աղբյուրների տեղեկությունների կարիք ունեն: Վերջապես և սակայն ոչ պակաս կարևոր է, որ ոչ մահմեդականները գիտակցեն մի պարզ փաստ, որ մի քանի մահմեդականների տգետ արարքները, ինքնասպանությունը, անմեղ մարդկանց սպանողը, կանանց և երեխաների ահաբեկչական

գործողությունները չեն ներկայացնում Իսլամը և Իսլամը և մահմեդականները հեռու են այս չար արարքներից:

Այսպիսով, եթե դուք հետաքրքրված եք իմանալու և ընդունելու ճշմարտությունը, մի վախեցեք, ամաչեք կամ հուզվեք: Հնազանդվեք մեկին, ով արարել է ինձ, ձեզ և ամեն գոյությունը, Ամենաողորմած Ալլահին:

Միգուցե դուք հարց եք տալիս, թե «Ի՞նչ պետք է ես անեմ, եթե ցանկանում եմ դառնալ մահմեդական:»

Առաջին քայլը պետք է հավատալ, որ Ալլահը միակ և եզակի, ճշմարիտ Աստվածն է, ով միայնակ արժանի է երկրպագության, Նա չունի գուգրնկերներ, միջնորդներ, որդիներ:

Երկրորդ, պետք է հավատալ որ մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) Ալլահի վերջին մարգարեն է: Այս ամենի անկեղծ հավատքով և արաբերեն ասելով Աշ-հադու ան լա, իլահա իլալլահ ուա աշ հադու աննա մուհամադան ռասուլուլլահ, դուք դառնում եք մահմեդական:

Արդյո՞ք դուք գիտեք

ԱՄՆ-ում կանանց Իսլամի նորադարձությունը գերազանցում է տղամարդկանց, 4-ը 1 հարաբերակցությամբ:

Հեշտ է, դուք կարող եք անել այդ:

Եվ մենք խնդրում ենք Ամենաողորմած Ալլահին ընդունել մեզանից այս աշխատանքը և այն դարձնել անկեղծ, միայն հանուն Իր գոհունակության և բավարարման: Մենք խնդրում ենք, որ Նա այս հրատարակությունը շահեկան դարձնի բոլոր մարդկանց: Վերջապես, այստեղ գտնվող

յուրաքանչյուր իսկությունն միայն Ալլահից է և յուրաքանչյուր սխալ մեզանից: Ալլահը, Նրա Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) և Իսլամը զերծ են դրանից և մենք ներում ենք հայցում Ալլահից:

Ուշադրություն. Տեղեկատվությունը տարբեր աղբյուրների, անգլերեն ինչպես նաև արաբերեն տեքստերի համակցություն է: Յուրաքանչյուր առաջարկ, մեկնաբանություն կամ ուղղում խնդրում ենք ուղարկել հետևյալ էլ- հասցեյով darulitibaa@hotmail.com

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Ընտանեկան բռնությունը զեկուցված բոլոր բռնի հանցագործությունների մեկ քառորդն է կազմում: (Աշխատանքային Կուսակցության Ձեկույց, Ձոհերի Աջակցություն 1992)

- Տարեկան 100,000 կին Լոնդոնում ձգտում են ընտանեկան բռնությունների արդյունքում առաջացած վնասվածքների բուժման: (Փանչինգ Ջուդի, BBC հեռուստատեսության փաստագրություն, 1989)
- Ընտանեկան բռնությունը չի սահմանափակվում ֆիզիկական գործով: Այն ներառում է սեռական ոտնձգությունը և մտավոր դաժանությունը, որը քայքայում է կնոջ ինքնագնահատականը: (Մաքգիբբոն և Քելլի, «Կանանց Տնային Ոտնձգությունը» 1989)
- Ըստ ոստիկանական հետազոտության, բոլոր տղամարդկանց 2/3 հավատում են, որ նրանք որոշակի իրավիճակներում բռնություն կգործադրեն իրենց զուգընկերների վրա: (Ինլիգբոնի Խորհուրդ 1994)
- Կանանց սպանությունների համարյա կեսը գործում են նրանց նախկին զուգընկերները: (Ընտանեկան Բռնությունների Ազգային Աշխատանքային Կուսակցության Ձեկույց, Ձոհերի Աջակցություն, 1992)
- ԱՄՆ-ում տարեկան 2-ից 6 միլիոն կին ենթարկվում են ծեծի:
- 15-44 տարեկան կանանց վնասվածքների հիմնական պատճառը ծեծն է:

- Չորս հղի կանանցից մեկը ծեծի է ենթարկվում: Հղիության ընթացքում այն կարող է սկսվել կամ ծավալվել:
- Ընտանեկան բռնությունների բժշկական ընդհանուր ծախսը կազմում է տարեկան 3 բիլիոն և արտադրությունը կորցնում է այլ 100միլիոն հիվանդի արձակուրդների, բացակայությունների և արտադրողականության վրա:
- Յոթ աղջիկներից մեկը ենթարկվում է սեռական ոտնձգության ընկերոջ կողմից և շատերը իրենց ամուսիններից:
- Մեծ տարածում ունի սիրատաժման ընթացքում տեղի ունեցող բռնությունները, որոնք կանայք և տղամարդիկ չեն հաղորդում: Ավագ Դպրոցի ուսանողների 30 % ժամադրությունների ընթացքում ունենում են ֆիզիկական և սեռական ոտնձգություններ: Տղամարդկանց 37 % և կանանց 35 %, իրենց սիրահետման ընթացքում, ենթարկվել են որևէ ֆիզիկական բռնության:
- Կանայք ունենում են ավելի շատ վնասվածքներ, քան տղամարդիկ և նրանք ենթակա են անցանկալի սեռական ոտնձգության կրկնակի կամ եռակի ավելի:
- Համալսարանի կամ դպրոցի տարածքում տեղի ունեցող բռնությունների 95 % պատճառը ոգելից խմիչքները և թմրանյութերն են:
- Բռնաբարության մեղավորների 37 % և զոհերի 55 % գործածել են ոգելից խմիչք և թմրանյութ:
- Տարեկան, աշխատավայրերում կանանց դեմ տեղի են ունենում 13,000 բռնություն, որոնք գործում են

ամուսինները և ընկերները:(Ամերիկայի Միացյալ Նահանգների Արդարադատության Բաժին, 1994)

- 1995 թվականի տվյալներով, մոտ 1.7 միլիոն կին, իրենց զուգընկերների կողմից ենթարկվում են ֆիզիկական բռնության, ամեն 12 վայրկյանը, մեկ կին (Հետազոտությունների Ֆեդերալ Բյուրո)
- 1992-ից մինչ 1993 թվականները կանանց դեմ մոտ 4.5 միլիոն բռնություն է տեղի ունեցել: (Արդարադատության Բաժինը տեղեկացնում է, որ պատճառը ընտանեկան և ընդհանուր բռնությունների թերագնահատումն է): (Արդարադատության Բյուրոյի Վիչակագրության բաժին, Ազգային Հանցագործության Հետապնդման Հետազոտություն):
- Իրենց կյանքի ընթացքում կանանց 50 % որևէ բռնի հարաբերության մեջ են ներառվում: Մենք պետք է որ խոսենք ձեր դուստրերի, մայրերի, կանանց և ընկերուհիների մասին:
- Ավագ Դպրոցի ուսանողների 30% սիրահետման ընթացքում ենթարկվել են ֆիզիկական կամ սեռական ոտնձգության:
- Տղամարդկանց 37% և կանանց 35% ենթարկվել են ֆիզիկական բռնության իրենց զուգընկերների կողմից:
- Չեկուցված ամեն 1 բռնաբարության հետ, 10 –ը զեկուցված չէ:
- Ըստ ամենապահպանողական գնահատականի, տարեկան 1 միլիոն կին ենթարկվում են ոչ ճակատագրական սեռական բռնության (Արդարադատության Վիճակագրության Հատուկ Չեկույցի Բյուրո. Բռնություն կանանց

դեմ, Վերանայված Հաշվարկների Բյուրո 154348)
(Օգոստոս 1995 թվական, էջ.3)

- Այլ գնահատականները ներկայացնում են, որ 4 միլիոն ամերիկացի կին ենթակվում են լուրջ սեռական ոտնձգության իրենց զուգընկերների կողմից 12 ամսվա ժամանակահատվածում: (Ամերիկյան Հոգեբանական Կազմակերպություն, Բռնությունը և Ընտանիքը, Ամերիկյան Հոգեբանական Կազմակերպության Նախագահական Առաջադրանք ընդդեմ ընտանեկան բռնության) 1996, էջ.10
- 3 Չափահաս կանանցից մեկը. չափահասության ընթացքում գոնե մեկ անգամ ենթարկվում է բռնության: (Ամերիկյան Հոգեբանական Կազմակերպություն. Բռնությունը և Ընտանիքը. Ամերիկյան Հոգեբանական Կազմակերպության Նախագահական Առաջադրանք ընդդեմ ընտանեկան բռնության 1996, էջ.10)
- 1993 թվականին մոտ 575,000 տղամարդ է ձերբակալվել կնոջ դեմ բռնության մեղադրանքով, մոտավորապես 49,000 կին է ձերբակալվել տղամարդկանց դեմ գործած բռնության մեղադրանքով: (Ամերիկյան Հոգեբանական Կազմակերպություն. Բռնությունը և Ընտանիքը. Ամերիկյան Հոգեբանական Կազմակերպության Նախագահական Առաջադրանք ընդդեմ ընտանեկան բռնության 1996, էջ.10)
- Ընտանեկան բռնությունը վիճակագրականորեն հետևողական է ռասսայական և էթնիկ սահմաններին: (Արդարադատության Վիճակագրության Բյուրոյի Հատուկ Զեկույց.

Կանանց դեմ Բռնությունը. Հաշվարկներ Վերանայված Ուսումնասիրություն 154348 Օգոստոս 1995, էջ.3)

- Ընտանեկան բռնությունների 90-95 % զոհերը կանայք են: (Արդարադատության Վիճակագրության Ընտրված արդյունքներ. Զուգընկերների բռնություն -149259 Նոյեմբեր 1994)
- Կանանց բռնությունների մեծամասնությունը տեղի է ունենում որպես ինքնապաշտպանություն և ավելի քիչ վնաս է պատճառում,քան տղամարդկանց բռնությունը: (Չակ և Քինգ, Բռնությունները Ընտանիքներում, Կանխարգելման գնահատում և Վերականգնողական Ծրագրեր, Ազգային Աղբյուրների Խորհուրդ և Բժշկության Հաստատություն, էջ. 42, 1996)
- Կանանց վրա ձեռք բարձրացրած տղամարդկանց 47 % այդ անում են տարեկան 3 անգամ:(Ախտորոշիչ և Վերականգնողական ուղեցույցներ կապված Ընտանեկան Բռնությունների հետ SEC94-677,3M 9/94 1994)
- Տանը,որտեղ տեղի է ունենում ոտնձգություն,երեխաների ոտնձգությունների հավանականությունը մեծանում է 1,500 անգամ: (Արդարադատության Բաժին, Արդարադատության Օժանդակության Բյուրո, Ընտանեկան Բռնություն, Արդարադատության Համակարգի Միջամտություններ, 1993)
- Հղի դեռահասների 26 % զեկուցում են,որ նրանք ենթարկվում են ֆիզիկական ոտնձգության իրենց զուգընկերների կողմից, նրանց կեսը ասում են, որ ծեծը սկսում է կամ հրահրվում է այն բանից հետո, երբ պարզվում է, որ նրանք հղի են : (Բրուստին, Ս.

- Իրավական Պատասխան Դեռահասների Բռնության Ժամադրություններին, Եռամսյակային Ընտանեկան Իրավունք, հատոր 29, համար 2, 333-334 Ամառ 1995, վկայակոչելով Ութրսեսթեր, Ավելի թաքնված Հանցագործություն, Դեռահաս Ծեծված Կանայք, Ցանցի Նորություններ, Հուլիս, Օգոստոս, Միջազգային Կանանց Առողջական Ցանց 1993)
- Իգական սեռի զոհերի բռնությունը 2.5 անգամ ավելի հակված է վնասների, երբ այն կատարվում է մերձավորի կողմից, քան երբ այն կատարվում է օտարի կողմից: (Արդարադատության Վիճակագրության Բյուրոյի հատուկ զեկույց, Բռնություն ընդդեմ Կանանց. Հաշվարկներ Վերանայված Ուսումնասիրություններից. 154348, Օգոստոս 1995, էջ.4)
 - Ընտանեկան բռնությունը շարունակական շրջան է, որի արդյունքի դաժան վնասները ժամանակի հետ մեծանում են, ծեծված կանայք ավելի հաճախ են դիմում բժիշկների: (Երեխաների Ապահովության Ցանց, Ընտանեկան Բռնություն, Առողջապահության Արձանագրությունների Սպասարկողներ 1992, էջ.1)
 - Ինտիմ սպանությունների զոհերի 65% նախքան իրենց մահը մեկուսացվել են հանցագործից: (Ֆլորիդայի Մարզպետարանի առաջադրանքի Իշխանություն ընդդեմ Ընտանեկան և Սեռական Բռնության, Ֆլորիդայի Բարոյականության Վերանայման Նախագիծ, 1991, էջ.47. աղյուսակ 17)
 - Ընտանեկան Բռնությունների զոհերի 88% ֆիզիկական ոտնձգության փաստագրական պատմություն ունեն: (Ֆլորիդայի Մարզպետարանի առաջադրանքի Իշխանություն ընդդեմ Ընտանեկան

- և Սեռական Բռնության, Ֆլորիդայի Բարոյականության Վերանայման Նախագիծ 1997, էջ. 46-48, աղյուսակներ 14-21)
- Ինտիմ սպանությունների զոհերի 44% նախօրոք սպանված են ստացել մարդասպանից: 30 % նախօրոք զանգեր են ունեցել ոստիկանությունում: 17% պաշտպանության հրամաններ են ունեցել: (Ֆլորիդայի Մարզպետարանի առաջադրանքի Իշխանություն ընդդեմ Ընտանեկան և Սեռական Բռնության, Ֆլորիդայի Բարոյականության Վերանայման Նախագիծ 1997, էջ. 46-48 աղյուսակներ 14-21)
 - Ամեն ինն վայրկայնը մեկ, ծեծի է ենթարկվում իգական սեռի ներկայացուցիչը: (Գալիֆորնիայի Դաշինքը ընդդեմ Ընտանեկան Բռնության 1994)
 - Ըստ հաշվարկի, ավագ դպրոցի և քոլեջի ուսանողները, մինչ ավարտելը, եղել են ոտնահարող հարաբերության մեջ : (Լեվի, 1992)
 - 15-44 տարեկան կանանց վնասվածքների հիմնական պատճառը հարաբերությունների ընթացքում տեղի ունեցող բռնություններն են, ավելի քան բռնաբարությունները, կողոպուտը և ավտոմեքենայի վթարները միասին վերցրած: (Համայնքային Լուծումների Կենտրոն 1997)
 - Ամերիկայի Միացյալ Նահանգներում կենդանիների համար նախատեսված կացարանները եռակի ավելի շատ են, քան ծեծված կանանց համար ապաստանները: (Սենատի Դատական Կոմիտե, 1990)
 - 11-ից 20 տարեկան տղաների 63 % ձերբակալվել են իրենց մայրերին նվաստացնող տղամարդկանց

- սպանության մեղադրանքով: (Համայնքային Լուծումների Կենտրոն, 1997)
- Ավելի քան 15 միլիոն կին իրենց կյանքի ընթացքում մի քանի անգամ ենթարկա են ոտնահարման: (Նախկին Վիրաբույժ, Գեներալ Ք. Էվերեթ Քուլի, 1989)
 - Ծեծի ենթարկված կանանց ավելի քան մեկ քառորդից մինչ երկու երրորդի զեկույցի չարաշահումը տեղի է ունենում հղիության ընթացքում:(«Ծեծված և Հղի,Տարածքային Ուսումնասիրություններ» Ամերիկյան Հասարակական Առողջապահական Կազմակերպության Ամսագիր)
 - 1.200 սպիտակ, իսպանախոս և սևամորթ հղի կանանց հեռանկարային ուսումնասիրության ընթացքում,վեցից մեկը հղիության ընթացքում ենթարկվել է ֆիզիկական բռնության:(«Հղիության Ընթացքում ոտնձգություն,Ծանր վնասվածքների և Հաճախականության Միջմշակույթային ուսումնասիրություն» Ջ.Մաքֆարլայն 1991)
 - Միջին չափով ծեծի ենթարկված կինը, տարեկան երեք անգամ հարձակման զոհ է դառնում: (Ինտիմ Բռնություն, Ռ. Գելես և Մ. Ստրաուս 1988)
 - Ամերիկայի Միացյալ Նահանգներում շտապ օգնության բաժիններ այցելող կանանց 22-ից 35 տոկոսը այնտեղ են հայտնվում շարունակական ոտնձգությունների պատճառով:(«Ընտանեկան Բռնության Միջամտությունը Կոչ է անում Ավելի քան Սպառնացող Վնասների» Ամերիկյան Բժշկական Կազմակերպության Ամսագիր, 1990)
 - Ընտանիքները, որտեղ տեղի են ունենում ընտանեկան ոտնձգությունները, ութ անգամ ավելի

շատ են դիմում բժշկի, վեց անգամ ավելի շատ են այցելում շտապ օգնության սենյակ և դեղատոմսով վեց անգամ շատ դեղեր են վերցնում, քան ընդհանուր բնակչությունը: («Ընտանեկան Բռնություն, Համայնքային Ճգնաժամը Սպասում է Արդյունավետ Պատասխանի» Սիեթլի Ընտանեկան Ոսնձգության Միջամտություն, 1989)

ՋՈՆԵՐԻ և ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Էջ.35)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

2004 թվականին, Ջոն Ջեյի Ձեկույցը, որը հանձնարարել էր ԱՄՆ-ի Կաթոլիկ Արքեպիսկոպոսների Համաժողովը, հիմնված էր հարցումների վրա, որոնք ավարտվել էին ԱՄՆ-ի Հռոմեական Կաթոլիկ թեմերի մեջ: Հարցումները գտված կարգով տեղեկություններ են տրամադրել թեմի ֆայլերից, յուրաքանչյուր քահանայի մասին, ով մեղադրվել է սեռական ոսնձգության մեջ և քահանայի յուրաքանչյուր գոհի հետազոտության թիմի մասին, մի ձևաչափով, որը չի բացահայտում մեղադրվող քահանայի անունը կամ թեմը, որտեղ նա աշխատել է: Այս թեմերին խրախուսում էին իրենք իրենց թողարկել զեկույցներ, որոնք հիմնված էին իրենց ավարտած ուսումնասիրությունների վրա:

Ջոն Ռեյի 2004 թվականի զեկույցը հիմնված էր 10,667 մեղադրանքների վրա ընդդեմ 4,392 քահանայի, ում մեղադրում էին 1950-ից 2002 թվականների ժամանակահատվածը ընկած անչափահասների սեռական ոսնձգությունների մեջ: 4,392 թիվը այդ ժամանակ

կազմում էր 109.694 քահանաների ակտիվ նախարարությունների չորս տոկոսը: (Տես հետևյալ հղումները. « Նախագծային հետազոտություն.4,450 քահանայի մեղադրում են սեռական ոտնձգության մեջ:» CNN փետրվար 17, 2004: Ամերիկայի Միացյալ Նահանգներում Կաթոլիկ քահանաների և թեմերի անչափահասների սեռական ոտնձգության խնդրի բնույթը և ոլորտը:” Ջոն Ջեյ Հանցագործ Արդարության Քոլեջ)

Մոտավորապես 56 տոկոսը, նրանց դեմ ուներ մեկ զեկույց մեղադրանք, 27 տոկոսը ուներ երկու կամ երեք մեղադրանք նրանց դեմ, մոտ 14 տոկոսը ուներ չորսից իննը մեղադրանք նրանց դեմ, 3 տոկոսը, 149 քահանա, ունեին 10 կամ ավելի մեղադրանք նրանց դեմ:Այդ 149 քահանաները պատասխանատու էին մոտ 3,000 զոհերի կամ 27 տոկոս մեղադրանքների համար:(Ռիխտե, Թոմաս Ջ. 2004-03-22: Փաստեր, Առասպելներ և Հարցեր:” Ամերիկա, վերցված 2009-07-29)

- Մեղադրանքները հիմնավոր էին 1,872 քահանաների և անհիմն էին 824 –ի համար:Նրանք վստահելի էին 1,671 քահանայի և անվստահելի 345 –ի համար:298 քահանայի և թեմի,ովքեր լիովին արդարացված էին,չէին ներառել ուսումնասիրության մեջ:
- Առաջին ենթադրյալ չարաշահման ժամանակ, հիսուն տոկոսը 35 տարեկան կամ ավելի երիտասարդ էին : (Տես նախորդ հղումը)
- Համարյա 70 տոկոսը ձեռնադրվել էին մինչ 1970 թվականը:(Տես նախորդ հղումը)
- Ոչ ավել քան 7 տոկոսը զեկուցում են,որ նրանք ինքներն են դարձել ֆիզիկական, սեռական կամ զգացմունքային ոտնձգության զոհեր: Չնայած 19

տոկոսը ունեն ոգելից խմիչքի կամ թմրանյութի խնդիրներ, միայն 9 տոկոսն է զեկուցում, որ բռնության դեպքերի ընթացքում գործածել են ոգելից խմիչք կամ թմրանյութ: (Տես նախորդ հղումը)

6 տոկոսը մանկապիղծներ, 15 տոկոսը միայն 11 և 12 տարեկան են և արական և իգական սեռը, 20 տոկոսը անխտրական են և 27 տոկոսը մեղմ անխտրական: (Խնդրում ենք տես. Քարթոր, Քիմբոլիք և Թալլոն 2008: Հոգևորական հանցագործների Մանկապղծության և Էմֆեթոլիայի տարբերությունները: Սեռական կախվածություն և Պարտադրողականությունը. Հատոր 15, Դրույթ 4, էջ. 311-319)

Այս ժամանակահատվածում հաղորդվում է մոտ 10,667 հոգևորական սեռական ոտնձգության զոհերի մասին:

- Այս զոհերի 81 տոկոսը արական սեռի են:

22,6 % 10 տարեկան կամ ավելի փոքր են, 51% 11 և 14 տարիքային սահմանում են և 27% 15 մինչ 17 տարիքային սահմանում: ((Ռիզ, Թոմաս Ջ 2004-03-22): «Փաստեր, Առասպելներ և Հարցեր:» Ամերիկյան Վերստեղծվում է 2009-07-29, Բոնո. Ազոստինո: Ջոն Ջեյ Ուսումնասիրություն, Ոտնձգության բողոքի Խնդիրը: Ջոն Ջեյ, Հանցագործ Արդարության Քոլեջ: Միացյալ Նահանգներում կաթոլիկ քահանաների և թեմերի փոքրամասնությունների սեռական ոտնձգության խնդիրների բնույթը և գործողությունները. 4.3 Երեխաների բնութագրերը, ովքեր ենթարկվել են կաթոլիկ քահանաների սեռական ոտնձգություններին, էջ. 69)

- Այս ժամանակահատվածում նույն անչափահաս երեխաների մոտ 2000 զգալի քանակը, քահանաների զոհ են դարձել:
- 9,281 զոհերի ամփոփումը ցույց է տալիս, որ նրանք տեղյակ են հետաքննությունից: 6,696, 72 % դեպքում հարցի հետաքննությունը իրականացվում էր սուր: Դրանցից 4,570, 80% ապացուցված են, 1,028, 18% ապացուցված չեն, 83 1.5 % կեղծ են եղել: 56 դեպքերում քահանաները հերքել են մեղադրանքը:
- Այդ մեղադրանքների մոտ 10 տոկոսը մեկնաբանվել են որպես անապացույց: Սա չի նշանակում, որ մեղադրանք կեղծ է, միայն նշանակում է, որ թեմը կամ ուխտը, չեն կարող որոշել, թե արդյոք ոտնձգությունը տեղի է ունեցել:
- Քանի որ մեղադրանքների 20 տոկոսի դեպքում, քահանան կնքել է մահկանացուն կամ պասիվ է այդ ժամանակաընթացքում և ըստ այդմ, որպես կանոն ոչ մի հետաքննություն չի իրականացվում:
- Մեղադրանքների 38,4 % դեպքում, ոտնձգությունը կատարվել է մեկ տարվա ընթացքում, 21,8% դեպքում, ոտնձգությունը տևել է ավելի քան մեկ տարի, սակայն ավելի քիչ քան 2 տարի, 28% դեպքում 2-ից 4 տարի, 10.2 % դեպքում 5 և 9 տարի և 1% դեպքում 10 և ավելի տարիներ:

Ձեկուցված արարքները, սեռական ոտնձգությունները ներառում են շոյանք կամ անսպասելի ոտնձգություն: Նաև գոյություն ունեին ավելի մեծ ոտնձգությունների քանակական մեղադրանքների աճ, որոնք ներառում են սեռական և օրալ սեռական հարաբերություն: Ձեկուցված մեղադրանքների 26,6 % դեպքում, մանրամասն

բնութագրություն տրված չէ: Մեղադրանքների 27,3 % ներառում են զոհի օրալ սեռական հարաբերության հոգևորական ներկայացում: Մեղադրանքների 25,1% ներառում են առնանդամի թափանցելիություն կամ դրա փորձ: Չնայած տարեկան զեկուցվում են փոքրամասնությունների սեռական ոտնձգության փաստեր, 1960 և 1970 ական թվականների զեկուցված դեպքերի մակարդակը աճել է: Օրինակ 1950 -1970 թվականների զեկուցված ոտնձգությունների քանակը, որոնք վերաբերում են 11-ից 17 տարիքային սահմանին, վեց անգամ աճ է գրանցել: 1970 թվականին հասնելով գագաթակետի, դեպքերի քանակը 1980-ից մինչ 1990 թվականները նվազել է նույն արագությամբ, ինչպես որ աճ է գրանցել 1960-1970 թվականներին:

2002 թվականի գարնանը, Քրիստոնեական Գիտական Ազդարարը, զեկուցեց Քրիստոնեական Նախարարության Աղբյուրների ազգային մեղադրանքների արդյունքները և եզրակցրեց. «Մինչ կենտրոնացնելով խորագրերը Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու քահանաների մանկապղծության խնդրին, Ամերիկյան եկեղեցիների մեծամասնությունը հարվածում է մանկական սեռական ոտնձգության մեղադրանքների բողոքին և մեղադրվողների մեծամասնությունը քահանա կամ անձնակազմ չեն, սակայն, եկեղացական կամավորներ:» (Քլեյթոն, Մարկ, Եկեղեցիների Մեռական ոտնձգությունների Ակնթարթների Սպեկտրում, Քրիստոնեական Գիտական Ազդարար, 2002, էջ.1)

Ջորջ Վեյզլը, Կոլումբիա շրջանի, Վաշինգտոնի Կաթոլիկ Հետազոտությունների էթիկայի և Հանրային Քաղաքականության Կենտրոնի ղեկավարը, նշում է.

«Միայն Միացյալ Նահանգներում, գոյություն ունեն 39 միլիոն մանկական սեռական ոտնձգությունների զոհեր...: Հոֆսթրայի Համալսարանի պրոֆեսոր Քերոլ Շեյքաֆթը զեկուցում է, որ հասարակական դպրոցների ուսանողների 6-10 տոկոսը վերջին տարիների ընթացքում ենթարկվել են անհանգստության, 290,000 մարդ, 1991-ից 2000 թվականների ընթացքում: Ըստ մեկ այլ նոր հետազոտության, սեռական ոտնձգությունների հեղինակների 2 տոկոսը Կաթոլիկ քահանաներ են, երևույթ, որը 1960-ականների և 1980-ականների միջև հասունացավ, սակայն գործնականորեն թվացյալ անհայտացել էր (2009 թվականի Ամն-ի եպիսկոպոսների տարեկան հաշվետվության ընթացքում զեկուցվել է 65,000.000 եկեղեցական անդամների սեռական բռնություն): Սեռական ոտնձգության պատմությունը համաշխարհային լրատվության մեջ ամբողջովին Կաթոլիկ պատմություն է, որտեղ Կաթոլիկ եկեղեցին նկարագրվում է որպես դեռահասների սեռական ոտնձգությունների կենտրոն: (<http://www.firstthings.com/onthesquare/2010/03/scoundrel-times>. Վերանայված 2010-04-20)

Թոմ Հուսթսը, Ազգային Կաթոլիկ Գրանցման գործադիր խմբագիրը, նկատում է. «2002 թվականի առաջին կեսին Կալիֆորնիայի 61-րդ ամենամեծ ամսագիրը նկատեց Կաթոլիկ հաստատությունների սեռական ոտնձգությունների մոտ 2000 պատմություն, որոնք մեծամասնությամբ կապված էին վերջին մեղադրանքների հետ: Մինևույն ժամանակահատվածում, այդ ամսագրերը չորս պատմություն նկատեցին, դաշնային կառավարության շատ ավելի լայն բացահայտում և հանրային դպրոցներում տեղի ունեցող ընթացիկ չարաշահման սկանդալ:» («Արդյո՞ք Տեղեկատվությունը

արհամարհում է դպրոցների սեռական
նոսնձգությունները:» 2006-08-24

[http://www.cbsnews.com/
stories/ 2006/08/24/opinion/main
1933687.shtml](http://www.cbsnews.com/stories/2006/08/24/opinion/main1933687.shtml), վերանայված 2009-08-01) նույնպես
տես.(Այրոնս,Մեգհան 2009-12-28): «ԱՄՆ-ի, Իռլանդիայի
քահանայական ոսնձգությունների դեպքերի կապերի
փնտրտուք :»

[http://www.boston.com/news/local/breaking_news/2009/12/connec
tions_bet.html](http://www.boston.com/news/local/breaking_news/2009/12/connections_bet.html).Վերանայված 2010-01-07: Ամեն
դեպքում,հողվածի հատվածը հատուկ հասցեագրվում է 60-
70 տարեկան քահանաներին, ովքեր ճանաչվել են, որպես
տղամարդ, ովքերԱմերիկա ժամանած իռլանդացիներ կամ
նրանց ժառանգորդներն են:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Պատվելի Ղուրան. Տարբերակների թարգմանություն, Դոկ. Մուհամմեդ Տակի –ուդ-Դին Ալ-Հիլալի և Դոկ. Մուհամմեդ Մուհսին Խան

2. Ալին Ի. Ա. Քաղաքակրթությունների Պատմություն, Ընդհանուր Հրատարակչատուն, Սինսինատի, Օհայո 1889, հատոր 3

3. Հանրագիտարան Ամերիկյան, Միջազգային Հրատարակություն, Ամերիկյան Կոոպորացիա, N.Y 1969, հատոր 29

4. Հանրագիտարան Բիբլիկա Վերանայված Թ.Ք.Չեյնենե և իմբագիրներ Ջ. Ս Բլեք, Մաքսիլան Ընկ. Լոնդոն, Անգլիա, 1902, հատոր 3

5. Բրիտանիկա Հանրագիտարան, 11-րդ հրատարակչություն, Քեմբրիջ Համալսարանի Լրագիր, Անգլիա 1911, հատոր 28

6. Բրիտանիկա Հանրագիտարան, Բրիտանիկա Հանրագիտարան, Կազմ. Չիկագո, III 1968, հատոր 23

7. Պատում. Մեջբերված պատումները թարգմանել է կազմողը: Նրանք մեջ են բերվում արաբերեն տարբեր աղբյուրներից: Նրանցից որոշները, ամեն դեպքում ուղղակիորեն քաղվել են անգլերեն թարգմանություններից, ինչպիսիք են. Սահիհ ալ-Բուխարի, Սահիհ Մուսլիմ, Մունան Աբու Դաուդ, Մունան ատ-Թիրմիզի, Մունան Ան-Նասասաի, Մունան Իբն Մաջահ, որոնք բոլորը տպագրվել և հրատարակվել են Դար սա Մալամ հրատարակչության կողմից:

- 8.Մաք, Դավիթ և Վերա, Ամուսնություն. Արևելք և Արևմուտք, Դոկթին Գրքեր, Դուբլոյայ և Ընկ. Նյու Յորք 1960
9. Թայմս, Նոյեմբեր 18,1993
10. Թաբարանի ալ-Աուսաթ, հատոր 3
11. Մերի Մուրայ, Հոր Օրենքը. Լոնդոն, Ռութլեդջ,1995
12. Ռ.Թոմսոն, Կանայք Ստյուարթական Անգլիայում և Ամերիկայում. Լոնդոն. Ռութլեդջ և Քեզան Պոլ, 1974
- 13.Մենաչեմ Մ. Բրայեր, Հրեա Կինը Ռաբբիական Գրականության մեջ. Հոգեբանահասարակական Տեսանկյուն,Հոբոկեն, Ն. Ջ Քթավ Հրատարակչատուն, 1986
14. Սյուզան Ու. Շնայդեր, Հրեաները և Կանայք, Նյու Յորք. Սայմոն և Շուսթեր, 1984
- 15.Ուրթե Ֆրեվերթ, Կանայք Գերմանական Պատմության մեջ. Բուրժուական Շահագործումից, մինչ Սեռական Ազատություն. Նյու Յորք, Բերգ Հրատարակչություն, 1988
- 16.Ջոն Դ'Էմիլիո և Էսթելլա Բ. Ֆրիման, Ինտիմ Խնդիրներ. Ամերիկայի Սեքսուալության Պատմությունը Նյու Յորք, Հարփեր և Ռոո Հրատարակիչներ, 1988
17. Նաթան Հեյր և Ջուլիա Հեյր, Հր. Սևամորթ Սեռական Քաղաքականության Ճգնաժամ. Սան Ֆրանցիսկո. Սև Մտածելակերպ.1989
18. Ֆիլիպ Լ. Քիլբրիդ, Բազմակի Ամուսնություններ Մեր Ժամանակների համար. Ուեսթփորթ, քոնն. Բերգին և Գարվեյ, 1994
- 19.Ջեֆրի Հ.թոգայ. «Դավաճանություն» Հերական Հանրագիտարան Հատոր II, աղյուսակ 313: Նույնպես տես

Ջուդիթ Փլասկով. Կրկին Կանգնել Սինանի վրա. Հուդդայականությունը Կնոջ Տեսանկյունից՝ Նյու Յորք. Հարփեր և Ռոու Հրատարակչություններ, 1990

20. Լեսլի Հագելթոն. Իսրայելցի Կինը, Իրականությունը Առասպելների ետևում, Նյու Յորք Սիմոն և Շուսթեր, 1977

21. Հուդդայականությունը և Նոր Կանայք, Նյու Յորք, Բեհրեն Հրատարակչություն, 1975

22. Ալլին, Բ, Ա Քաղաքակրթության Պատմություն, Հատոր 3

23. Բրիտանիկա Հանրագիտարան 11 հրատարակչություն, 1911, հատոր 28

24. Ամերիկյան Միջազգային Հանրագիտարան. Հատոր 29, էջ. 108

25. Բրիտանիկա Հանրագիտարան 1968, հատոր 23, էջ. 624

26. Լեոնարդ Ջ. Սուլիդեր, Կինը Հուդդայականության մեջ, Կնոջ Դիրքը Բառակազմական Հուդդայականության մեջ, Մեթուչեն Ն.Ջ. Սքեյրեքրո Պրեսսա, 1976

27. Թենա Քենդաթ, «Ուղղափառ Դեռահասների Հիշողությունները» Սուսաննա Հեչելի հրատարակչության մեջ. Լինելով Հրեա Ֆեմինիստ, Նյու Յորք, Շոքեն Գրքեր, 1983

28. Կնոջ Դիրքը Իսլամում՝ համացանցի տարբեր կայքեր

29. Սուրբ Աստվածաշունչը, Նոր Միջազգային Տարբերակ, 1973, 1978, 1984 թվականներ, Միջազգային Աստվածանյան Հասարակություն

30 Թավմուտ

31. Սան Դիեգո և Ընտանեկան Բռնությունների Ուսումնասիրությունների և Փորձի Հաստատություն
32. Օազիս- «Ծառայության մեջ չարաշահման հակադրությունը, Տեղեկատվություն և Ապաստան»
33. «Կանանց դեմ Բռնություն. Ազգային Հանցագործությունների Հետապնդման Ուսումնասիրությունների Ձեկույց» Արդարադատության Ամերիկյան Բաժին, Վաշինգտոն, Հունվար 1994
34. «Կանանց Միջազգային Ուսումնասիրություն» Հանցագործությունների Ձուկերի Ուսումնասիրության և Վերականգնողական Կենտրոն, Հարավային Կարոլինայի Բժշկական Համալսարան, Չարլսթոն 1992
35. «Ամերիկյան Առողջապահության Հինգ Խնդիրներ» Ամերիկյան Բժկական Կազմակերպություն, Չիկագո 1991
36. Բուլլոք, Լինդա Ֆ. և Ջուդիթ Մաքֆարլեյն, «Ծննդյան Կշիռը, Ծեծի կապը», Ամերիկյան Մանկապարտեզների Ամսագիր, Սեպտեմբեր 1989
37. Մաքֆարլեյն, Ջուդիթ «Չարաշահման Գնահատումը Հղիության Ընթացքում», Ամերիկյան Բժշկական Կազմակերպության Ամսագիր, Հունիս 17, 1992
38. Ֆեդերալ Բյուրոյի Հետազոտությունների Վիճակագրություն, 1992
39. Շիհան, Միրա Ա. «Ընտանեկան Բռնության Միջպետական Ամփոփում, Ո՞րոնք են առավելությունները» Անչափահասների և Ընտանեկան Արդարադատությունն Այսօր, 1993

40.Շերման, Լոուրենս Ու. Ընտանեկան Բռնություն,
Փարձարկումները և Դիվանանները, 1990

41.Ջամալ Բադավի, Կնոջ Դիրքը Իսլամում

Contents



| ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | |
|---|--|
| 1 | ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. ՈՉ- ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ |
| 2 | Որն է Հրեա-Քրիստոնեական վերաբերմունքը կնոջ նկատմամբ |
| 3 | Հրեա-Քրիստոնեական տեսանկյունը դաշտանի մեջ գտնվող կնոջը |
| 4 | Անառակությունը և անբարոյականությունը |
| 5 | Այրիները |
| 6 | Ունեցվածք ունեցող Կինը |
| 7 | Բազմակնություն |
| 8 | Վիճակագրություն |
| 9 | Բազմակնությունը և Հնագույն Սահմանումը |
| 10 | Քողը Հրեա-Քրիստոնեական տեսանկյունից |
| 11 | Կնոջ մասին Հին և Նոր Կտակարանների ամփոփումը |
| 12 | Ինչ են ասում Քրիստոնեության փառաբանված սրբերը կնոջ մասին |
| 13 | Իսլամը ազատում և ազատագրում է մարդկանց |

| | | |
|----|---|--|
| 14 | Ինչ է Իսլամը, Ղուրանը և Ով է Ալլահը | |
| 15 | Մաս Երկրորդ. Կնոջ կարգավիճակը Իսլամում | |
| 16 | Ինչպես պետք է տղամարդը վերաբերի կնոջը | |
| 17 | Իսլամը և կնոջ և տղամարդու փոխհարաբերությունը | |
| 18 | Բազմակնությունը Իսլամում | |
| 19 | Իսլամը և քողը որոշ վիճակագրություններով | |
| 20 | Իսլամը և իր դիրքորոշումը ընդդեմ անատակության | |
| 21 | Ամուսնական խնդիրները Իսլամում | |
| 22 | Իսլամը և կնոջ կրթությունը | |
| 23 | Իսլամը դեմ է նորածին աղջիկների սպանությանը | |
| 24 | Մայրը և ծնողները | |
| 25 | Դաշտանը Իսլամում | |
| 26 | Ամուսնալուծությունը Իսլամում և ինչպես լուծել ամուսնական խնդիրները | |
| 27 | Կանանց դեմ բռնությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում | |
| 28 | Այրին կամ ամուսնալուծվածը | |
| 29 | Ինչ է արել Իսլամը կնոջ համար | |
| 30 | Վիճակագրություն | |
| 31 | Մատենագրություն | |

